Սեփական մարմնի պատկերի և Ես-իդեալի անհամադրության առկայությունը նույնպես հանդիսանում է տվյալ խանգարումների առաջացման համար բերրի հող:

Հետևաբար, միանշանակ կարող ենք փաստել, որ տվյալ աննդային վարքի խանգարումների հիմնադրուրը նախնառաջ այն ընտանիքն է, կամ առաջնային սոցիալական խումբը, որում երեխան դաստիարակվում է:

Այսպիսով, բոլոր վերոհիշյալ դրույթների առկայությունը հանգեցնում է եզրակացության, որ քննարկվող երևույթների հիմքում ընկած են սոցիալաձին երևույթներ, հետևաբար, քննարկվող աննդային վարքաձևի խնդիրները մենք դիտարկում ենք որպես սոցիալ-հոգեբանական ազդեցությունների ներքո ի հայտ եկած դիֆորոշումների հետևանք: Դրանից ելնելով մենք առաջարկեցինք տվյալ խեղաթյուրումների հանդեպ կիրառել սուգեստիվ լեզվական ռազմավարությունները գրավոր տեքստերում, ինչի արդյունքները կարելի է համարել բավական արդյունավետ: Մեթոդը ներառում է սուգեստիվ լեզվական ռազմավարություններ, որոնք կոչված են փոփոխելու խեղաթյուրված բուլիմիկ, կամ անորեքսիկ վարքաձևերի դրսևորումներ առաջացնող դիֆորոշումները: Մեթոդի փորձարկումն իրականացվեց քսան մասնակիցների շրջանում որոնց մոտ թեսթավորումների արդյունքում բացահայտվեց սահմանափակումային զգայագեն և էքստերնալ տիպի աննդային վարքաձևի խեղաթյուրումներ: Վերջինների ցուցանիշները մեթոդի կիրառումից առաջ և հետո արմատապես տարբեր են: Մեթոդի կիրառման արդյունքում փորձարկման մասնակիցների սեփական անձի և մարմնի պատկերի նկատմամբ ինքնագնահատականը, ըստ համապատասխան թեսթավորման արդյունքների, բավական մեծ տարբերություն է ցույց տվել: Փոփոխվել են նաև տագնապայության մակարդակը և դեպրեսիվ վիճակների հակվածությունը: Արդյունքում առաջարկված մեթոդի կիրառումից հետո փորձարկման մասնակիցների աննդային վարքաձևը փոփոխվել է և աննդային վարքաձևի բացահայտման հարցաշարի արդյունքում նրանց ցուցանիշները մոտեցել են առաջարկվող նորմային: Այստեղ խոսքն իհարկե վերաբերում է զուտ խեղաթյուրված

բուլիմիկ, կամ անորեքսիկ աննդային վարքաձևերին, որոնք այնուամենայնիվ, պաշտոնական չափորոշիչներին չհամապատասխանելու արդյունքում, չեն կարող դասվել աննդային վարքաձևի նյարդային խանգարումների շարքին, այլ կարող են դիտարկվել միայն որպես սոցիալ-հոգեբանաձին խնդիրներ: Սակայն, հարկ է նշել, որ նմանօրինակ խնդիրների առկայությունը խոսում է նման խանգարումների հսկվածության մասին: Հետևաբար, տվյալ մեթոդը տվյալ փուլում չկիրառելու դեպքում, հնարավոր է, որ նման աննդային վարքաձևի դրսևորումները վերաճեն պաշտոնական նյարդային անորեքսիայի, կամ բուլիմիայի, որոնք արդեն արմատապես այլ՝ հոգեթերապևտիկ մեթոդների կիրառման կարիք են զգում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. DSM 3,1980, Diagnostic and Statistical manual of mental disorders, third edition, published by the American Psychiatric Association, 1980.
2. Ажгихина Н. // Журналист. М.: 2005, № 4, с. 75.
3. Агеев В.С. “Психологические и социальные функции полоролевых стереотипов”; В кн. Психология семьи. Хрестоматия. Под ред. Д.Я.Райгородского, Изд. Дом “Бахрах-М”, Самара, 2002. с. 291.
4. Вахмистров А. В., Вознесенская Т. Г., Посохов С. И. // Журнал невропатологии и психиатрии им. С. С. Корсакова. 2001, № 12. с.19–24
5. Bruch Н. // The Psychiatric Quarterly, 1961, vol. 35, p. 458-481.
6. Креславский Е.С. “Психосоциальные аспекты ожирения”//Социально-гигиенические аспекты ожирения. // Сб. научн. тр.-Л.: Изд. ЛСГМИ, 1981, с. 24-48.
7. Pliner P., Chaiken S. // Journal of Experimental Social Psychology, 1990, vol. 26, p. 240-254.
8. Клецина И.С. “Гендерная социализация. Учебное пособие”. // СПб.Изд. “РГПУ им. А.И. Герцена”, 1998, с. 19.
9. Меренков А.В. “Социология стереотипов”// Екатеринбург: Изд. “Урал. Ун-та”, 2001, с. 161.
10. Anderluh, M. B., Tchanturia, K., Rabe-Hesketh, S. // American Journal of Psychiatry, 2003, 160, p. 242–247.
11. Коростелева И.С., Вознесенская Т., Г., Рыльцова Г., А. // Социальная и клиническая психиатрия, 1994, N 1, с. 29-36.
12. McNamara K., Loveman C. // Journal of Clinical Psychology, vol. 46 (4), p. 518-523.
13. Selvini-Palazzoli M., Boscolo L., Cecchin G., Prata G. // Family Process, 1977, vol. 16(4) p. 445-454.

14. Davis C., Claridge G., Fox J. // International Journal of Eating Disorders. 2000, vol. 27, № 1, p. 67–73.
15. Fairburn C., Brownell K. (eds). // “Eating disorders and obesity: a comprehensive handbook”. – Guilford press. New York, London, 2003, p. 46-195.
16. Hewitt P., Flett G., Ediger E. // Journal of Abnormal Psychology. 1996, vol. 105, № 2, p. 276–280.

РЕЗЮМЕ

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ДЕТЕРМИНАНТЫ ВОЗНИКНОВЕНИЯ БУЛИМИЧЕСКОГО И АНОРЕКТИЧЕСКОГО ТИПОВ РАССТРОЙСТВ ПИЩЕВОГО ПОВЕДЕНИЯ

А.Л.ШАГИНЯН

Целью работы является анализ социально-психологических детерминантов возникновения булимического и аноректического типов расстройств пищевого поведения. Обсуждаются социально-психологические воздействия, вызывающие данные расстройства или установки, детерминирующие подобное пищевое поведение. В статье также коротко приводятся результаты применения предложенного метода коррекции пищевого поведения посредством изменения социально-детерминирующих установок. Эта цель была достигнута посредством использования суггестивных речевых стратегий в соответствующих тематических метафорически изложенных текстах.

SUMMARY

THE SOCIO-PSYCHOLOGICAL DETERMINANTS OF BULIMIC AND ANOREXIC EATING DISORDERS

H.L.SHAHINYAN

The purpose of the article is the analysis of the socio-psychological determinants of bulimic and anorexic types of eating behavioral disorders. In the article we have discussed the socio-psychological influences and the psychological patterns, which effect the mentioned eating behavioral types. In the article it is also shortly discussed the effectiveness of the suggested method, which has an aim of changing eating behavior itself by changing the socially determined patterns. The following aim was realized by using hypnotic language patterns in metaphorically composed texts.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ №2 (19) 2013 Гуманитарные науки

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
Ն. Ե.. ՄՏԵՓՈՒՆՅԱՆ**

***Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Տազնապայտությունը պատկերավոր կերպով նկարագրել է գեշտալտ թերապիայի հիմնադիր Ֆ.Պերլը. «Տազնապայտության բանաձևը շատ պարզ է՝ տազնապայտությունը ճեղք է ներկայի և ապագայի միջև» [1]:

Նախադպրոցական տարիքի երեխաների հուզական ոլորտի ձևավորման հիմնախնդրում ուշագրավ տեղ է զբաղեցնում տազնապայտության հարցի ուսումնասիրությունը: Խնդրի հանդեպ առավել մեծ ուշադրությունը, պայմանավորված է նրանով, որ նախադպրոցական տարիքում բարձր տազնապայտության շտկումը նպաստում է երեխաների ներդաշնակ զարգացմանը: Հիմնախնդիրը կարևորում ենք նաև նրանով, որ այս տարիքում առաջացած բարձր տազնապայտությունը չշտկելու դեպքում այն ձեռք է բերում որոշակի կայունություն, որն իր դրսևորումներն է գտնում նաև կրտսեր դպրոցականների մոտ՝ դպրոցական բարձր տազնապայտության տեսքով, իսկ դեռահասության շրջանում՝ առավել սուր կերպով է արտահայտվում:

Հողվածի նորույթը կայանում է նրանում, որ վեր է հանվել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ տազնապայտությանը բնորոշ հուզական, վարքային դրսևորումները, ինչպես նաև սորվել է համակարգային մոտեցում (շտկում և՛ վարքային, և՛ հուզական ոլորտներում, և՛ միջանձնային փոխհարբերություններում) ուղղված տազնապայտության մեղմացմանը:

Յու. Լ. Խանինն առանձնացնում է տազնապայտության երկու ձև.

- տազնապայտություն որպես հուզական վիճակ (իրավիճակային տազնապ),

- տագնապայնությունը որպես կայուն գիծ (տագնապի դրսևորումը հաճախակի է և ինտենսիվ) [2] :

Տագնապայնությունը հուզական անհարմարավետության ապրումն է, որը կապված է վտանգի կանխագագացման հետ: Անձի մոտ կառուցվածքային փոփոխությունները չեն կատարվում միանգամից, այլ աստիճանաբար կապված անձի բացասական դիրքորոշումների սմբաստանման հետ: Տագնապն առաջանում է սրդեն իսկ վաղ տարիքից՝ կապված նշանակալից անձին կորցնելու հետ՝ մայր, այլ մեծահասակներ և հասակակիցներ: Անհանգստության զգացումն երեխաների մոտ ձևավորվում է 7 ամսականից մինչև 1 տարեկան 2 ամսականը, որը տագնապայնության առաջացման նախադրյալ կարող է հանդիսանալ: Մոտ 7 տարեկանում Ա.Պրիխոժանը տագնապայնությունը դիտում է անձի կայուն գիծ, որպես որոշակի հուզական տրամադրվածություն, որի մեջ գերակշռում են տագնապայնությունը և վախ կատարելու այս կամ այն արարքը, բոլորի կողմից ընդունված պահանջներին ու նորմերին չհամապատասխանելը[3] :

Տագնապը և տագնապայնությունը կապված են հասարակության կյանքի պատմական ընթացքի հետ, որն իր արտացոլումն է գտնում վախերի բովանդակության, տարիքային ճգնաժամերի ձևով [3]:

Ի.Ռանշբուրգը, Պ.Պոպերն առանձնացնում են «մոբիլիզացնող» և «թուլացնող» տագնապ հասկացությունները: Թե որ տիպի տագնապը կարող է երեխայի մոտ զարգանալ, շատ դեպքերում կախված է մանկության շրջանում իրականացվող դաստիարակության ոճից: Ըստ նրանց, երբ ծնողները մշտապես նշում են, որ երեխան անօգնական է, թույլ, ապա նրա մոտ ձևավորվում է «թուլացնող տագնապը»: Իսկ երբ ծնողներն երեխային սովերեցնում են հասնել հաջողության հաղթահարելով դժվարությունները, նրա մոտ ձևավորվում է «մոբիլիզացնող» տագնապը [4] :

Երեխայի կատարած այս կամ այն արարքի համար ծնողները զայրանում են, երբեմն բնութագրում որպես անկարող, ձախողակ: Այս ամենն անհետևանք չի մնում, մի դեպքում առաջանում է հակադրություն ծնողների նկատմամբ, մյուս դեպքում երեխան ֆրուստրացվում է, պարփակվում իր երևակայական աշխարհում՝ անտեսելով հանդիմանանքը: Նա ընկնում է երևակայության գիրկը՝ փնտրելով իր հետ այդպես վերաբերվելու պատճառը, ու, որպես կանոն, միշտ չէ, որ ելք է գտնում: Մյուս դեպքում, անընդհատ երեխային ուղղված բացասական դիտողությունները նրան բերում են այն գիտակցության, որ միգուցե վատն է, կամ, իրոք, ձախողակ և սկսում հաշտվում է այդ մտքի հետ, որը հետագայում ձևավորում է նրա մոտ կասկածամտություն, անվստահություն իր ուժերի նկատմամբ: Նրա մոտ ձևավորվում են

թերաբժեքության բարդություններ, որոնք ուղեկցում են նրան ողջ կյանքում, հեռու պահում ինքնուրույն որոշումներ կայացնելուց, ձևավորում պասիվ վարքի դրսևորման ձևեր, ներքին անբավարարվածության զգացում [5]:

Նախադպրոցական տարիքի բարձր տազնապայտությանը երեխաները տարբերվում են հասակակիցներից իրենց մկանային լարվածությամբ, թաքնված, խոսքային ագրեսիայի առակայությամբ, որոնք հետևանք են ցածր ինքնագնահատականի: Նրանք զգում են, որ շրջապատը լցված է իրենց հանդեպ թշնամանքով: Տազնապայտին երեխաների դեմքի արտահայտությունը իվիստ է, շարժումները սահմանափակ, նրանք հասարակությանը ներկայանում են որպես շատ ամաչկոտ, համեստ երեխաներ:

Է. Իզարդը մեկնաբանում է վախը որպես յուրահատուկ հույզ, որը կազմում է որպես առանձին խումբ: Նա գտնում է, որ տազնապր կազմված է տարբեր հույզերից, որի առանցքային հույզերից է վախը: Այսպիսով տազնապի մեջ հանգուցային հույզը վախն է, ինչպես նաև տազնապայտության ժամանակ առկա են նաև տխրությունը, ամոթը, մեղքի զգացումները [6]:

Նախադպրոցական տարիքին բնորոշ վախերից է ծնողներին կորցնելու վախը: Տազնապայտին երեխաների մոտ վախի արտահայտման ուժը մեծ է լինում և անհիմն: Մանկապարտեզ հաճախող բարձր տազնապայտության երեխաների ադապտացիան տեղի է ունենում մեծ դժվարությամբ: Յուցաբերում են կաշունություն մոտ նկատմամբ, խմբասենյակում շատ հաճախ նստում են մոտ հետ, հրաժարվում են մանկավարժի կողմից տրված հանձնարարությունները կատարել: Նրանք միջավայրում հաղորդակցվում են ցածր, խուլ ձայնով կամ հրաժարվում են խոսել: Հասակակիցների հետ միջանձնային փոխհարաբերություններում ցուցաբերում են ոչ ադեկվատ վարք: Տազնապայտին երեխաները հակում ունեն ներոտիկ բնույթի վնասակար սովորությունների՝ կրծում են եղունգները, ծծում են մատները, պոկում են մազերը:

Նկարչության միջոցով ևս կարող ենք ճանաչել տազնապայտին երեխային: Նրանց նկարները տարբերվում են պատկերների փոքրությամբ, մուգ գույների ընտրությամբ, ինչպես նաև մատիտի ուժեղ սեղմումներով: «Ընտանիքի նկար» պրոյեկտիվ թեստը կատարելիս երեխաներն ընտանիքի բոլոր անդամներին պատկերում են և շատ հաճախ չեն նկարում իրենց՝ պատճառաբանելով, որ մոռացել են: Այս ամենը խոսում է ցածր ինքնագնահատականի մասին, զգում են իրենց աննշանակալիությունը ընտանիքում, կամ վստահ չեն, որ իրենք սիրված են, հատկապես, ծնողների կողմից:

Կարող ենք նշել, որ բարձր տազնապայնությունը դիտվում է այն երեխաների մոտ, որոնց ընտանիքներում կոնֆլիկտները հաճախակի բնույթ են կրում: Երեխաները համոզված են, որ այդ կոնֆլիկտների առաջացման պատճառը հենց իրենք են, որն էլ հիմք է հանդիսանում տազնապային, պարփակված, անվստահ վարքի ձևավորմանը:

Երեխայի մոտ բարձր տազնապայնության առաջացման հոգեբանական պատճառներն են

- ներընտանեկան կոնֆլիկտներից առաջացած զայրույթը ծնողները հաճախ ուղղում են երեխայի վրա,

- ծնողների և երեխայի միջև սառը փոխհարաբերությունները,

- երեխայի առջև դրված բարձր պահանջները, և վերջիններիս կատարման թերացումը, որն ուղեկցվում է մեղադրանքով և պատժով:

Այս ամենը հիմք է հանդիսանում բարձր տազնապայնության առաջացման համար, որն էլ ձևավորում է երեխայի մոտ «թուլացնող տազնապը», տազնապի դրսևորումը դառնում է հաճախակի և ինտենսիվ և հետագայում դրսևորվում է որպես կայուն գիծ: Անհրաժեշտ է, որ ընտանիքի անդամներն երեխաների մոտ ձևավորեն բարձր ինքնագնահատականը, ինքնավստահությունը, որոնք թույլ կտան նրանց կիրառելու դժվար իրավիճակներում «մոբիլիզացնող տազնապը»:

Երեխաների մոտ տազնապայնությունը կարելի է շտկել խաղային և արտթերապիայի միջոցով:

Ըստ Ե. Լյուտովայի սկզբնական շրջանում շտկումը պետք է ուղղված լինի.

- ինքնագագացողության լավացմանը: Այս փուլն իր մեջ ներառում է խաղերի հավաքածու, որն ուղղված է տազնապայնության մակարդակի իջեցմանը, ինքնավստահության բարձրացմանը:

- երկրորդ փուլը ներառում է իր մեջ խաղեր, որոնց նպատակն է օգնել երեխային գիտակցել սեփական զգացմունքները:

Հեղինակը գտնում է, որ տազնապային երեխայի հետ աշխատանքը ցանկալի է իրականացնել երեք ուղղություններով՝

- բարձր ինքնագնահատականի ձևավորում երեխայի մոտ:

- մկանային լարվածության թոթափում:

- վստահ վարքի հմտությունների մշակում կոնկրետ իրավիճակներում:

Ըստ հեղինակի տազնապային երեխայի ծնողների մոտ տազնապայնությունը բարձր է, դիտվում է ցածր ինքնագնահատական, սառնապում են մկանային լարվածությամբ, դժգոհ են իրենցից և սեփական գործողություններից: Եվ այս ծնողները պետք է զբաղվեն իքնադաստիարակությամբ՝ բարձրացնելով ինքնագնահատականը, ինչպես նաև կատարեն ռեկաբսացիոն վարժություններ: Ռեկաբսացիոն

վարժությունները, որոնք ուղղված են և՛ օրգանիզմի ֆիզիկական լարվածության թուլացմանը, և ծնող-երեխա վատահեղի փոխհարաբերությունների ձևավորմանը, պետք է կատարեն ծնողները երեխաների հետ միասին, և այն կնպաստի ընտանիքում դրական մթնոլորտի ստեղծմանը: Ընտանիքի հոգեբանական դրական մթնոլորտը նպաստում է երեխայի անձի ներդաշնակ զարգացմանը և իջեցնում է նրա մոտ տագնապայնության մակարդակը: Ծնողները պետք է, որքան հնարավոր է շատ շփվեն իրենց երեխաների հետ, կազմակերպեն համատեղ տոներ, այցելություններ թատրոն, իսկ մեծ քաղաքների բնակիչներին ցանկալի է շատ լինել բնության գրկում [7]:

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ բարձր տագնապայնությունը կմեղմանա, եթե

1. Ցանկացած տիպի աշխատանքում բացակայի մրցակցությունը և արագությունը:
2. Չհամեմատեն երեխային մյուսների հետ:
3. Վստահեն երեխային:
4. Հաճախ գովաբանեն երեխային :
5. Երեխային ներկայացնեն տարիքին համապատասխան պահանջներ:
6. Չքննադատեն այլ մարդկանց ներկայությամբ:
7. Օգնեն երեխային գտնելու հոգեհարազատ զբաղմունք, որի միջոցով կկարողնա դրսևորել ինքնավստահ վարք[8]:

Այսպիսով, երեխայի մոտ բարձր տագնապայնության շտկման համար առանցքային նշանակություն ունի ծնող-երեխա փոխհարաբերությունների ճիշտ կազմակերպումը, հատկապես նախադպրոցական տարիքում: Ծնողը պետք է ստեղծի իր և երեխայի միջև անկեղծ, վստահելի փոխհարաբերություններ: Այն թույլ կտա տագնապային վարք ցուցաբերող երեխային արտահայտելու իր համար անընդունելի, տագնապ առաջացնող մտքերը և հասակակիցների, ու մեծահասակների հետ միջանձնային հաղորդակցման ընթացքում ցուցաբերելու աղեկվատ վարք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Перлз Ф. С. Внутри и вне помойного ведра // Перлз и др. Практикум по гештальттерапии.-СПб,1995 ст. 145
2. Ханин Ю. Л. Психология общения в спорте. — М., 1980.ст. 45
3. Прихожан А.М. Психология тревожности: дошкольный и школьный возраст 2-е издание: Питер, 2007 ст.33
4. Раншбург Й., Поппер П. Секреты личности,М.,1983 ст. 116

5. Дорно И.В. Современный брак: проблемы и гармония. М. Педагогика, 1990 ст. 39-43
6. Изард К. Э. Психология эмоций. СПб., 1999.
7. Лютова Е.К., Моника Г.Б. Тренинг эффективного взаимодействия с детьми Речь Санкт –Петербург 2001 ст. 40,45-46
8. <http://brsch34.narod.ru/502.htm>

РЕЗЮМЕ
ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ И ПУТИ ПРЕОДОЛЕНИЯ
ТРЕВОЖНОСТИ У ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА
Н. Е. СТЕПАНЯН

Статья посвящена проблеме тревожности. Рассматриваются психологические проявления и причины высокой тревожности у детей дошкольного возраста и пути ее преодоления. Часто семейные конфликты, холодные взаимоотношения между родителями и детьми являются причиной для появления высокой тревожности у детей.

SUMMARY
THE PSYCHOLOGICAL CAUSES AND WAYS TO OVERCOME THE
PROBLEM OF PRESCHOOL CHILDREN'S ANXIETY
N. E. STEPANYAN

The article is dedicated to the problem of anxiety. In this article considered the psychological performance and the causes of preschool children's high anxiety, as well as the ways to overcome the problem are discussed In this article. Frequently the family conflicts, cold relationship between parents and children are the causes for the high anxiety of children.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ №2 (19) 2013 Гуманитарные науки

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅԱԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
Ս. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

***Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Սոցիալական իրականության գանազան վերակառուցումների պայմաններում նկատվում է մեծ քանակությամբ անձանց մասնագիտական կարգավիճակների վերընթաց և վարընթաց տեղաշարժեր: Ավելի հաճախակի և օրինաչափ է դառնում մասնագիտական կարգավիճակի վարընթաց տեղաշարժը կամ ուղղահայաց վարընթաց շարժությունը: Ընդհանրապես ցանկացած կարգավիճակային տեղաշարժ ուղեկցվում է որոշակի հոգեբանական իրողություններով և կապվում է այնպիսի համապարփակ սոցիալ-հոգեբանական երևույթի հետ, ինչպիսին մարզինալությունն է: Այդ պատճառով նպատակահարմար ենք գտնում անձի մասնագիտական կարգավիճակի տեղաշարժերի հոգեբանական վերլուծությունը դիտարկել մարզինալության հիմնադրույթի տեսական դիրքերից:

Ռոբերտ Փարկը մարզինալությունը բնորոշում էր որպես անձի զբաղեցրած դիրքը երկու մշակույթների մեջտեղում: Հեղինակը առաջին անգամ տալիս է մարզինալ անձի բնութագրերի համախումբը՝ կասկածներ կապված սեփական անձի արժեքի հետ, ընկերների հետ կապերի անորոշություն և նվաստացված լինելու մշտական վախ, հիվանդագին վախ այլ մարդկանց ներկայությամբ, միայնակություն, չսպիսացած երազկոտություն, մտահոգվածություն սպազայով, հաճույք ստանալու անընդունակություն և համոզվածություն այն բանում, որ շրջապատողները իր հետ անարդարացի են վարվում: Մարզինալի գլխավոր առանձնահատկությունը բարոյական երկաստվածության (դիփտոտմիայի) զգացումն է, երբ նախկին սովորությունները մերժված են, իսկ նորերը դեռ ձևավորված չեն: Փարկի առաջ քաշած մարզինալության հիմնադրույթը հիմնվում է հիմնականում մշակութային գործընթացների հասկացման վրա, երբ մարզինալ անձը հասկացվում է իբրև մշակութային հիբրիդ, որը ծնվում է, երբ տարբեր մշակույթի մարդիկ

միավորվում են ընդհանուր կյանք շարունակելու նպատակով: Փարկը կապում է աշխարհում մարզինսպ տիպի մարդուն ոչ թե անձի առանձին տիպի, այլ սոցիալական գործընթացների հետ [1]: Նա մարզինսպության ուսումնասիրության մեջ կենտրոնանում է ոչ թե անձի ուսումնասիրությունը, այլ կարևորում է հասարակության մեջ տեղ գտնող գործընթացները: Սոցիոլոգ Է. Սթոունքվիլթը ևս դիտարկում է մարզինսպությունը որպես երկու մշակույթների բախման արդյունք: Արտաքին բախումը առաջացնում է բախում մարդու ներհոգեկան աշխարհում: Հետազոտողը կարևորում է անձի կողմից բախումնային իրադրության մեջ սեփական տեղը գրավելու ձգտումը: Այդ դեպքում մարդը, ով մասնակիորեն պատկանում է այդ խմբին և մեկ այլ խմբի, հայտնվում է հոգեբանորեն անելանելի իրադրության մեջ. արժեքային համակարգով և աշխարհայացքով նա պատկանում է մեկ խմբի, իսկ ռասսայով, ծագմամբ, արյունակցական կապերով մեկ այլ խմբի (որպես կանոն, գերակայող սպիտակ եվրոպական ռասսայի): Նման մարդու ինքնագիտակցությունը ամբողջական չէ, այլ երկատված է: Սթոունքվիլթը նշում է, որ արյան խառնումը ինքն իրենով չի բերում մարզինսպության, այլ հանգեցնում է որոշակի սոցիալական իրադրության առաջացման, ինչը որոշում է մետոսի դիրքը [2]:

Մարզինսպության հասկացման մեջ մոտեցումներից մեկը այն բնորոշում է որպես հասարակության դիզֆունկցիոնալ գործառնության հետևանք, այս դեպքում մարզինսպության երևույթին կարելի է մոտենալ տարբեր երկրների տնտեսական զարգացման անհամաչափության դիրքերից: Այս տեսանկյունից մարզինսպներ են խորքերից դուրս եկածները, սոցիալապես մեկուսացված խմբերը: Մարզինսպությունը տնտեսական դիրքերից բնորոշվում է «սոցիալական ընդհատակ» և «աղքատություն» հասկացություններով: Պետք է նշել, որ մարզինսպությունը չի կապվում միայն բացառական դրսևորումների հետ, այլ շատ հաճախ նորարարության, օրիգինալության, յուրատիպության հետ, ինչը պայմանավորվում է անձի զբաղեցրած կարգավիճակի յուրատիպությամբ: Մ. Ա. Գլադիշևի համոզմամբ, մարզինսպները պետք է ոչ թե ամաչեն իրենց կարգավիճակից, այլ դրա մեջ տեսնեն իրենց յուրօրինակությունը: Նա հասարակությունը բաժանում է մարզինսպների՝ նորարարների և ամբոխի՝ մնացյալ մարդկանց, ովքեր ապրում են ընդունելով և հետևելով հասարակության նորմերն ու արժեքները [3]:

Մարզինսպության շուրջ մոտեցումների բազմազանությունը կապված է երևույթի բարդ ու բազմաշերտ լինելու հետ: Վերջին փաստի հետ է կապվում դրա ոչ միանշանակ ընկալումը և տարբեր եզրույթներով նկարագրելու հանգամանքը: Լ. Մ. Բաննիկովան մարզինսպությունը հասկանում որպես փոփոխվող պայմաններին հարմարման սոցիալ-

ախտաբանական ձև, ինչը կապված է ժամանակակից Ռուսաստանի հասարակական հիմքերի վերակառուցման հետ և բերում է սոցիալական անումիայի, անհամաձայնության, արժեքային ստանդարտների հակասանության և ինչն էլ համահարաբերակցվում է «մարզինալություն», «մարզինալ անձ» հասկացությունների հետ [4]:

Ա. Բ. Կրավչենկոն մարզինալությունը բնորոշում է որպես.

- անհատի կամ խմբի տեղաշարժման վիճակ (կարգավիճակի փոփոխություն)
- սոցիալական խմբերի բնութագիր, որոնք գտնվում են սոցիալական կառուցվածքում հատուկ մարզինալ (ծայրամասային, սահմանագծային, մեկուսացված) դրության մեջ [5]:

Մարզինալության բազմաբովանդակ ֆենոմենի ուսումնասիրության մեջ առավել արդիական է հասկացության հոգեբանական մեկնաբանությունը, քանի որ այն ուղեկցող հոգեբանական երևույթները՝ դերային, արժեքային բախումներ, նույնության ճգնաժամ, հետևանքները՝ սոքսատություն, գործազրկություն, կյանքի որակի իջեցում, անհետանկարայնություն, ընդհանուր սոցիալ-հոգեբանական չհարմարվածություն, մասնագետի ինքնաիրացման սահմանափակում, հնարավոր է իմաստավորել և մեկնաբանել հոգեբանության դիտակետերից: Ժամանակակից հասարակության պայմաններում անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխությանը ուղեկցող հոգեբանական իրողությունների, արժեքախմաստային ոլորտի վերակառուցումների, սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունների և այլ հանգամանքների ուսումնասիրությունը դարձել է օրափնդիր:

Մարզինալության հոգեբանական մեկնաբանության մեջ կարևոր է Ն. Ռ. Հակոբյանի հայացքները: Մարզինալությունը, ըստ հեղինակի, սոցիալ-հոգեբանական ֆենոմեն է, որը փոխակերպվող, անցումային հասարակության ծնունդ է: Այն համապարփակ երևույթ է և նույնիսկ անձի զարգացումը դրանից դուրս հասկանալը դժվար է: Այսինքն՝ մարզինալությունը շեղում չէ նորմայից, այլ երևույթ, որին անձն իր կենսագործունեության ընթացքում անպայմանորեն բախվում է: Մարզինալության ընդարձակ երևույթի մեջ առանձնացնում են պատճառների երկու համախումբ՝ արտաքին (օբյեկտիվ) հասարակության մեջ ընթացող սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային գործընթացներն են, որոնք այս կամ այն չափով

շոշափում են մարդկանց գոյության հիմքերը, պայմանավորում մարդկանց գործունեության դրդապատճառներն ու պահանջումները և ներքին (սուբյեկտիվ): Հետաբողջատիքական վերափոխվող հասարակություններում, որոնցից է նաև Հայաստանը, մարզինալացմանը նպաստող գործոններից են խորհրդային սոցիալ-քաղաքական համակարգի փլուզումը, տնտեսական ու մշակութային կասեցիի խզումը, զանգվածային գործազրկությունը, հոգևոր-գաղափարական ճգնաժամը, էթնիկական բախումները ու պատերազմները, բռնագաղթը, ներգաղթը և այլն: Ներքին պատճառների մեջ առանձնացնում է անձի կենսաբանական, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, իմացական, բարոյական և հոգեբանական անկայուն վիճակները, սոցիալականացման և հարմարողականության մակարդակը, որոնք պայմանավորված են նրա հոգեկան կառուցվածքի և հոգետիպի՝ խառնվածքի, բնավորության և մտածելակերպի առանձնահատկություններով: Անհատական մակարդակով մարզինալության առաջացման գործոն կարող են լինել արժեքային բախումը, իմացական ու բարոյական աններդաշնակությունները, ֆրոստրացիաները, սոցիալական ու էթնիկական խտրականությունը, սոցիալական կարգավիճակի ու դիրքի կորուստը, ընդհանուր անբավարարվածությունը, անհամատեղելի սոցիալական դերակատարումները, սոցիալական սպասումների չիրականացումը, հոգևոր-գաղափարական ճգնաժամը, կյանքի իմաստի որոնումները, այլընտրանքային, երբեմն անօրինական ճանապարհներով ինքնահաստատվելու ցանկությունը և այլն [6]: Նկարագրված ներքին գործոնների ողջ համախումբը վկայում է, որ երևույթի սպրումը, ընթացքը մեծապես կախված են առանձին անձի հոգեբանական առանձնահատկություններից, նրա անձի տիպից, ուստի վերջին փաստը պետք է հաշվի առնել մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի հոգեկանի վերլուծության դեպքում:

Ն. Ռ. Հակոբյանը առանձնացնում է մարզինալության հետևյալ տեսակները.

- ա) կառուցվածքային (սոցիալական) մարզինալություն
- բ) մշակութային և էթնոմշակութային մարզինալություն
- գ) սոցիալական դերերի մարզինալություն

Առավել կարևորում ենք կառուցվածքային կամ սոցիալական մարզինալությունը, ինչը կապվում է սոցիալական խմբերի (սյդ թվում մասնագիտական) տեղաշարժի հետ և ցայտուն դրսևորվում

է տեղի ունեցող արմատական փոխակերպումների ու ճգնաժամերի ժամանակ, երբ մի հասարակարգից կամ սոցիալականության մի տիպից անցում է կատարվում մյուս տիպին, կամ՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական անհավասարության պայմաններում (երբ անհատները, սոցիալական կամ էթնիկական խմբերը զրկվում են որոշակի իրավունքներից կամ էլ նրանց նկատմամբ կիրառվում է խտրականություն): Սոցիալական մարզինալությունը ենթադրում է ցածր կարգավիճակի առկայություն, փոքրամասնությանը պատկանելություն, անձը հայտնվում է սոցիալական կառուցվածքի ծայրամասում կամ սահմաններից դուրս և նրա կենսակերպն ու արժեհամակարգը տարբերվում են ընդունված նորմերից և արժեքներից: Մարդուն մարզինալ է դարձնում ոչ թե նրա սոցիալական դրությունը, այն է՝ ցածր կարգավիճակը կամ դրա բացակայությունը, այլ հոգեբանական կողմը՝ սեփական կարգավիճակով անբավարարվածությունը, առկա նորմերն ու արժեքները չընդունելը: Անցումային հասարակությունում սպրոդ մարդկանց սոցիալ-հոգեբանական «հիվանդություններից» են դառնում անորոշությունը, անվստահությունը, հոռետեսությունը, ազրեփան, տագնապն ու վախը: Անցումային շրջանում մարդը հայտնվում է պահանջմունքա-դրդապատճառային նոր իրավիճակում [6]:

Փոփոխվող հասարակության պայմաններում մարզինալներին կարող դասել ոչ միայն սոցիալական կառուցվածքից դուրս մնացած անձինք, այլ նաև նրանք, ովքեր դեռևս չեն կողմնորոշվել նոր սոցիալական պայմաններում: Արմատական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան սոցիալական կառույցում ճգնաժամի և տնտեսական բարեփոխումների արդյունքում, պատճառ դարձան նոր մարզինալ խմբերի առաջացման համար: Առաջ եկան նոր մարզինալներ՝ արտադրության կառուցվածքային վերափոխման և զբաղվածության ճգնաժամի արդյունքում: Այս դեպքում մարզինալության ցուցանիշ է դառնում խորը փոփոխությունները սոցիալ-մասնագիտական կարգավիճակում, ինչը ոչ միայն սոցիալական մարզինալության, այլ նաև մասնագիտական կարգավիճակի փոփոխության ցուցանիշ է: Դրա նպաստող արտաքին հանգամանքներն են՝ աշխատանքի ամբողջական կամ մասնակի կորուստ, մասնագիտության, պաշտոնի, աշխատանքի պայմանների և վարձատրության փոփոխություն՝ ձեռնարկության լուծարման, արտադրության կրճատման, կյանքի ընդհանուր

մակարդակի իջեցման արդյունքում: Նոր մարզինալ խմբերի մեջ առանձնացնում են հետևյալ կատեգորիաները՝ «հետմասնագետներ», «նոր գործակալներ» և «ներգաղթողներ»: Ամենամեծ քանակ մարզինալների խումբը «հետմասնագետներն» են (postspecialist): Այս խումբը կազմում են բարձր կրթությամբ անձինք, ովքեր ստացել են կրթություն խորհրդային բուհ-երում, աշխատել են խորհրդային ձեռնարկություններում: Նոր շուկայական պայմաններում նրանց գիտելիքները հնացել են և այլևս պահանջված չեն: Այս խումբը ծնունդ է տնտեսության մեջ խորը կառուցվածքային փոփոխությունների, ինչի արդյունքն է սպասարկավորումը, սպասմանագիտացումը և գործազրկությունը: Խումբը կազմում են աշխատողներ, որոնք կորցրել են աշխատանքը կամ ամբողջությամբ զբաղված չեն, որոնք ունեն կրթության բարձր մակարդակ, աշխատանքային փորձ, բարձր սոցիալ-մասնագիտական կարգավիճակ, մեծ հավակնություններ՝ աշխատանքի հետ կապված: Նրանց մարզինալացված արժեքամակարգը ոչ թե նպաստում, այլ, ընդհակառակը, հիմնականում խանգարում է հոգևոր ներքին ներուժի դրսևորմանը և լիարժեք մասնագիտական ինքնանույնացմանը: Մասնագիտական կարգավիճակի փոփոխությանը ուղեկցելով հոգեբանական վերակառուցումներով՝ ցայտուն դրսևորվում են «հետմասնագետների» խմբում, որոնց մոտ նկատվում է նախկին դիրքի անհամապատասխանություն ներկայիս մասնագիտական կարգավիճակի հետ կամ նոր պայմաններում անձին չի բավարարում, կամ անձը չի ունենում սոցիալական կամ մասնագիտական կարգավիճակ [5]:

Սոցիալ-մասնագիտական տեղաշարժերի հոգեբանական կողմը բնորոշելիս ավելի նպատակարհարմար է «մասնագիտական մարզինալություն» հասկացության կիրառումը: Այն նոր պայմաններում մասնագիտական կարգավիճակի վարընթաց տեղաշարժի ցուցանիշ է: Լ. Բ. Դեմենտին մասնագիտական մարզինալությունը բնորոշում է մասնագիտական նույնականության եզրույթներով: Մասնագիտական նույնականությունը, ըստ հեղինակի, բարդ կազմավորում է, որի մեջ մտնում են իմացական (սեփական խմբի առանձնահատկությունների մասին գիտելիքներ և նրա անդամը լինելու գիտակցումը), արժեքային (սեփական խմբի գնահատումը և նրա նկատմամբ վերաբերմունքի գնահատումը) և հուզական (սեփական խմբի ընդունում կամ մերժում): Իսկ մասնագիտական

մարզինալությունը հեղինակը սահմանում է որպես մասնագիտական նույնականության կորուստ, ինչը բնորոշվում է իրականացվող մասնագիտական դերին չմասնակցվածության (չներգրավվածության) գզացողությամբ, ինքնաժխտմամբ, մասնագիտության անձնային նշանակության կորստով: Հեղինակը ճշմարտացիորեն նշում է, որ մասնագիտական մարզինալության երևույթը կործանարար է հասարակության համար և բերում է մասնագիտական գործունեության աղքատացմանը: Նկատվում է ձևական մասնակցություն մասնագիտական գործունեությանը, մասնագիտական նորմերի և արժեքների չընդունում: Մասնագիտական մարզինալությունը և մասնագիտական նույնականությունը բևեռային երևույթներ են, եթե առաջինը ենթադրում է չներգրավվածություն, ապա երկրորդը ինքնաժխտում [7]:

Այսպիսով՝ անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության հարաբերակցությունը մարզինալության երևույթի հետ երկակի է այն իմաստով, որ սոցիալական կամ կառուցվածքային մարզինալությունը բերում է նոր մարզինալ մասնագիտական խմբերի առաջացմանը, մյուս կողմից մասնագիտական մարզինալությունը դառնում է այդ տեղաշարժերի հետևանք: Նոր մասնագիտական ոլորտում ձևական ներգրավվածությունը, ինքնաժխտմամբ, արժեքային բախումը՝ կապված է նախկին կարգավիճակին բնորոշ արժեքների և դիրքորոշումների և նոր կարգավիճակի հետ կապված արժեքների և դիրքորոշումների անհամատեղելիության հետ: Արդյունքում ձևավորվում է մասնագետ-մարզինալի կամ «հետմասնագետի» նոր կերպարը: Իրադրություն, որը հանգեցնում է անձի ինքնափրացման, հատկապես մասնագիտական աճի սահմանափակմանը և մասնագիտական գործունեության արդյունավետության անկմանը: Ուստի հոգեբանական հետազոտությունը պետք է ուղղված լինի մասնագիտական կարգավիճակի փոփոխության իրադրության մեջ հայտված մասնագետ-մարզինալի հոգեբանական առանձնահատկությունների՝ արժեքային համակարգի, հարմարողականության բացահայտմանը, նոր աշխատանքային պայմաններում, գործունեության օպտիմալացմանն ու անձնային աճին ուղղված հանձնարարականների մշակմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. I Park R.E. Race of culture. Glence, Free press, 1950 Part 26. Marginal man. Chat 26. Human migration and the marginal man // Amerikan Journal of Sociology. - Chicago, 1928, Vol. 33, № 6.
2. Stonequist E.V. The Marginal Man. A Study in personality and culture conflict. - N.Y., 1961, p.51
3. Гладышев С. А Как выжить в толпе и оставаться самим собой Ростов на Дону, «Феникс», 2004, с. 5 -6,
4. http://elib.altstu.ru/elib/books/Files/pa2000_2/pages/19/pap_19.html
5. Кравченко А. И. Социология 2-е изд. М; Академический Проект, 2001, с. 162-163
6. Հակոբյան Ն. Ռ. Մարգինալության դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները փոխակերպվող հասարակություններում, Երևան 2006, էջ 25, 30, 31, 40
7. Л. И. Дементий Проблемы профессиональной идентичности и маргинальности в ситуации сознательной смены профессии, Педагогика и психология , с. 48-49

РЕЗЮМЕ ПРОФЕССИОНАЛЬНАЯ МАРГИНАЛЬНОСТЬ В УСЛОВИЯХ ИЗМЕНЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОГО СТАТУСА *С. А. ВАРДАНЯН*

В статье рассматривается проблема изменения профессионального статуса с позиций концепции маргинальности. Рассмотрено формирование профессиональной маргинальности в условиях социально-профессиональных перемещений.

SUMMARY PROFESSIONAL MARGINALITY IN THE CONDITIONS OF PROFESSIONAL STATUS CHANGES *S. H. VARDANYAN*

The article observes the question of the professional status change from the conteption of marginality. The formation of professional marginality is observed in the conditions of a social professional mobility.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ №2 (19) 2013 Гуманитарные науки

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ ԿԻՂՐՈՍՈՒՄ
Ս.Ա. ՊՈՂՈՍՅԱՆ**

***Խ. Արսիյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

1916 թ. վերջերին Ֆրանսիան հայ կամավորներից կազմավորեց Հայկական լեգեոնը: Այդ զորամասի ստեղծման և Կիպրոսում տեղակայման խնդիրը եղել է բավական երկար քննարկումների առարկա: 1916թ. մայիսի 16-ին ստորագրված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով Առաջին աշխարհամարտում Անտանտի հաղթանակից հետո Ֆրանսիային էին անցնելու Սիրիան, Կիլիկիան և Արևմտյան Հայաստանի հարավային ու արևմտյան նահանգները՝ Խարբեղը, Դիարբեքը, Մեքաստիան [4, էջ 384-385]: Ֆրանսիան, Միջերկրականի արևելքում չունենալով բավարար ռազմական ուժեր, որոշեց ստեղծել հայ կամավորական կորպուս անհրաժեշտության դեպքում այդ տարածքները գրավելու համար: Այդ նախաձեռնությանը նպաստեցին նաև մուսալեոյիները, որոնք ֆրանսիական նավերով 1915 թ. սեպտեմբերին տեղափոխվել էին Եգիպտոսի Պորտ Սայդ նավահանգիստը: Նրանք անընդմեջ դիմում էին ֆրանսիական և բրիտանական իշխանություններին, որպեսզի իրենց զենք տրամադրեն և ուղարկեն հայրենի լեռները՝ թուրքերից վրեժխնդիր լինելու համար: Հայկական զորամաս կազմավորելու քննարկումների ընթացքում կարևորվում էր նաև նրա տեղակայման վայրի ընտրության հարցը:

1916 թ. հուլիսի 4-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանին ուղարկած հեռագրով տեղեկացրեց, որ հայ կամավորների հարցի շուրջ զրուցել է Կահիրեում Արաբական բյուրոյի և բրիտանական գաղտնի ծառայության ղեկավար գեներալ Գիլբերտ Քլեյթոնի հետ: Նրանք եկել էին այն եզրակացությանը, որ շահավետ կլինի Կիպրոսում հայկական զորամաս կազմել, որի ներկայությունն անգամ անհանգստություն կպատճառի թուրքերին: Դեսպանը նշում էր, որ հրահանգիչները պետք է լինեն ֆրանսիացի սպաները, իսկ ծախսերը հոգալու է Ֆրանսիան, քանի որ

համաձայնագրով Հայաստանի մեծ մասը պատերազմից հետո անցնելու էր իրենց [1, էջ 67]:

Ֆրանսիական փոխգնդապետ Էդմոնդ Բրեմոնը, որը մեկնել էր Կահիրե ու Մեքքա, Մերձավոր Արևելքում իր երկրի քաղաքական շահերը ճշտելու նպատակով սեպտեմբերի 9-ին նույնպես առաջարկեց, որ Ֆրանսիան հայ կամավորների համար Կիպրոսում հիմնադրի ուսումնական կենտրոն, որը բաղկացած կլիներ գումարտակի հրամանատարից, երեք սպաներից (որոնցից մեկը՝ հաշվապահ), հինգ ենթասպաններից (որոնցից մեկը՝ հաշվապահ): Հրահանգիչների թվում պետք է լինեին բազմաթիվ ուսուցիչներ, որպեսզի արդյունավետորեն դասավանդեն ֆրանսերեն, <որն անելը դժվարին չէ այս ժողովրդի շրջանում>: Նա նշում էր, որ աշխատանքները պետք է սկսել 200 հայերի հետ, որոնց թիվը արագորեն կկրկնապատկվեր: Գտնում էր, որ հայերից շատերն արդեն իսկ ունեին ռազմական բավարար կրթություն՝ դասակ դեկավարելու համար [5, էջ 332]:

Խոսքը վերաբերում էր մոտ 200 մուսավեոցի երիտասարդներին, որոնք դեռ նախորդ տարվանից մարզվում էին ֆրանսիացի ծովայինների կողմից: Այդ գործը ստանձնել էր ռազմածովային կապիտան, □ժորեգիբերի□ նավի հրամանատար Բենուա դ'Ազին: Նրա տեղակալ էր նշանակվել ֆրանսիական բանակի հայազգի ծովային սպա Շառլ-Տիրան Թեքեյանը [2, էջ 51]: Նրանց նախապես մարզել էին, որպեսզի դիվերսիոն արշավանքների ուղարկեին թուրքական հաղորդակցության ուղիների դեմ: Սակայն հետագայում հրաժարվել էին այդ մտքից:

1916 թ. սեպտեմբերի 9-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Ալեքսանդր Դեֆրանսը Ա. Բրիանին ուղարկած հեռագրում Է. Բրեմոնի նախագծին հավանություն էր տալիս: Է. Բրեմոնի նամակը վճռորոշ նշանակություն ունեցավ, և մեծ մասամբ դրա շնորհիվ էր, որ ռազմական նախարար Պիեր Ռոքը սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել հայկական զորամաս կազմավորելու հարցին [5, էջ 345]:

Հայկական կորպուսի տեղակայման լավագույն վայրը բրիտանական վերահսկողության տակ գտնվող Կիպրոս կղզին էր, որը մոտ էր Կիլիկիային և այնտեղից հեշտ կլիներ ասիանում կատարելը:

Բրիտանացի որոշ գործիչներ Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ դը Լա Պանուսին հասկացրին, որ դեմ են Կիպրոսում հայկական զորամասի տեղակայմանը [5, էջ 330]: Չնայած դրան սեպտեմբերի 13-ին դը Լա Պանուսը ռազմական նախարար Պ. Ռոքին հեռագրեց, որ Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունը համաձայնել է Կիպրոսում հայկական կորպուս կազմավորելու նախագծին և պատրաստ է այդ նպատակով տրամադրել կղզու հյուսիսային կամ արևելյան մասում գտնվող որևէ վայր [5, էջ 337]:

Նույն օրը Պ. Կամբոնին իր հերթին այդ համաձայնության մասին հեռագրեց Ա. Բրիանին: Նաև պարզաբանեց, որ Կիպրոսի բրիտանական գերագույն կոմիսար Ջոն Քլոտոնի առաջարկությամբ է որոշվել տրամադրել կրգու հյուսիսային կամ արևելյան մասը: Չնայած այդ մասում ավելի դժվար կլիներ ապահովել զորամասի մատակարարումը, սակայն այնտեղ մահմեդականները քիչ էին, և դա ավելորդ հուզումների առիթ չէր դառնա [5, էջ 337]:

Սեպտեմբերի 15-ին Ա. Բրիանին ուղարկած նամակում Ա. Դեֆրանսը կարծիք էր հայտնում, որ այդ նախագիծն անհնար կլիներ իրականացնել Եգիպտոսում կամ Կիպրոսում: Դեսպանը կարծում էր, որ բրիտանացիների հետ վեճերից ու բարդություններից խուսափելու համար իրենք պարտավոր են հայերին տեղափոխել Ֆրանսիական վերահսկողության տակ գտնվող որևէ վայր, չնայած դա կապված էր մեծ բարդությունների հետ: Նա վստահ էր, որ այդ դժվարին խնդիրը կարելի է հանձն առնել միայն այն դեպքում, եթե իրենք կամենում են ձևավորել մի բնակչություն, որը նվիրված կլիներ Ֆրանսիայի կողմից Սիրիայի գրավման ու վարչական կազմակերպման գաղափարին: Նա մատնանշում էր այն հակասությունները, որ գոյություն ունեին իրենց և բրիտանացիների միջև [5, էջ 339-341]:

Սեպտեմբերի 23-ին Պ. Ռոքը ռազմածովային նախարար դերծովակալ Լուսիեն Լակազին տեղեկացրեց, որ բրիտանական կառավարությունը համաձայնություն է տվել Կիպրոսի հյուսիսում կամ արևելքում կազմավորել հայկական կորպուս: Միաժամանակ հայտնում էր, որ որոշել է Եգիպտոս ու Կիպրոս ուղարկել հետևակային գումարտակի հրամանատար Լուի Ռոմիոյին, որը տեղում պիտի պարզեր հայկական զորամասի ստեղծման նպատակահարմարությունն ու պայմանները, համաձայնության գար բրիտանացիների հետ, ուսումնասիրեր զինվորագրման ենթակա հայերի թիվը, տեղեկանար Սիրիայում գործող ֆրանսիական ռազմածովային դիվիզիայի հրամանատար դը Սպիտզի տեսակետին: Այնուհետև նա Կիպրոսում հարմար վայր պետք է գտներ զորամասի տեղակայման համար, սպա իր վերջնական առաջարկները ներկայացներ նախարարին: Պ. Ռոքը նաև հետաքրքրվում էր, թե արդյոք Սիրիայի ռազմածովային դիվիզիան ի վիճակի է ռազմական նախարարության միջոցների հաշվին դրամով ու մթերքով ապահովել Կիպրոս մեկնող առաքելությունը և հաջողության դեպքում նաև հայկական կորպուսին [5, էջ 342-343]:

Նույն օրը Պ. Ռոքը գաղտնի հեռագիր ուղարկեց Եգիպտոսի բրիտանական ուժերի հրամանատարությունում Ֆրանսիայի ներկայացուցիչ լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քուենտինին: Նա տեղեկացրեց, որ հաշվի առնելով գեներալ Գ. Քլեյթոնի՝ Պ. Կամբոնին

արած առաջարկը և է. Բրենոնի սեպտեմբերի 9-ի հեռագիրը, որոշել է Կիպրոսում կազմավորել ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող հայկական կորպուս, որին արդեն համաձայնություն է տվել նաև բրիտանական կառավարությունը, և ինքը Լ. Ռոմիոյին գործուղել է Եգիպտոս՝ հայերի հավաքագրման և զորամասը Կիպրոսում տեղակայելու նյութական պայմանները ուսումնասիրելու համար [5, էջ 345]:

Այսպիսով՝ 1916 թ. սեպտեմբերին Ֆրանսիան ձեռք բերեց Մեծ Բրիտանիայի համաձայնությունը Կիպրոսում հայ կամավորներին մարզելու համար: Այդ ընթացքում Եգիպտոսում կային մոտ 400 մուսալեռցի կամավորներ, որոնք մարզվել էին ֆրանսիացի ծովայինների կողմից [1, էջ 68-69]: Նրանք դեռևս 1916 թ. ամռանից պարեկային ծառայություն էին կատարում Կիլիկիայի ամառային շրջանում գտնվող Միջերկրականի կղզիներում [2, էջ 43-48]: Փաստորեն, մուսալեռցիներն արդեն պատրաստ էին լուրջ մարտական գործողությունների: Առաջին զուգարտակը պետք է կազմվեր մուսալեռցիներից ու եգիպտահայերից:

1916 թ. հոկտեմբերի 27-ին ֆրանսիացի և բրիտանացի դիվանագետներ Ժորժ Պիկոն և Մարկ Սայքսը Լոնդոնում համաձայնություն կայացրին Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փառայի հետ՝ Կիպրոսում հայկական կորպուս ստեղծելու վերաբերյալ [6, էջ 393-397]: Պ. Նուբարի հետ քաղաքական համաձայնության զալուց անմիջապես հետո Ֆրանսիան ակտիվորեն ձեռնամուխ եղավ լեզեոնի կազմավորման աշխատանքներին:

Լուի Ռոմիոն բավական կշռադատված ու ակտիվ գործունեություն ծավալեց և կարողացավ ոչ միայն հայերին համախմբել իր շուրջ, այլ նաև բրիտանացիների հետ պայմանավորվածություն ձեռք բերեց համագործակցելու, ինչպես նաև համաձայնության եկավ Կիպրոսում հայկական զորամասի տեղակայման վայրի ու պայմանների վերաբերյալ:

Նոյեմբերի 7-ին Կիպրոսի բրիտանական գերագույն կոմիսար Ջ. Քլոսոնը տեղեկացրեց Սիրիայի ռազմածովային դիվիզիոնի հրամանատար, դերծովակալ դը Սպիտզին, որ Լ. Ռոմիոյի հետ Ֆամագուստայի ծոցից հյուսիս՝ Մոնարկա նավահանգստի մոտ, ընտրել են հայկական կորպուսի տեղակայման վայրը [5, էջ 369]: Այսպիսով՝ հայկական լեզեոնը տեղակայվելու էր Կիպրոսի արևելյան հատվածում՝ Ֆամագուստայից 24 կմ հյուսիս:

1916 թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի հրամանագրով Կիպրոսում կազմավորվելու էր Արևելյան լեզեոնը: Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջոցով ռազմական նախարարության բյուջեից 10.000 ֆրանկի սահմաններում վարկը պետք է տրամադրվեր Արևելյան լեզեոնի հրամանատարին՝ ճամբարի

հիմնադրման համար: Որոշվեց սեղմ ժամկետներում սպայական կազմ և անհրաժեշտ սպառազինությունները ուղարկել Պորտ Սայիդ, որտեղից ֆրանսիական ու բրիտանական նավերով այդ ամենը տեղափոխվելու էր Կիպրոս [1, էջ 42]:

Լեզեոնը անվանակոչվեց <Արևելյան> և ոչ թե <Հայկական>, քանի որ հայ գործիչները փորձում էին թուրքերին առիթ չտալ կոտորելու Թուրքիայում ցեղասպանությունից փրկված մի քանի հայուր հազար հայերին: Միաժամանակ, ֆրանսիացիները հույս ունեին, որ այդ գործամասին կկամավորագրվեին նաև սիրիացիներ ու լիբանանցիներ:

Նոյեմբերի 29-ին Մարսելից Պորտ Սայիդ ուղարկվեց երկու վաշտ կազմավորելու համար անհրաժեշտ հրամանատարական կազմ, զինամթերք, հանդերձանք և այլ անհրաժեշտ պարագաներ [5, էջ 378-379]:

Նոյեմբերի 30-ին “Մարոկկո” նավով Ժերպիանիոնի գլխավորությամբ լեզեոնի առաջին ստորաբաժանումը՝ 54 մուսալեոցիներ մեկնեցին Կիպրոս: Նրանք բժշկական քննություն էին անցել բժիշկ Արշարունու մոտ: Այս խմբում ընդգրկված էին որմնադիրներ, աստղձագործներ, հյուսներ, քանի որ նման արհեստավորներ էին անհրաժեշտ ճամբարի հիմնադրման համար: Նրանց անհրաժեշտ համազգեստների մի մասը՝ կարճ տաբատներ, պաճիճներ, կոշիկներ հատկացվեցին բրիտանական պահեստներից, իսկ կանաչ-շագանակագույն կտորից պատմուճաններ և ամառային գլխարկներ ստացան ֆրանսիական հյուպատոսի նախաձեռնությամբ գործող Զինվորի կտորեղեն ֆրանսիական բարեգործական ընկերության կողմից: Մեկ ամսվա համար անհրաժեշտ սնունդ, գույք և գործիքներ տրամադրեցին Պորտ Սայիդի և Իսմայիլիայի բրիտանական ապրանքային պահեստները [5, էջ 408]:

Դեկտեմբերի 2-ին “Մարոկկո” նավը փոթորկի պատճառով դժվարությամբ մոտեցավ Մոնարկայի կառամատույցին: Կարողացան ափ դուրս բերել միայն անձնակազմին և գույքի մեծ մասը, իսկ մթերային ապրանքները որոշվեց բեռնաթափել Ֆամագուստայի նավահանգստում, որին նավերը կարող էին մոտենալ ցանկացած եղանակի: Հաշվի առնելով նման հանգամանքները Լ. Ռոմիոն որոշեց ապահով ցամաքային կապ հաստատել Ֆամագուստայի և Մոնարկայի միջև: Դեկտեմբերի 5-ին նա Պորտ Սայիդից Կիպրոս ուղարկեց Իսմայելիայի բրիտանական Գլխավոր շտաբից ստացած մոտոցիկլետն ու հեծանիվը [5, էջ 408]:

Յուրաքանչյուր շաբաթ Պորտ Սայիդից մեկ նավ էր մեկնում Մոնարկա: Նավարկությունը տևում էր 30-40 ժամ: Կաստելլորիզոյից Պորտ Սայիդ մեկնող նավը ամիսը 2 անգամ կանգ էր առնում Մոնարկայում: Այդպիսով, լեզեոնականների ճամբարը ամսական 6 անգամ հաղորդակցվում էր Պորտ Սայիդի հետ: Հեռագրական կապը

պահպանվում էր 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Տրիկիումոյի գրասենյակից, որը միացած էր Ֆամագուստայի հեռագրագծին, իսկ նրա միջոցով՝ Պորտ Սայիդին [5, էջ 408-409]:

Մինչև գորանոցների կառուցումը կամավորների առաջին խումբը տեղավորվեց բրիտանացիների տրամադրած 6 կոնաձև վրաններում: Մոնարկայում գտնվող միակ կացարանը այգեպանի տնակն էր, որը Կիպրոսի անտառների վարչությունը տրամադրեց լեզեոնի հրամանատարական կազմին: Առաջին խմբի ղեկավարությունն իրականացնում էր երրորդ կարգի թարգմանիչ սպա Ժերպիանիոնը: Նրա քարտուղարն էր թարգմանիչ զինվոր Վասիլնին, որը նաև մոտոցիկլավարն էր: Ծովակալ Սպիտզը Մոնարկայի նավահանգստի համար տրամադրեց մեկ ավագ նավաստի և երկու ղեկակալ: Առաջին խումբը Կիպրոս ժամանելու պահին իր տրամադրության տակ ուներ միայն 3 հրացան, որը նրանց էր հասկացրել օժյուլ Ֆերրիօ նավը: Դեկտեմբերի 3-ին Լ. Ռոմիոն Պորտ Սայիդից ուղարկեց 600 հրացան, որը ստացել էր օժյուլ Վասիանօ նավի ժամանումից հետո [5, էջ 409]:

Շ. Թեքեյանը հետևյալ կերպ է բնութագրում Լ. Ռոմիոյին. օժյուլ Վասիանօ գզոն, խիստ պերճախոս, իր նվիրական առաքելությամբ խանդավառ, նա, չնայած սկզբնական շրջանի դժվարություններին, կարողացավ Լեզեոնը արհեստավարժ դարձնել [2, էջ 59]:

Լ. Ռոմիոն հիացած էր հայերի կարգապահությունից ու վստահելիությունից: Չնայած միայն Ժերպիանիոնն էր գտնվում մուսալեոցիների առաջին խմբի մոտ, սակայն նա մեծ հեղինակություն էր վայլում և տիրում էր կատարյալ կարգապահություն: Լ. Ռոմիոն համոզված էր, որ իրեն անհրաժեշտ են Ժերպիանիոնի նման ջանասեր ու հաստատակամ սպաներ, իսկ կոպիտ և զրգռված պահվածքով սպաները չէին կարող հաջողության հասնել հայերի մոտ: Հայ զինվորներին ֆրանսերեն սովորեցնելու գործը հանձնարարվեց Վանի նախկին միսիոներ, զինվոր Նասսին, որը օժյուլ Վասիանօ նավով դեկտեմբերի 3-ին ժամանեց Պորտ Սայիդ [5, էջ 409]:

Լ. Ռոմիոն, տեսնելով, որ մուսալեոցիները փայլուն հրաձիգներ են, որոշեց նրանցից կազմել գնդացրորդների ջոկատներ: Գնդապետ Է. Բրենոնը խոստացավ Սուեզից մեկ գնդացիր և ուսուցանող անձնակազմ ուղարկել: Լ. Ռոմիոն դիմեց գեներալ Պ. Ռոքին, որպեսզի Սուեզի գնդացիների մի մասը տրամադրեն լեզեոնին [5, էջ 412]:

Այսպիսով՝ բրիտանական կողմի հետ համաձայնության արդյունքում Արևելյան լեզեոնը տեղակայվեց Կիպրոսում: Լեզեոնի հրամանատար Լուի Ռոմիոն կարողացավ սերտ համագործակցություն հաստատել բրիտանացիների հետ, որի արդյունքում ստացավ անհրաժեշտ աջակցություն: Նրա ճիշտ գործելաճի արդյունքում հայ

կամավորները ձեռք բերեցին ռազմական անհրաժեշտ հմտություններ և զինվորական կարգապահություն: Այդ ամենի արդյունքում, 1916 թ. դեկտեմբերին Կիպրոսում կազմավորվեց լեգեոնի առաջին գումարտակը՝ կազմված 600 մուսավեղներից, 300 եգիպտահայերից, 1917 թ. մարտին միացած 236 հայ ռազմագերիներից, ովքեր Միջագետքից Հնդկաստան էին տարվել, ինչպես նաև՝ Սինայում գերված մի քանի տասնյակ հայեր ռազմագերիներից [3, էջ 191]: Լեգեոնի մարտիկների թիվը հետագայում հասավ 5.000-ի: Այն կարևոր ներդրում ունեցավ Կիլիկիան ազատագրելու, տեղի հայերի վերադարձն ու անվտանգությունը ապահովելու գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գարամանուկեան Ա., Հայկական Լեգեոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Պէյրուի, 1974:
2. Թեքէյան Շ.-Տ., Մուսա լեռան հայերի փրկությունը (Հիշողության էջեր), Երևան, 2002:
3. Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946:
4. Հայաստանը միջագային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:
5. Պէլլէրյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. Ա, Երևան, 2005:
6. Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996.

РЕЗЮМЕ РАЗВЕРТЫВАНИЕ АРМЯНСКОГО ЛЕГИОНА НА КИПРЕ *С.А. ПОГОСЯН*

Во время Первой мировой войны, французские власти обсуждали вопрос о формировании Армянской добровольческой армии. По соглашению Сайкса-Пико (1916 г.) Киликия и часть Армении должны были перейти к Франции. Франция имела ограниченные войска в Востоке и хотела увеличить свое военное присутствие в счет армян. В конце концов, французы и британцы согласились на формирование Армянского легиона на Кипре. Первый батальон армянского легиона был сформирован в конце 1916 года. Первый командир легиона Луи Ромио сыграл важную роль в установлении тесных отношений с британцами и развертывания легиона в Кипре.

SUMMARY
THE DEPLOYMENT OF THE ARMENIAN LEGION IN CYPRUS
S. A. POGHOSYAN

During World War I, the French authorities were discussing the question of formation Armenian voluntary army. By Sykes-Picot agreement (1916) France had to get Cilicia and part of Armenia. France had limited troops in the East and would like to increase its military presence at the expense of the Armenians. Eventually, the French and the British agreed on the formation of the Armenian Legion in Cyprus. The first battalion of the Armenian Legion was formed in late 1916. The first commander of the Legion Louis Romio had an important role in establishing close relations with British and deployment of legion in Cyprus.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ №2 (19) 2013 Гуманитарные науки

**ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵԶԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Խ. Ռ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

***Խ. Արոյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո հայ մտավորականության զգալի մասը, գրեթե ամբողջ քաղաքական ղեկավարությունը հայտնվեցին արտասահմանում և ձեռնամուխ եղան Հայոց ցեղասպանության ու հայրենագրվման հետևանքով ձևավորվող Սփյուռքի առջև ծառայած խնդիրների լուծմանը: Այս խնդիրների շարքում առանձնացվում էին հայապահպանությունն ու ազգային դաստիարակությունը: Սփյուռքում հայ քաղաքական միտքը բազմակողմանիորեն անդրադարձավ ստեղծված կացությանը և փորձեց համապատասխան լուծումներ առաջարկել: Այս տեսակետից առանձնապես արժեքավոր են դաշնակցական մեծամուն գործիչ Գարեգին Նժդեհի մոտեցումները:

Նժդեհը, երկար ժամանակ ուսումնասիրելով իրավիճակը, հետաքրքիր հետևություններ է անում: Ըստ նրա՝ մեծ ցնցումներ ապրած ժողովուրդները տառապում են հոգեկան հետընթացով, որն արտահայտվում է պարտվողական տարբեր դրսևորումներով: Աղետի ենթարկվածը, հոգեպես ուժասպառ լինելով, ամեն ինչ կորած է համարում և հնազանդորեն համակերպվում է իրեն պարտադրված քաղաքական ճակատագրին [1]:

Նժդեհին առանձնապես մտահոգում էր սփյուռքահայ երկտասարդության վիճակը: Օտար բարքերը, միսիոներների քարոզչությունը, հարանվանությունների պատճառով խրախուսվող անհանդուրժողականությունը, կրթական և եկեղեցական հաստատությունների թուլությունը, հայկական միջնակարգ դպրոցների գոյություն չունենալը, հակազգային քարոզչությունը հայ երիտասարդներին հեռացնում էին իրենց ինքնությունից: Այս առթիվ Նժդեհն ասում է. «Նայելով քեզ, հայ երիտասարդութիւն, վարդազոյն

լաւատեալութեամբ չեմ լցում եւ: Երեկ դու աւելի յուսատու էիր քան այսօր: Իսկ մեր վաղը, մեր ապագան կախած է մեր ներկայից» [2]:

Հայ երիտասարդության ազգային դաստիարակությունն անհրաժեշտ էր ոչ միայն հայապահպանության տեսակետից: Նժդեհին անհանգստացնում էր մեր ժողովրդի ճակատագիրը նաև բուն Հայաստանում: Դարավոր թշնամու կողմից Հայաստանի պաշարված դրությունը, ռազմավարական դիրքերի խոցելիությունը առավել քան մտահոգիչ էին նրա համար, ինչի կապակցությամբ գրում է. «Այդ պաշարումը դրուած է այնպիսի հաշիւներու վրայ, որոնք մի ակնյայտնի իմաստ ունին՝ յարմար պարագային նուազագոյն զոհողութիւններով եւ ամենակարճ ժամանակամիջոցում բնաջնջել հայութիւնը» [3]: Հայաստանի տնտեսապես թույլ վիճակը և հասկանալի պատճառներով թշնամի հարևաններին զիջելու հանգամանքը մեզ պետք է ստիպեն հենվել բարոյական առաքինությունների վրա [4]:

Սփյուռքում հայապահպանության ինդրի լուծման ճշմարիտ ճանապարհը սերունդների ազգային դաստիարակությունն է: «Ես ճշմարտություններ գիտեմ, որոնցից մեկն ասում է՝ ուզում ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայիր նրա երիտասարդութեան», - ասում է Նժդեհը [5]: Նրա համար մտահոգիչ էր այն, որ վատ դաստիարակության պատճառով ապագան դժվար է լինելու:

Հայրենապաշտ ու գաղափարապաշտ դաստիարակությունը, ըստ Նժդեհի, ազգերին կարող է տալ այնպիսի հատկանիշներ, որոնց առկայության պայմաններում նրանք չեն մեռնում: Այդպիսի դաստիարակությունը հայությանը զինելու էր ազգային զգացումներով ու զգոն գիտակցությամբ: Հայ մարդն իր անձնական երջանկությունը պետք է փնտրի ընդհանուրի երջանկության մեջ: Ժողովրդի բարոյական կորումն ամրապնդելու, նրան հոգեփոխելու դաստիարակություն էր առաջարկում Նժդեհը [6]: Ի դեպ, նա ազգային դաստիարակությունը պայմանավորում է մարդկային ճիշտ դաստիարակությամբ՝ նշելով, որ լավ հայրենասեր, լավ հայ լինելու համար նախ պետք է լավ մարդ լինել [7]:

Իսկ ազգային դաստիարակությունը պետք է հոչակել դավանանք, կրոն, վարդապետություն, որովհետև դա է մեր միակ ելքը: «Հայրենապաշտական դաստիարակութիւն - անհա մեր փրկութեան խարիսխը»- գրում է Նժդեհը [8]:

Սերունդների դաստիարակության և հայապահպանության գործում Նժդեհը առանձնացնում է երեք կարևոր հաստատություն՝ եկեղեցին, դպրոցը և մամուլը: «Այս երեքն է, որ պետք է կարողանան հայ մանուկին, հայ խաչը եւ գիրը զերծ պահել պրծանքից», - նկատում է նա [9]:

Նժդեհը հատուկ կարևորում է մամուլի դերը: Նա քննադատաբար է մոտենում մամուլի այն միջոցներին, որոնք բոլորովին այլ ուղղությամբ

են աշխատում: «Թերթեր ունենք, որոնք աւելի օգտակար պիտ լինէին հայ ժողովրդին, եթէ բնաւ լոյս չտեսնէին»- գրում է նա [10]: Առանձնապէս կարևորում է հերոսների կյանքի փառաբանումը մամուլի էջերում. «Թող հաճախ նրանք բնութագրեն հայ ժողովրդի ընտիր որդիներին, որոնք իրենց կեանքով թէ մահով մի բան աւելացրել են ազգ կոչւելու մեր իրաւունքին» [11]:

Նժդեհի համոզմամբ մամուլի դերը պետք է լինի ոչ թէ լրատվության ապահովումը, կամ ոչ միայն լրատվության ապահովումը, այլ՝ վերադաստիարակիչ հրապարակախոսութիւնը, որ կարողանա «անսխալ կերպով ախտանշէ մեր ցեղին հոգերը եւ արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկէ մեր անցեալը եւ նոր ճշմարտութիւններ որոնէ, որ լուսաբանէ մեր ժողովրդի կնճիռները, որ կռահի իր ժողովուրդին սպառնացող վտանգը եւ դառնայ նրա հոգեւոր սպառագիւնումի ահագանգը»[12]:

Ազգային դաստիարակչութիւնն առավել արդյունավետ իրականացնելու համար Նժդեհն առաջարկում է այդ գործընթացը սկսել սեփական անցյալի վերագնահատումից, առանց որի դժվար է լինելու նորի և ճշմարիտի որոնումը: Նա հանգում է մի կարևոր եզրակացության. քաղաքական կույր պատեհապաշտութիւնից զերծ մնալու համար անհաջողութիւնների պատճառը մեր մեջ պետք է փնտրել:

Նժդեհը սերունդների հայրենասպաշտ դաստիարակչության գործում մեծապէս կարևորում է մտավորականութեան դերը: Հայ ժողովրդի քաղաքական պարտութիւնների պատճառ է հանդիսացել նաև ներքին միասնականութեան պակասը: Նժդեհի այս մտահոգութիւնը օպահանջում է մեր մտաւորականութիւնից մեծագոյն զոհողութիւն՝ յանուն եւ ի զոհ մեր անկախութեան Մայիսի՝ մորթել իր ետը [13]: Ակնկալիքները մեծ են նաև սպագայի մտավորականութիւնից՝ ուսանողութիւնից: Հայ ուսանողութիւնը պետք է գիտակցի, որ օտար մշակութիւն ազգային առանձնահատկութիւնների զոհաբերում որևէ արդարացում չունի: Այս կապակցութեամբ Նժդեհը գրում է. «Նա (հայ ուսանողութիւնը –Խ. Ս.) հրամայողաբար պիտի դառնայ գիտութեան եւ ցեղային պարտականութեան մարդ: Եւ որպէս այդպիսին, առաջին հերթին նա պետք է հայացնի օտար համալսարաններու, ձեռք բերած իր գիտական պաշարը...» [14]:

Սերունդների հայրենասիրական դաստիարակչության մասին խոսելիս, Նժդեհը նաև արժևորում է «հայրենասիրութիւն» երևույթը: «Հայրենիքներն սալրում են հայրենասիրութեամբ, ընկնում նրա պակասի պատճառով», - գրում է նա [15]: Տգիտութիւնը, էգոիզմը և աշխարհաքաղաքացիութիւնը, որոնց Նժդեհը մեկ արտահայտութեամբ

անվանում է վտանգավոր մոլորություններ, թշնամի են հայրենասիրությանը:

Անդրադառնալով հայի հայրենասիրության կարևորությանը, հայրենասեր սերնդի դերին՝ նա գրում է, որ վաղվա Հայաստանի սահմանները «այիտ գծեն հայ զինուորի արիությանն ու հայրենասիրութիւնը» [16]: Հայրենասիրությունը հայ երիտասարդի համար պետք է լինի աստվածություն, կրոն, սրբազան զգացում: Եվ միայն այս ճանապարհով է հնարավոր հայ ժողովրդին զերծ պահել հետագա վտանգներից:

Նժդեհը սերունդների ազգային դաստիարակությունը, ինչպես նաև հայապահպանության խնդիրը մեծապես կապում է անկախության գաղափարը օրակարգի վրա պահելու հետ: Անկախությունը նա համարում է ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայերի գերագույն նպատակը [17]: Առանց անկախ հայրենիքի մեր ժողովուրդը դասապարտված է վերջնական պարտության: Անկախ հայրենիքը իրավունք լինելուց զատ նաև պարտականություն է: Ազգերի անխափան զարգացումը տեղի է ունենում միայն բացարձակ անկախության պարագայում, առանց որի, Նժդեհի բնորոշմամբ, «ժողովուրդները կորցնում են իրենց բարոյական գոյութեան իրաւունքը» [18]: Միաժամանակ անկախությունը համամարդկային արժեք է, և անկախ հայրենիքի գաղափարի դավանումը ենթադրում է պաշտպանել քաղաքակրթական արժեքներից մեկը:

Անկախության ձգտելու գործում Նժդեհն առանձնակի ուշադրություն է դարձնում մեր ժողովրդի դատը փորձի ընկալմանը: Պետք չէ ինքնախաբեությամբ տարվել և տուրք տալ քաղաքական մուրացկանությանը: «Մուրացկանութիւն եւ լալկանութիւն – մի ամբողջ ժամանակի հոգեբանութիւն, քաղաքական մեր միակ զենքը: Լալկանութիւնը, սակայն, ապացոյց է հոգեւոր տհասութեան կամ անարիութեան: Մուրացկանութիւնը զգուելի է ընդհանրապէս: Մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդւած, այլ եւ յաճախ զգւանքից», - ասում է Նժդեհը [19]: Մեր պարտության պատճառն այն էր, որ սեփական ոգուն ապավինելու փոխարեն հովանավորներ փնտրեցինք:

Անկախության գաղափարը մերժողներին առավել տպավորիչ բնութագրելու համար Նժդեհը աստվածաշնչյան հայտնի պատմությունն է հիշեցնում, ըստ որի հրեական ամբոխը Պիղատոսից պահանջում է իսպին հանել Հիսուսին: «Նոյն տխուր տեսարանը եւ այսօր մեզանում: Նոյն ամբոխը, դատաւորը՝ նոյն: Տարբեր է միայն զոհը գերագոյն: Այսօրանը Յիսուսը չէ, այլ՝ մեր Անկախութեան Գաղափարը: Նոյն սատուածասպան ամբոխն է, մեր ցեղի վատասերւած տականքը, որ օտարի միջոցով իսպել է տալիս այն ամենը, ինչ որ ազգային է: Նա

կատարում է յանձնումը մեր Ազատության ու Պատմության եւ շնականօրէն յայտարարում. – Մենք այլ թագաւոր ճունենք Կեսարից զաս»,– գրում է Նժդեհը [20]: Ընդհակառակը, երիտասարդոյանը պետք է ներշնչել, որ ինքնուրույնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող երկար գոյատևել: Անհրաժեշտ է ունենալ սեփական պետություն, որը օնախատեսում է ինքնուրոյն քաղաքական միտք, պայքարելու ինքնավստահութիւն, կառավարելու նախաձեռնութիւն» [21]: Հետևաբար Նժդեհը գտնում է, որ նախ երիտասարդոյանը պետք է հոգեվիճակ կեղծիքի գերությունից, որ չընթանա հայրերի դատապարտելի ընթացքով: Պետք է պայքարել ու ապրել Հայրենիքի ու Անկախության համար [22]:

Հետաքրքիր է նաև այն, որ Նժդեհը կոչ է անում սերունդներին դատախարակել ոչ թե «ընդդէմ»-ի, այլ՝ «հանուն»-ի սկզբունքով: Խնդիրը պետք է լինի ոչ թե Հայաստանի ապախորհրդայնացումը, այլ «իրականացումը Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարի» [23]:

Գարեգին Նժդեհը ազգային դատախարակության և հայապահպանության հարցերում առանձնացնում է հայ կնոջ դերը: «Հայ կնոջ միջոցաւ դարձի եւ զգաստութեան հրաւիրենք գաղութահայութեան ազգայնօրէն տկարացած տարրերը: Նրա պաշտպանութեան ու գուրգուրանքին յանձնենք մեր մայրենի լեզուն, եռագոյնը, անկախութեան Մայիսը – սրբութիւնները մեր ցեղի»,– գրում է նա [24]:

Սփյուռքում հայ կնոջ դերը վճռական է հատկապէս այն առումով, որ հայ մանուկները, ազգային դպրոց չհաճախելով, ազգային դատախարակություն ստանում են միայն ընտանիքում, իսկ ընտանիքում դրանով առավելաբար զբաղվում է մայրը: Ազգայնական կիներ ընտանիքը պետք է դպրոցի վերածի: «Չկայ ազգային ապագայի կառուցում՝ առանց մոր, առանց՝ նաեւ ցեղայնացած կնոջ»,– պնդում է Նժդեհը [25]:

Սերունդների ազգային դատախարակության գործում Նժդեհը կարևորում է նաև հայ ժողովրդի զոհված հերոսների՝ իր իսկ բառերով՝ «մեծ մեռելների» պաշտամունքը, ազգային տոների նշումը:

Գարեգին Նժդեհը ազգային դատախարակության և հայապահպանության դժվարին խնդրի լուծումը բարեհաջող իրականացնելու համար կոչ է անում գործադրել իր իսկ առաջադրած ցեղակրոնության գաղափարախոսությունը: Ամերիկայում ապրած տարիներին, մտահոգվելով սերունդների ճակատագրով, Նժդեհը ստեղծում է ցեղակրոն շարժումը: «Ես հայրենասեր-գաղափարապաշտի խորին մտահոգութեամբ ձեռնարկեցի մեր երիտասարդ սերնդի կազմակերպման գործը՝ նրան համարելով ամենակարող վերակերտիչ գործունը»,– ստում է նա [26]:

Ցեղակրոնությունը ցեղի փառահեղ անցյալի պաշտամունքն է, միաժամանակ հավատը՝ մեծ ապագայի հանդէպ: Այն հանուն ցեղի

ինքնագոհողության գնալու պատրաստակամություն է: Յեղակրոնության իր քարոզչությունը Նժդեհն այսպես է հիմնավորում: «Ես ցեղակրոնություն եմ քարոզում: Յեղակրոնություն, որով անհայրենիք հայությունը հոգեւոր զրահ կը հագնի օտար միջավայրերի այլասերիչ ազդեցություններին յաջորդաբար դեմ դնելու համար: Իր ժողովրդի քաղաքական ճակատագրով զբաղուելու գերագոյն պարտականություն ունի ցեղակրոնը, եւ անհա ես կը պայքարիմ մի մեծ ճակատագրի համար, որին այնքան արժանի է իմ ցեղը» [27]:

Այսպիսով՝ մտահոգված լինելով Սփյուռքում հայապահպանության և ազգային դաստիարակության խնդիրներով, հայրենասնվեր մեծանուն գործիչ Գարեգին Նժդեհը հանդես եկավ աննսխառեպ հրապարակախոսությամբ: Նրա աշխատություններում և հոդվածներում կարևորվում է սփյուռքահայ երիտասարդությանը ձուլումից փրկելու հրամայականը: Նժդեհի քարոզչության առանցքը կազմում էին անկախ պետականության գաղափարը, ազգային ինքնասիրության և հպարտության զգացումը, վեհին, ազնիվին հասնելու մղումը: Ժամանակի ընթացքում նա զարգացրեց սերունդների ազգային դաստիարակության իր հայեցակարգը, որի գագաթնակետը հանդիսացավ ցեղակրոնության գաղափարախոսությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նժդեհ Գ., Ինչո՞ւ ստեղծվեց ցեղակրոն շարժումը, Երկեր, հ. 2, Երևան, ՀՀ Արխիվային գործի գործակալություն, 2002, 504 էջ, էջ 441:
2. Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրեն, Գահիրե, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ, էջ 3:
3. Նժդեհ Գ., Բաց նամակներ հայ մտավորականության, Պէյրութ, «Հրագրան», 1929, 32 էջ, էջ 4:
4. Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրեն, Գահիրե, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ, էջ 15:
5. Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրեն, Գահիրե, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ, էջ 3:
6. Նժդեհ Գ., Բաց նամակներ հայ մտավորականության, Պէյրութ, «Հրագրան», 1929, 32 էջ, էջ 31:
7. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դեմ, «Գողթան» գրատուն, Սոֆիա, 1927, 102 էջ, էջ 27:
8. Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրեն, Գահիրե, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ, էջ 62:

9. Նժդեհ Գ., Երբ հայրենասիրութիւնը ցեղասիրութիւն չէ, «Ռազմիկ» 1941, թիւ 12:
10. Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրէն, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ, էջ 26:
11. Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրէն, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ, էջ 26:
12. Նժդեհ Գ., Բաց նամակներ հայ մտավորականութեան, Պէյրութ, «Հրազդան», 1929, 32 էջ, էջ 25:
13. Նժդեհ Գ., Յեղի ոգու շարժը, Սոֆիա, Տպագր. Պ.Պալըզճեան, 1932, 59 էջ, էջ 29:
14. Նժդեհ Գ., Ամերիկահայութիւնը - ցեղը եւ իր տականքը, Սոֆիա, 1935, 116 էջ, էջ 106:
15. Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրէն, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ, էջ 18:
16. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դէմ, «Գողթան» գրատուն, Սոֆիա, 1927, էջ 57:
17. Նժդեհ Գ., Էջեր իմ օրագրէն, Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1924, 66 էջ, էջ 58:
18. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դէմ, «Գողթան» գրատուն, Սոֆիա, 1927, էջ 62:
19. Նժդեհ Գ., Բաց նամակներ հայ մտավորականութեան, Պէյրութ, «Հրազդան», 1929, 32 էջ, էջ 12:
20. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դէմ, «Գողթան» գրատուն, Սոֆիա, 1927, էջ 70:
21. Նժդեհ Գ., Բաց նամակներ հայ մտավորականութեան, Պէյրութ, «Հրազդան», 1929, 32 էջ, էջ 14:
22. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դէմ, «Գողթան» գրատուն, Սոֆիա, 1927, էջ 8:
23. Նժդեհ Գ., Ամերիկահայութիւնը - ցեղը եւ իր տականքը, Սոֆիա, 1935, 116 էջ, էջ 69:
24. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դէմ, «Գողթան» գրատուն, Սոֆիա, 1927, էջ 75:
25. Նժդեհ Գ., Ամերիկահայութիւնը - ցեղը եւ իր տականքը, Սոֆիա, 1935, 116 էջ, էջ 98:
26. Նժդեհ Գ., Ինչո՞ւ ստեղծվեց ցեղակրոն շարժումը, Երկեր, հ. 2, էջ 442:
27. Նժդեհ Գ., Յեղային արթունութիւն, «Հայրենիք» օրաթերթ, Բուստուն, 1933, թիւ 6568:

РЕЗЮМЕ
ПРОБЛЕМА НАЦИОНАЛЬНОГО ВОСПИТАНИЯ И
СОХРАНЕНИЯ САМОБЫТНОСТИ В ТРУДАХ ГАРЕГИНА НЖДЕ
Х. Р. СТЕПАНЯН

Будучи озабоченным проблемами сохранения армянства и национального воспитания, преданный родине именитый деятель Гарегин Нжде в 1920-30-ые гг. выступал с беспрецедентными публицистическими работами. В его работах и статьях подчеркивается необходимость спасения молодежи армянской диаспоры от ассимиляции. Осью пропаганды Нжде были идея независимой государственности, национальное самолюбие и чувство гордости, стремление к возвышенному, честному. Со временем он разработал свою концепцию национального воспитания поколений, кульминацией которой стала идеология “цегакронства”.

SUMMARY
ISSUES OF ARMENIAN IDENTITY AND NATIONAL
EDUCATION IN GAREGIN NZHDEH'S WORKS
KH. R. STEPANYAN

Being concerned by the issued of Armenian identity national education in the Armenian Diaspora Garegin Nzhdeh, Armenian eminent figure, in 1920-30s acted whit unprecedented oration. The peremptory of saving the Armenian young people in diaspora from allegation is amphasised. Nzhdeh's preachment axes were the idea of independent state, sens of national pride, propulsion to nobility and honesty. During time he developed his concept of national education for generations the high pick of which was the ideology of “Tseghakrounutyun”.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ №2 (19) 2013 Гуманитарные науки

ՀԱԿՈՒ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ս. ՎԻՐԱԲՅԱՆ

***Խ. Արոյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

XVII դ. 60-80-ական թթ. ազատագրական շարժման գործիչների գործունեության մեկտեղման անհնարինությունը շատ բանով կանխորոշեց հայ ազատագրական շարժումների բնույթը:

Այս ժամանակաշրջանում հայ ազատագրական շարժման բոլոր դրսևորումները կապված են Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու անվան հետ, ով իր կյանքի գրեթե կեսն անմնացորդ նվիրեց հայ ազատագրական շարժմանը: Պահպանվել է մի հետաքրքիր նամակ, ըստ որի՝ Հակոբ Ջուղայեցին քաղաքական ծրագրեր է ունեցել դեռևս XVII դարի 60-ական թթ.: Այն գրված է Կաթողիկոսի հակառակորդներից մեկի ձեռքով. «Ահա չԱկոբ կաթողիկոսն զիւր եղբօր որդի Մանուէլն սուրբ Սարգսի Պահոցն յղեսց սո Փսփն Ֆռանկաց, բագում նշխարք սոնելով ընդ իւր՝ զՀռիփսիմեանցն, զԳայիանեանցն եւ զՆախավկային, եւ այլ բագում նշխարք ընծայ Փսփին, զի եւ նա գանձս տացէ նմա, եւ սա նաւեալ գնասցէ ի Վրաց տուն, եւ զՄանրվէլն օծեսցէ թագաւոր Հայոց» [12, էջ 13]: Հակոբ կաթողիկոսի այդ մտադրությունը հաստատվում է նաև Մ.Թերզյանի աշխատությունում. «Հայ կաթոլիկ երիտասարդները տարւում էին Պարիզ ուրիշ ազգերի (մայնի, հոյն) երիտասարդների հետ, կրթում էին այնտեղ եւ իսկոյն հայրենիք վերադարձնում, որպէսզի այնտեղ տարածեն ուժի դէպի Ֆրանսիան: Այս բոլոր երեւոյթները նոր տրամադրութիւններ էին ստեղծում ազատութեան եւ վերանորոգութեան կարոտող հայերի մեջ: Պետք չէ անտեսել նաեւ այն իրողութիւնը թէ վերոյիշեալ Ֆրանսիայի գործակալներու ժամանումէն յետոյ, Յակոբ կաթողիկոս 1666 ին, Ս. Սարգսի պահքի ժամանակ, Սրբգ. Քահանայապետին մօտ կը դրկ է իր եղբօրորդին, Մանուէլը, Ս.Հռիփսիմեանց եւ Գաիանեանց նշխարներով» [6, էջ 176]: Դժվար է մինչև վերջ վստահել վերոհիշյալ աղբյուրին, քանի որ նամակի հեղինակը Հակոբ Ջուղայեցուն մեղադրում է անգամ Էջմիածնի հարստությունները վատնելու մեջ, ինչը բացահայտ ամբաստանություն է: Հակոբ

կաթողիկոսը եռանդուն գործունեություն է ծավալել Էջմիածնի վիճակը բարելավելու համար: Նա օժտված էր կազմակերպչական բացառիկ ունակություններով և մեծ նպաստ է բերել ազգային կարևոր նշանակություն ունեցող մի շարք ձեռնարկումների:

Հակոբ Ջուղայեցու՝ արևմտաեվրոպական երկրների հետ ունեցած հարաբերությունների նոր շրջանը կապվում է կաթողիկ միսիոներներ Ֆրանցիսկոս Պիսկոպի և հայազգի Պետրոս Պետիկի [9, էջ 188-189] անվան հետ: Այս երկու գործիչների պատմական ասպարեզ մտնելը մեծապես պայմանավորված է քաղաքական այն ծայրահեղ լարված իրադրությամբ, որում XVII դ. երկրորդ կեսին հայտնվել էր Եվրոպան:

Թուրքիայի դեմ պայքարում Վենետիկի Հանրապետության կրած պարտությունից հետո 1670-ական թթ.-ից Հաբսբուրգները սկսեցին զլխավորել հակաթուրքական զինակցությունը, որի մեջ մտնում էին Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը, հետո նաև Ռուսաստանը: Եվ ահա հայ գործիչներն իրենց հույսերը կապեցին Հաբսբուրգների հետ [9, էջ 187]:

Այս անգամ ևս ծրագրերի հաջող ելքը տեսնելու մտայնությամբ եվրոպական դիվանագիտությունն իր հայացքն ուղղում է դեպի Թուրքիայի թիկունքը՝ դեպի շահական Իրան: Որոշվում է Իրանի հետ բանակցությունները վստահել այնպիսի մի մարդու, ով քաջատեյակ էր թե՛ Իրանի, թե՛ Եվրոպայի ներքին կացությանն ու պահանջներին: Ժամանակակիցների համոզմամբ՝ լավագույն թեկնածուն դոմինիկյան կրոնավոր Ֆրանցիսկոս Պիսկոպն էր: Սակայն Արևելքում միայն հակաթուրքական դաշինք ստեղծելու ծրագրերը չէին, որ զբաղեցնում էին այս միսիոներներին և նրանց մյուս գործընկերներին: Նրանք երկար տարիներ հետամուտ էին հայերի մեջ կաթողիկ քարոզչություն ծավալելու գործին: XVII դ. երկրորդ կեսը հայ եկեղեցու պատմության այն շրջաններից է, երբ կաթողիկ միսիոներների գործունեությունը Հայաստանում շատ մեծ չափերի էր հասել՝ ունենալով խիստ իրատեսական հեռանկարներ: Հենց այս իրողության հետ է կապված նաև հայ եկեղեցու պատմության ուսումնասիրողների շրջանում մեծ հետաքրքրությունը և, միևնույն ժամանակ, սուր բանավեճերի առիթ առաջացրած Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու դավանաբանական «դարձի» խնդիրը: Վերջին փաստն ավելի է պարզաբանվում, երբ այն դիտարկվում է իր ժամանակի քաղաքական տրամադրությունների և առաջադրած պահանջների համատեքստում: Դժվար է պատկերացնել, որ մի ամբողջ ժողովրդի հոգևոր առաջնորդը, առանց լուրջ պատճառների և ակնկալիքների պատրաստ էր Հռոմի քահանայապետին նվիրաբերել իր եկեղեցու դարավոր անկախությունը: Ահա Ֆրանցիսկոս Պիսկոպի և Պետրոս Պետիկի գործունեության ուսումնասիրությունն է, որ

հնարավորություն է տալիս ավելի լավ պատկերացնել ժամանակի դեպքերը:

Դոմինիկյան կրոնավոր Ֆրանցիսկոս Պիսկոպը դեռ 1673 թ. Հռոմից ժամանել էր Իրան՝ կարգվելով որպես Նախիջևանի գավառի հայ-կաթոլիկ համայնքների և եպիսկոպոսարանի վերահսկիչ և պապական աթոռի «ընդհանրական վիքար» [9, էջ 187]: Նախիջևանում դեգերելուց հետո Պիսկոպը մեկնում է Երևան և հանդիպներ է ունենում Հակոբ Ջուղայեցու հետ: 1675 թ. սեպտեմբերին Ֆրանցիսկոս Պիսկոպը Հաբսբուրգների և Սեֆյանների հակաօսմանյան բարեկամությունը գլուխ բերելու մեծ ցանկությամբ ստանձնում է Պասլին և գերմանական կայսերն ուղղված շահի հավաստիացումները տեղ հասցնելու պարտավորությունը: 1676 թ. Պիսկոպը և Պետիկը Ռուսաստանի վրայով մեկնում են Արևմուտք, 1677 թ. լինում են արդեն Վիեննայում: Պահպանված վկայություններից իմացվում է, որ Պիսկոպն ու Պետիկը Լեոպոլդ I կայսեր հետ բանակցությունների ժամանակ կարևորել են Թուրքիայի դեմ ոչ միայն Իրանի, այլև Արևելքի մյուս ժողովուրդների, մասնավորապես հայերի ներուժն օգտագործելու հանգամանքը: Իրանական կողմի դիրքորոշումը Լեոպոլդ I հանձնելուց զատ՝ պատվիրակները նրան են հանձնում նաև Հակոբ Ջուղայեցու ուղարկած թուղթը, որն արտահայտում էր Կաթողիկոսի ազատագրական բաղձանքները: Հայերի ազատագրմանը վերաբերող մնացած մանրամասները քննարկելու գործը Կաթողիկոսը վստահել էր Պետրոս Պետիկին [9, էջ 195], ով ազգությամբ հայ էր և Նախիջևանի ունիթորներից էր [7, էջ 336]: Հայոց կաթողիկոսը հայերին և Իրանում ապրող մյուս քրիստոնյաներին է վերապահում ազատագրության գործը: Ըստ էության, նորից հրապարակ է իջնում հայության շրջանում այդքան սիրելի «Դաշանց թուղթը» [3, էջ 65]՝ այս անգամ նոր դերաբաշխումով, որտեղ Կոստանդիանոս Մեծի դերը բաժին էր հասել Ավստրիայի կայսր Լեոպոլդ I:

Հռոմի պապ Ալեքսանդր VII (1655-1667)՝ Հակոբ Ջուղայեցուն գրած նամակից պարզվում է, որ Պասլը նրան հավաստիացրել է, թե իրեն հնազանդվելու դեպքում ամեն ինչ կանի հայ ժողովրդի ազատագրության համար [1, էջ 24]: Նամակի բովանդակությունն այսպիսին է. «մեծ անձկությամբ պատճառեց յիշատակությունը շատ վշտակից նեղութեանց որոնք այնքան ատեն է չարաչար կերպով կիսարտահարեն հայ ցեղը... զանոնք մեղմելու համար որեւէ միջոց դժուար կ'երեւայ... մենք ոչ ալ կրնանք որեւէ ուրիշ օգնութիւն տալ, գրեթէ, բացի սրտագին աղոթքներէ առ Ամենաբարձրն ընծայուած հեճուկս ամենախոր գգացումէ ամենաբարեացակամ ողորմութեան: ... Սակայն այս կէտը պէտք է բոլորովին ամրացած ըլլայ Ձեր մտքին մեջ եւ միայն մտադրուի, սոր Դուք

պիտի ջանաք կառչիլ յարատեօրէն այս Սուրբ Առաքելական գահին... Կղաւանիք Հռովմէական Եկեղեցւոյ պարտավոր հնազանդութիւն եւ հպատակութիւն» [12, էջ 6-8]:

Պետիկը, մասնակի բացահայտելով նաև հայ իշխանների տրամադրությունը, գրում է, որ «հայ իշխաններն ու պաշտոնատերերը» հույս ունեին բարեփոխել իրենց վիճակը՝ «մահմեդականների» դեմ «գաղտնի հարաբերությունների մեջ մտնելով» իրենց հարևան մյուս քրիստոնյա ժողովուրդների հետ [9, էջ 195-196]: Քրիստոնյա հարևանների մասին ակնարկը վերաբերում է վրացիներին:

Պետք է նշել, որ Պետրոս Պետիկը լավագույնս արդարացրեց Հակոբ կաթողիկոսի վստահությունը. Պիսկոպի հետ միասին Լեոպոլդ I կայսեր մոտ ունեցած երկու ունկնդրության ժամանակ նա համառոտ զեկուցել է Կաթողիկոսի, հայ ժողովրդի տառապանքների և սվտորիական տնից և հայության ունեցած ակնկալությունների մասին: Բացի այդ, իր հեղինակությամբ լույս է ընծայում Հաբսբուրգյան տան մեծարմանը նվիրված մի գիրք, որը, նրա կարծիքով, պիտի ջերմացներ Կայսեր սիրտը և նպաստեր, որպեսզի նա իր ձեռքն առներ Հայաստանի ազատագրության գործը [9, էջ 196]:

Լեոպոլդ I բացի, բանագնացները տեսակցություն են ունենում նաև Կայսեր մոր և կայսրուհու հետ: Սվտորիական բանակցությունների արդյունքների մասին ցայսօր ոչինչ հայտնի չէ: Մեծ հայագետ Ա. Հովհաննիսյանի դիտարկմամբ, սակայն, «բոլոր նշաններից դատելով՝ Վիեննայի արքունիքի համար այժմեական խնդիրը ոչ թե այն օգնությունն էր, որ սպասում էին անդրկովկասյան քրիստոնյաները արևելաեվրոպական կռալիցիայից, այլ այն ապստամբությունը, որով անդրկովկասյան քրիստոնյաները կարող էին օգնած լինել արևելաեվրոպական կռալիցիային՝ Վիեննային սպառնացող Թուրքիայի դեմ պաշտպանվելու համար...» [9, էջ 199]: Սակայն մեր կարծիքով ազատագրական այն հույսերն ու հարցադրումները, որ հայ գործիչները կապում էին այս կաթոլիկ քարոզիչների դիվանագիտական առաքելության հետ, մի փոքր անտրամաբանական էին: Ֆրանցիսկոս Պիսկոպի պատվիրակությունն առաջին հերթին Ավստրիայի և Սեֆյան Իրանի միջև համագործակցության հիմնական դրույթները ճշտելու նպատակ ուներ: Նման պայմաններում ինչքանով էր հիմնավորված ազատագրական շարժման գործիչների՝ պարսկական լուծը թողափելու ցանկությունը, դժվար է սպառիչ պատասխան տալ: Պարզ է մի բան. Եվրոպան հիշյալ ժամանակաշրջանում չէր կարող հակապարսկական կողմնորոշում ունենալ, ավելին՝ ընթացք տալ նման մի ձեռնարկի այն ժամանակ, երբ թուրքական վտանգն անաբեկել էր ողջ մայրցամաքը: Ժամանակի եվրոպական ընկալումներում Իրանն ընկալվում էր այն

հիմնական դաշնակիցներից մեկը, որը կարող էր անհրաժեշտության դեպքում Թուրքիային հարվածել թիկունքից:

Կես ճանապարհին ավարտվեց ազատագրական շարժման այս մի դրվագը նույնպես, սակայն դրանից հետո ազատագրական ծրագրերը ընդհատակ չանցան և, որ ամենակարևորն է՝ առավել լայն աջակցություն ստացան հենց բուն Հայաստանում:

1699 թ. սպրիլի 29-ին Հռոմի Կղեմես XI պապին հղած հայ իշխանների և մելիքների մի նամակից պարզ է դառնում, որ 1670-ական թթ. վերջերին Կաթողիկոսի գլխավորությամբ Էջմիածնում գաղտնի խորհրդակցություն է հրավիրվում, որին մասնակցում են երկրի ամենաազդեցիկ վեց իշխաններն ու մելիքները և նույնքան հոգևորականներ: Էջմիածնի ժողովի մասին ակնառիվ ինչ են գրում նամակի հեղինակները. «Ժողովեցաք Սուրբ Էջմիածին, դատաստան նստաք հետ Յակոբ Կաթողիկոսին, որ գայ առ քոյ Սրբութեանդ վասն միաբանութեան ուղղափառ հաւատոյ հռոմայեցոց, եւ հնազանդիլ Ս.Աթոռիդ Պօղոսի եւ Պետրոսի, եւ պատմել առանձին գլխորհուրդս մեր, որ մենք ընտրեալ էաք զՊարոն Իսրայէլն մեր մեծատան որդի Հայաստանեաց ի տոհմէ Պռոռշ Իշխանի, եւ ինք չի կարաց գալ վասն անօրինաց, եւ պատճառ այլեւայլ լինելոյ աղագաւ. Եւ ընտրեաց փոխարէն զիւր որդին Իսրայէլ Օրին, եւ մենք Խապուլ արաք որ գայ հետ Յակոբ Կաթողիկոսին առ քոյ Սրբութեանդ...» [6, էջ 180]: Քանի որ խորհրդաժողովն անց էր կացվում գաղտնիության պայմաններում, այդ մասին վկայված տվյալները, կարելի է ասել, սահմանափակվում են այս նամակի շրջանակներում: Թերևս բացառություն կարելի է համարել ռուսական աղբյուրներից հայտնի այն միակ տեղեկությունը, համաձայն որի՝ ժողովը որոշում է Կաթողիկոսի գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկել Եվրոպա, որի մեջ մտնում էին աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչներից երեքական հոգի [9, էջ 207]: Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ ժողովականներին, այնուամենայնիվ, չէր հաջողվել պահպանել իրենց նախաձեռնության գաղտնիությունը: Աղբյուրները վկայում են, որ պարսկական իշխանությունները բացահայտել էին ժողովականների մտադրությունները: Չաքարիա Ազուլեցին վկայում է, որ Հայոց կաթողիկոսը «թվին **ռճիզ** (1677) յունիսի մէկ Յերևանիցն փախաւ, գնաց Վրացտուն» [4, էջ 128]: Թէն դեպքերի ժամանակակից պատմիչ Չաքարիա Քանաքեռցին հաղորդում է, որ Կաթողիկոսը իր բազում պարտատերերից ձանձրանալով է, որ «առանց գիտելոյ իսանին՝ ելեալ գնաց ի Տփիսիս քաղաք Վրաց, թերևս կարասցէ ժողովել զդրամս, զի օգնութիւն լիցի պարտուցն» [5, էջ 91], սակայն տարածաշրջանում տիրող իրադրության առավել հանգամանալի քննությունը ցույց է տալիս, որ միայն Էջմիածնի

գլխին կուտակված պարտքերը մարելու նպատակը չէ, որ Հայոց կաթողիկոսին հասցրել էր Վրաստան: Հարևան երկիր մտնելը ուներ քաղաքական առաքելություն:

Այդ շրջանում, երբ ակտիվացել էր ազատագրական պայքարը թե՛ Վրաստանում և թե՛ Հայաստանում, Հռոմի պապը և եվրոպական տերությունները չէին զլանում ակնկալվող օգնության մասին խոստումներ շոսյլել պայմանով, որ վրացիներն ու հայերը նախօրոք կաթողիկոսություն ընդունեն [1, էջ 26]:

1676 թ. Արևելյան Վրաստանում ծայր առան մի շարք սպառամբական ելույթներ, որոնց նպատակն էր նախ միավորել Քարթլին ու Կախեթը, սպա ընդհանուր ճակատ կազմել Թուրքիայի գերիշխանության տակ գտնվող Արևմտյան Վրաստանի մարզերի հետ: Վրաստանում տիրող նման քաղաքական իրադրությունն էլ, ըստ երևույթին, Կաթողիկոսին հայ-վրացական համագործակցության հույսեր էր ներշնչել: Էջմիածնի խորհրդածողովում վրացիների հետ կապեր հաստատելու որոշումը հիմնավորվում է Պֆալցի կուրֆյուրստի՝ 1698 թ. մայիսի 3-ին վրաց Գուրգին խանին ուղղած մի նամակով, ուր սսված է, որ Հակոբ կաթողիկոսի պատվիրակությունն ուղևորվել էր Եվրոպա՝ «իր՝ Գուրգին խանի, Հայոց պատրիարքների և Մեծ Հայաստանի իշխանների կողմից» [9, էջ 212]: Սրանից բացի, պահպանվել են Կաթողիկոսի և վրաց քաղաքական ու հոգևոր շրջանակների՝ առավել վաղ ժամանակներում ունեցած քաղաքական կապերի մասին այլ վկայություններ ևս [9, էջ 210-212]: Թե ինչքան են տնել Հակոբ Ջուղայեցու դեգերումները Վրաստանում, ժամանակակից երկու աղբյուրները տարբեր տվյալներ են հաղորդում: Ըստ Ջաքարիա Քանաքեռցու՝ Կաթողիկոսը «կացեալ անդէն աւուրս ինչ, և սակաւ ինչ վճարեաց ի պարտուցն: Եւ սպա ելեալ գնաց ի ծովեզերն. և նստեալ ի նաւ, և գնաց ի Բիւզանդիայ» [5, էջ 91]: Ա.Հովհաննիսյանն իրավացիորեն սխալ է համարում Ջաքարիա Սարկավազի այն տեղեկությունը, թե Ջուղայեցին միայն մի քանի օր է մնացել Վրաստանում, և վկայակոչելով Ջաքարիա Ագուլեցուն՝ իր կողմից առաջարկում է երկուս ու կես տարի ժամկետը [9, էջ 217]: Պահպանվել են Հակոբ Ջուղայեցու նամակները, որոնք մանրամասն ներկայացնում են Կաթողիկոսի ողիսականը: Պարզվում է, որ ի հեճուկս Երևանի խանի, նա անցնում է Դադիան՝ Մև ծովի վրայով Ղրիմ հասնելու համար: Մակայն այստեղ ծայր առած տեղական խոշոր սպառամբության պատճառով անհնարին է դառնում շարունակել ճանապարհը, և Կաթողիկոսը ստիպված վերադառնում է Ախալցխա, որպեսզի Տրապիզոնի վրայով շարունակի իր ճանապարհը: Օսմանյան իշխանությունները «վիրանկներու երկիրն երթալու» մեղադրանքով Մպերում նրան ձերբակալում են և պահում Կարին քաղաքում, որտեղից նա կարողանում

է դուրս գալ միայն կաշառքով և շարժվում դեպի Տիգրանակերտ (Ամիդ)՝ այնտեղից Սեբաստիա և Թոխաթ գնալու մտադրությամբ: Սակայն այստեղ նրա հետևից է հասնում սուլթանական պատվիրակը և ուղեկցում է նրան դեպի Կոստանդնուպոլիս [6, էջ 183-184]: Ա.Հովհաննիսյանը ծանոթ է այս նամակներին, բայց, ըստ էության, ոչ ամբողջովին նրա աշխատության էջերում կարդում ենք. «Վերջերս հրապարակվեցին Հակոբի մի շարք նամակներ, որոնք պարզում են, որ նա գտնվում էր Կ.Պոլսում արդեն իսկ 1679 թ. հունվարին» [9, էջ 217]: Սակայն սա չի համապատասխանում իրականությանը. 1679 թ. հունվարին Կաթողիկոսը չէր կարող լինել Կ.Պոլսում: Ջուղայեցու մի նամակից պարզ է դառնում, որ իր ուղևորության գոնե 15 ամիսը նա անց է կացրել Վրաստանից դուրս, որից ութը՝ Էրզրումում, յոթը՝ «աստ ու անդ» շրջելով՝ Ամիդից Կոստանդնուպոլիս հասնելու ճանապարհին [6, էջ 183-184]: Այսպիսով, ինչպես ցույց է տալիս մինչ այժմ հայտնի տվյալների համադրումը, երկուս ու կես տարի Ջուղայեցին չէր կարող անցկացնել Վրաստանում.: Առնվազն 1678 թ. ամռան վերջին-աշնան սկզբին նա պետք է լքած լիներ Վրաստանը. և եթե ուշադիր կարդանք Ջափարիա Ագուլեցու համապատասխան տողերը, կտեսնենք, որ դրանք ամենին չեն հակասում այս դրույթին, որովհետև 1679 թ. դեկտեմբերի դրությամբ նա արձանագրում է ոչ թե Ջուղայեցու՝ երկու տարի Վրաստանում լինելը, այլ «*այս ք ամ է, որ Էջմիածնայ Սեֆիդուլի խանի ձեռացն փախստ, գնաց Վրացտուն*» [4, էջ 145]:

Հակոբ Ջուղայեցու՝ դաշնակցային համագործակցությանը միտված քայլերը միայն Վրաստանով չէին սահմանափակվում: Հրատարակված վավերաթղթերը վկայում են, որ Կաթողիկոսը լիազորված էր Հռոմի պապի հետ բանակցել ոչ միայն Էջմիածնի, այլև Գանձասարի կաթողիկոսության անունից: Այս փաստը գալիս է ապացուցելու այն հանգամանքը, որ իր փախուստի ճանապարհին Հակոբ կաթողիկոսը հանդիպել է Աղվանից կաթողիկոսներին [9, էջ 209-210]: Հայոց կաթողիկոսը ժամանակին կապեր հաստատելու փորձեր էր արել նաև ռուսական արքունիքի հետ: Պահպանվել է նրա ստորագրությամբ մի նամակ՝ ուղղված Ռուսաց ցարին, որտեղ Կաթողիկոսը ներկայացնելով արևելահայերի ծանր կացությունը՝ խնդրում է «զի բարեհաճէ օգնել մեզ, խեղճութիւնից ճնշուածներիս, և երբ Նորին ամենագօր Մեծութիւնը պարսիկների մօտ դեսպաններ ուղարկելու լինի մի քանի խօսք (ասել) ի պաշտպանութիւն մեր ստացուածքի այլ և ... իւր թագաւորական դիւանագէտներին հրամայէ ազդել: Ռուս իշխանութիւնը մեծ նշանակութիւն ունի պարսիկների սչքում և գուցէ առաջիկայում հաւակնութիւն չունենան տանջել նրանց, որ ի Քրիստոս Աստուածն ունեցած ընդհանուր հաւատի շնորհիւ, կարող կը լինեն Ձեզ ուղղել իրանց

հայեացքը» [10, էջ 59-60]: Ռուսաստանի հետ ազատագրական հույներ կապելու մասին, սակայն, դեռ վաղ է խոսելը, և դժվար թե Հակոբ Ջուղայեցու ժամանակ հայերը լուրջ ակնկալիքներ ունենային ռուսական արքունիքից:

Վերջապես երկար տառապանքներից հետո Կաթողիկոսը կարողանում է հասնել Կոստանդնուպոլիս: Աղբյուրները միանշանակ տեղեկություններ չեն հաղորդում Վեհափառի ժամանման ստույգ թվականի մասին, սակայն ուսումնասիրողների մեծամասնության տվյալների համաձայն՝ նա մայրաքաղաք էր հասել 1679 թ. աշնան վերջին-ձմռան սկզբին և այնտեղ մնացել ամբողջ ութ ամիս [6, էջ 184]: Կ.Պոլսում Կաթողիկոսին հեշտ օրեր չէին սպասվում: Նա քաջ գիտակցում էր, որ առանց արևմտահայության հավանության իր ձեռնարկումը հաջողություն չէր ունենա, ուստի խնդիր ուներ համաձայնություն կայացնել հայության այս հասկածի վերնախիսավի հետ նույնպես: Այդ նպատակով Կաթողիկոսը հատուկ պատվիրակ է ուղարկում իր երբեմնի լուրջ ախոյան Եղիազար հակաթոռ կաթողիկոսի [2, էջ 244] մոտ՝ ասելով. «Սիրեցեալդ իմ ի Քրիստոս, պատուական եղբայր, հայեաց եւ աղեխորով լեր ի վերայ թշուառութեան մերայնոց, որք կան ի թագաւորական Քաղաքաիւ. զի եւ դու մասամբ իւիք եղեր պատճառ ցաւոցս այսոցիկ. ե՛կ այսր, եւ խորհուրդ արարեալ գտցուք էլս հնարից յօգուտ Ազգին» [2, էջ 190]: Եղիազարը պատասխանում է, որ մոտավորապես էն Մեծ Պահքի օրերը և Ջատկի տունը, այդ պատճառով չի խոստանում շուտափույթ հասնել Կ.Պոլիս: Դժվար է ասել՝ իսկապես Եղիազար Այնթափցին մտադիր էր հետևել Կաթողիկոսի առաջարկին, թե սա ընդամենը քաղաքավարի մերժում էր, սակայն ակներև է, որ Կաթողիկոսին երկար ժամանակ չէր հաջողվում հաղթահարել եղած խոչընդոտներն ու շարունակել իր ճանապարհը, ուստի 1679 թ. բանակցությունները նախապատրաստելու հանձնարարություն էր սովել Հռոմում գտնվող Նախիջևանի առաջնորդ Առաքել Բոբիկ վարդապետին [9, էջ 219]: Կաթողիկոսի ժամանումն ըստ արժանվույն պատվելու համար պապական արքունիք նամակներ էին հղում նաև Կ.Պոլսում գտնվող կաթոլիկ միսիոներները՝ Գասպար Գասպարին, Ֆրանչեսկո Ջիլին [7, էջ 338] «Իրեն (կաթողիկոսին) կը հնազանդին հայերը Լեհաստանի, Մոլտաւիոյ, Յունաստանի, Թրակիոյ, Իտալիոյ, ամբողջ Եւրոպայի, Վրաստանի, Մենկրեւիոյ, Փոքր-Ասիոյ, Մեծ ու Փոքր Հայաստանի՝ մեծ մասամբ, գրեթէ ամբողջ Պարսկաստանի եւ հուսկ Արեւելեան Հնդկաստանի... Յարմար պիտի ըլլար որ Ս.Աթոռը Հայ Պատրիարքն ընդունէր Քահանայապետական Մատրան մէջ, վերջին կարդինալէն անմիջապէս յետոյ, կամ աւելի ցայտուն կացուցանելու համար միութիւնը՝ այքառու տեղ մը պատրաստել տար անոր եւ իր

Եպիսկոպոսներուն» [6, էջ 188]: Առհասարակ Ամենայն Հայոց կաթողիկոսի այս ճանապարհորդությունը մեծ հետաքրքրություն էր հարուցել ոչ միայն Արևելքում, այլև Իտալիայում: Մի օտարագրի հեղինակ, Ռիկո անունով հայոց եկեղեցուն նվիրված իր աշխատության մեջ գրում է. «1678 թ., երբ ես Զմյուռնիայից Անգլիա գնալու համար բռնեցի Հռոմի և Իտալիայի ճանապարհը, շուկ էր տարածված ամբողջ Եկեղեցական Պատմության մեջ, թե Հայոց առաջին պատրիարքը, իր մի քանի միտրոպոլիտների ուղեկցությամբ, շուտով գնալու է Հռոմ՝ պապին հնազանդության համար: Այնուհետև ես մի քանի ամիս մնացի Իտալիայում, բայց այնտեղ այդ պատգամավորության մոտենալու մասին ոչ մի լուր չստացվեց, ուստի այն ժամանակից ես եկել եմ այն եզրակացության, որ Հայոց պատրիարքը նույնքան հեռու էր մի որևէ օտար եկեղեցուն հպատակվելու դիտավորությունից, որքան Հայաստանը հեռու է հռոմեական կրոնի աթոռից» [7, էջ 339]:

Բայց Կաթողիկոսին վիճակված չէր ավարտին հասցնել իր առաքելությունը. 1680 թ. օգոստոսի 1-ին [11, էջ 86-91] 82-ամյա ծերունագարդ Կաթողիկոսի մահը վերջ դրեց բոլոր ծրագրերին, և կես ճանապարհին մնաց ազատագրական շարժման այս դրվագը ևս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Օ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:
2. Եղիազարի արևմտահայ ինքնուրույն կաթողիկոսության պատմությունն սկսվում է 1663 թ., բայց այդ թվականին նա արդեն հասարակական արդյունավոր անցյալ ուներ: Նա Հովհաննես Շնքուշեցու աշակերտն էր և իր արժանավորության համար 1647 թ. Արդնիի Բարձրահայաց Ս.Աստվածածնի վանքի առաջնորդությանն էր կոչվել. իսկ 1651թ. Կ.Պոլիս գալով այնքան էր համբավ հանել, որ, մեկուկես տարի պատրիարքությունը վարելով ընդհանուր համակրանքի էր արժանացել (**Անասյան. Հ.**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961):
3. «Դաշանց թուղթ» խորագիրը կրող մեզ հասած աղբյուրն ըստ իր բովանդակության վերաբերում է հռոմեական կայսր Կոստանդին Մեծի և Հայոց արքա Տրդատ III –ի միջև Հռոմում կնքված պայմանագրին: Աղբյուրում խոսվում է Տրդատ արքայի և Գրիգոր Լուսավորչի բազմամարդ թափերով Հռոմ ժամանելու, Կայսեր և Հռոմի պապ Սեդեատորոսի կողմից նրանց ցուցաբերած

արտակարգ ընդունելության, շնորհված նվերների և բազում այլ հարցերի մասին: «Դաշանց թուղթն» առաջին անգամ հրատարակվել է Վենետիկում 1683 թ. Հովհաննես Հոլովի իտալերեն թարգմանությամբ հանդերձ: Այդ հրատարակությունը հետազոտողներին հայտնի դարձավ սուկ 1961 թ., երբ հայտնաբերվեց Հ.Անայանի կողմից Մաժտոցի անվան Մատենադարանի №2272 ժողովածուի կազմի մեջ: Այն վերնագրված է «Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կիսայերն Կոստանդինուսի և սբոյն Սեդրեստրուսի վեհագունի փսփի և Տրդատայ Հայոց արքայի և սբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին: Շարագրեցալ յամի Տետոն երեք հարիւր և տասն և վեց. Տպագրեալ ի թուի Փրկչին 1683, ի Վենետիկ քաղաքի»: **Բարթիկյան Հ.**, «Դաշանց թուղթ». Կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, Պատմա-բանասիրական հանդես, Ե., 2004, № 2:

4. **Զաքարիա Ազուլեցի**, Որագրութիւն, Յերեսան, 1938:
5. **Զաքարեայ Սարկաւազ**, Պատմագրութիւն, Էջմիածին, 1870:
6. **Թերզեան Մ.**, Յակոբ Դ. Ջուղայեցի, Պէրութ, 1956:
7. **Լեռ**, Հայոց պատմություն, Ե., 1969, հ. Գ:
8. Պետրոս Պետիկի նախնիքը, ըստ իր գրքի, ծագում են Անիի հայ ազնվական մի ընտանիքից, որը հավակնում է սերված լինելու հին հայ թագավորական տոհմից՝ Արշակունիներից: Հալեայի միսիոներները ուղարկում են Պետիկին Հռոմ, ուր նա մտնում է Ուրբանոս պապի հիմնած Պրոպագանդի դպրոցը: 1669 թ. նա սակարտում է այդ դպրոցը և մեկնում Իրան, ուղեկցելով Նախիջևանի արքեպիսկոպոս Մատթեոս Հովհաննիսեցուն, երբ վերջինս, Կղեմես IX պապից լիազորված և Լյուդովիկոս XIV-ի Թոսկանայի մեծ դքսի և վենետիկյան սենատի հատուկ հանձնարարականներով հղվում էր Սպահան՝ Նախիջևանի կաթոլիկների օգտին արտոնություններ հայցելու (**Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ) :
9. **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Ե, 1959:
10. **Հովհաննիսյան Ա.**, Պատմագիտական ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, 2001:
11. **Ութուջյան Ա. Ա.**, Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու մահվան առեղծվածի շուրջ, «Էջմիածին», 2013թ.:
12. **Քիւրտեան Յ.**, Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցի, Անթիլիաս, 1965:

РЕЗЮМЕ
ДЕЯТЕЛЬНОСТЬ АКОПА ДЖУГАЕЦИ
A.S. ВИРАБЯН

В 60-80 гг. XVII века благодаря Армянской Апостольской Церкви борьба за освобождение Армении получила новый размах. В этих нестабильных условиях всю ответственность за освобождение Армении взял в свои руки католикос всех армян Акоп Джугаеци. В 1677 году под руководством католикоса в Эчмиадзине был созван тайный совет, в котором приняли участие самые влиятельные князья, мелики и духовные лица. Совет принял решение послать делегацию под предводительством католикоса в Европу. Однако эта попытка не обвенчалась успехом и программа освобождения Армении не была осуществлена.

SUMMARY
THE ACTIVITY OF HAKOP DJUGHAYETSI
A.S. VIRABYAN

In the 60-80-s the XVII century Armenian Struggle for liberation renewed due to the Armenian Apostolic Church. In these unsteady conditions Catholikos of All Armenians Hakop Djughayetsi took in his hands the cup of Armenian liberation. It was just in Armenia where liberation programs gained a wide support. In 1677 a secret council was held in Echmiadsin, that was led by Catholikos, and the most influential knights, meliks and clergymen participated in it. The Council made a decision to the send a deligation to Europe under the leadership of Catholikos. However this undertaking failed and the program of Armenian liberation was'nt put in action after all.

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №2 (19) 2013 Гуманитарные науки

«ՓՄՅՏԱՆՅՈՒԹԻ ՖԻԶԻԿԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»
ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Բ. Ա. ԽՈՂԵՐՅԱՆ, Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,


Գ. Ա. ՏԱԲԻՐՅԱՆ, Տ. Վ. ԵՐԶՆԿՅԱՆ

*Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան*

«Տեխնոլոգիա» հանրակրթական առարկայի ծրագրում մեծ տեղ է հատկացվում փայտամշակման տեխնոլոգիաներին, քանի որ մեր հանրապետությունում բացի տասնյակ խոշոր փայտամշակման ձեռնարկություններից, գործում են բազմաթիվ փոքր և միջին ձեռնարկություններ և անհատ ձեռներեցներ, որոնք զբաղվում են կահույքի կամ աստղծագործական իրերի արտադրությամբ: Ընդհանրապես, փայտի և դրա մշակման հետ մարդը հաճախ է շփվում իր առօրյա կյանքում:

Փայտանյութը մանրաթելային նյութ է: Փայտանյութի մշակման հիմնական եղանակը կտրումն է, որի ժամանակ կտրվում են մանրաթելերը և հեռացվում՝ տաշեղի կամ թեփի տեսքով: Մանրաթելերի ուղղությունից կախված փոխվում են փայտի ֆիզիկամեխանիկական հատկությունները:


Սղոցումը փայտի մշակման ամենատարածված եղանակներից է: Մանրաթելերի կտրման ուղղությունից կախված տարբերում են սղոցման հետևյալ ձևերը՝ լայնական, երկայնական և խառը [1]: Սղոցման եղանակից կախված սղոցի ստամներն ունենում են տարբեր երկրաչափական ձևեր (նկ.1):




Նկ.1 Սղոցի ստամների ձևերը
ա) լայնական սղոցման, բ) երկայնական սղոցման, գ) խառը սղոցման

Փայտանյութի մեխանիկական և գեղարվեստական մշակման ժամանակ առանձնահատուկ նշանակություն է ստանում կարծրությունը (պնդությունը), ինչը բնութագրվում է փայտի մեջ ավելի պինդ մարմինների ներխուժելուն դիմադրելու հատկությամբ: Փայտի պնդությունը լայնական կտրվածքում 30-40% -ով ավելի մեծ է, քան շոշափողական (տանգենցիալ) կամ շառավիղային կտրվածքներում [2]: Պնդությունը կախված է նաև փայտի խոնավությունից, օրինակ՝ մինչև 12% խոնավություն ունեցող փայտանյութը 1,5 - 2 անգամ ավելի պինդ է քան 30% խոնավություն ունեցողը:

Տարբերում են ստատիկական և հարվածային պնդություն: Մեր կողմից ստեղծվել է լաբորատոր սարք, որով որոշվում է փայտանյութի ստատիկական պնդությունը [3] և մշակվել է լաբորատոր աշխատանք, որը կիրառվում է տեխնոլոգիայի ուսուցման ընթացքում: Սարքի ընդհանուր տեսքը և սկզբունքային սխեման պատկերված է նկ.2 - ում և նկ.3 - ում:



Նկ.2 Փայտանյութի պնդությունը որոշող սարքի ընդհանուր տեսքը




- 1-պատվանդան
- 2-նմուշ
- 3-սեղմող մեխանիզմ
- 4-ասեղ
- 5-բեռ
- 6-հենաձող
- 7-ինդիկատոր
- 8-չափաբերման մակերևույթ

Նկ.3 Փայտանյութի պնդությունը որոշող սարքի սկզբունքային սխեման

Շարունակելով փայտի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրումը՝ մեր կողմից ստեղծվել է փայտանյութի հարվածային պնդության որոշման սարք, որի սկզբունքային սխեման և ընդհանուր տեսքը պատկերված է նկ.4-ում և նկ.5-ում:



Նկ.4 Փայտանյութի հարվածային պնդությունը որոշող սարքի ընդհանուր տեսքը



Նկ.5 Փայտանյութի հարվածային պնդությունը որոշող սարքի սկզբունքային սխեման

Սարքը իրենից ներկայացնում է կալան (շտատիվ), որի վրա ուղղաձիգ դիրքով տեղադրված է մետաղե խողովակ: Խողովակի ներսում գտնվող սրածայր բեռը թելի օգնությամբ բարձրացվում է մինչև խողովակի վերին եզրը և բաց թողնվում: Սրածայր բեռը հարվածելով կալանի վրա տեղադրված փայտե փորձանմուշին, առաջացնում է կոնաձև փոսիկ: Բեռի զանգվածը հաստատուն է ($m = 0,12կգ$): Անկման բարձրությունը նույնպես անփոփոխ է ($h = 0,3մ$):


Լաբորատոր աշխատանքը կատարելիս վերցնում ենք (50x50x50մմ) չափերի տարբեր փայտատեսակների նմուշներ, որոնց միջին խոնավությունը 10-12% է: Յուրաքանչյուր նմուշի վրա կատարում ենք փորձարկումներ՝ հինգ հարված ճակատային կտրվածքի և հինգ հարված շոշափողական կտրվածքի ուղղությամբ: Արդյունքում, նմուշների վրա առաջանում են տարբեր մեծության փոսիկներ: Նմուշների մակերևույթները սևացնում ենք գրաֆիտով և օգտվելով միկրոսկոպային քանոնից՝ չափում փոսիկների տրամագծերը:

Չափման արդյունքները գրանցվում են աղյուսակում: Հաշվելով չափումների միջին թվաբանական արժեքը, կատարում ենք համեմատում, որը բնութագրում է տարբեր փայտատեսակների հարվածային պնդությունը: Որքան մեծ է դրոշմահետքի տրամագիծը, այնքան փափուկ է փայտատեսակը և հակառակը:

Փայտանյութի հարվածային պնդության որոշման աղյուսակ

N h/h	Փայտի տեսակները							
	սոճի (մմ)		կվեճի (մմ)		ընկուզենի (մմ)		լորենի (մմ)	
	ճակատ.	շոշափ.	ճակատ.	շոշափ.	ճակատ.	շոշափ.	ճակատ.	շոշափ.
1	3,0	4,5	2,1	3,2	1,5	2,0	4,0	5,2
2	3,2	4,0	2,3	3,0	1,6	1,8	3,9	5,3
3	3,3	4,3	2,2	2,8	1,4	1,9	4,0	5,5
4	3,5	4,0	2,1	2,9	1,5	1,7	4,1	5,4
5	3,2	3,9	2,4	3,0	1,4	1,8	4,0	5,3
միջ.	3,24	4,14	2,22	2,98	1,48	1,84	4,0	5,34

d միջ.



Փայտանյութի հարվածային պնդության հիստոգրամ

Աղյուսակից և հիստոգրամից երևում է, որ ճակատային կտրվածքում փայտանյութի պնդությունը 20 - 30 %-ով գերազանցում է շոշափողական կտրվածքի պնդությանը:

Փայտանյութի հարվածային պնդության որոշման սարքն ունի պարզ կառուցվածք: Այն կարելի է օգտագործել հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի փայտամշակման բաժնի ուսուցման ժամանակ, ինչպես նաև մանկավարժական ԲՈՒՀ-երի «Տեխնոլոգիա և

ձեռնարկչություն» մասնագիտության ուսուցիչներ պատրաստելու գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Е. М. Муравьев, М.П. Молодцов Практикум в учебных мастерских, Обработка древесины и пластмасс. – М; „Просвещение“ 1987.с.57
2. И. Н. Гушулей, В.В. Рига Основы деревообработки., - М; „Просвещение“ 1988.с.48
3. Բ.Խողերյան, Ա.Հարությունյան, Մ.Աղաջանյան, Մ.Սուպյան, Գ.Տաբիրյան Փայտանյութի պնդության որոշումը Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում մշակված մեթոդով, «Մանկավարժական միտք» հանդես, 2009թ. 1-2

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ТЕМЫ

«ФИЗИКОМЕХАНИЧЕСКИЕ СВОЙСТВА ДРЕВЕСИНЫ»

Б.А.ХОДЕРЯН, А.Г.АРУТЮНЯН, Г.А.ТАБИРЯН, Т.В.ЕРЗНКЯН

В статье представлена методика проведения лабораторной работы по определению статической и ударной твердости древесины, а также приведена конструкция приборов для определения твердости древесины на разных плоскостях. Методика может быть рекомендована для проведения таких работ на уроках «Технологии» в школах.

SUMMARY

PECULARITIES OF TEACHING THEME

«PHYSICOMECHANICAL QUALITIES OF THE WOOD»

*KHODERYAN B.A., HARUTYUNYAN A.H.,
TABIRYAN G.A., YERZNKYAN T.V*

The article shows the description of the laboratory work on definition of statistical and shocking solidity of wood. Definition of methodology of wood solidity and construction of instruments is carried out in the physichotechnological faculty of ASPU.

Our aim is to carry out such research during the lessons of «Technology» at school.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ №2 (19) 2013 Гуманитарные науки

**ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔԻՄԻԱՅԻ
ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ճ.Վ. ՄԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Քիմիայի դասականության գործընթացում փորձնական աշխատանքներն ունեն առաջատար դեր: Դրանք ամրագրված են հիմնական և ավագ դպրոցների ուսումնական ծրագրերով, ներառելով թե՛ անօրգանական քիմիայի, և թե՛ օրգանական քիմիայի բոլոր հիմնական բաժինները:

Փորձնական աշխատանքների կատարումը հնարավորություն է տալիս ստացած տեսական գիտելիքները փորձարկել և արդյունավետ կիրառել այս կամ այն գործընթացն իրականացնելիս, փորձի արդյունքները տեսնել սեփական աչքերով, կատարել համապատասխան եզրակացություններ, համոզվել նրանց ճշմարտացիության մեջ, կամ ժխտել այն: Այդ իմաստով քիմիական կրթության մեջ փորձնական աշխատանքները կարևոր տեղ են զբաղեցնում, քանի որ դրանց կատարման ընթացքում սովորողները ձեռք են բերում ինքնուրույն փորձեր կատարելու որոշակի կարողություններ և հմտություններ:

Մաթեմատիկայի խնդիրների լուծման փորձ ունենալով նրանք շատ արագ են յուրացնում իրենց իսկ կատարած փորձի արդյունքները խնդրի ձևով ընկալելու և լուծելու պահանջը, հետաքրքրվում են փորձի ընթացքով և ձգտում են անպայման ստանալ բավարար արդյունքներ:

Ընդհանուր առմամբ, ցանկացած խնդրի լուծում քիմիական մտածողության զարգացման միջոց է և տեսական գիտելիքները պրակտիկայի հետ կապելու ամենալավ հնարավորություններից մեկը: Սակայն լինելով դպրոցականների ստացած տեսական գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել սովորեցնելու մի ձև, փորձնական խնդիրների լուծումը ավելի շատ է նպաստում գիտելիքներն

առավել խորը ընկալելուն և դրանով իսկ ապահովում է նյութի կայուն իմացություն:

Փորձարարական խնդիրներ կարելի է առաջադրել և հաջողությամբ լուծել և՛ հիմնական, և՛ ավագ դպրոցում: Կատարվող աշխատանքներն անհրաժեշտ է ընտրել այնպես, որ անպայման լինեն դպրոցական ծրագրի սահմաններում, ցանկալի է այդ աշխատանքներն իրականացնել դասավանդվող նյութն ամփոփելուց հետո և ուսումնական ծրագրով նախատեսված փորձնական աշխատանքների հետ համաձայնեցված: Բնականաբար, նյութերը, ռեակտիվները պետք է լինեն մատչելի, ցանկալի է հնարավորինս ոչ վտանգավոր: Փորձարարական խնդիրը պետք է ընտրել այնպես, որ իրականացվող ռեակցիաները լինեն “դիտարժան” (նստվածքի առաջացում կամ լուծում, գազի անջատում, լուծույթի կամ ռեակցիաներին մասնակից նյութերի գույնի փոփոխություն և այլն), խնդրի լուծման ընթացքը չպետք է աշխատատար լինի և հնարավոր լինի այն ավարտել մեկ դասաժամի ընթացքում: Փորձը ցույց է տալիս, որ փորձնական աշխատանքի կիրառմամբ խնդիրների լուծման ժամանակ ստացած գիտելիքներն ավելի կայուն են, քան ավանդական ուսուցման ընթացքում: Փորձարարական խնդիրների լուծումն կարելի է իրականացնել և անհատական, և խմբային աշխատանքի կազմակերպման միջոցով: Անհատական և խմբային աշխատանքի զուգակցումը հնարավորություն է տալիս սովորողներից յուրաքանչյուրի մոտ վերահսկել տարբեր ծրագրային թեմաների յուրացման աստիճանը: Սովորաբար համատեղ կատարված աշխատանքի ընթացքում ստացվում են ավելի բարձր արդյունքներ, քան առանձին սովորողների կողմից կատարված անհատական աշխատանքի արդյունքում: Փորձարարական խնդիրների լուծման ընթացքում տարբեր խմբերի միջև մրցակցային բնույթի ստիմուլ է ձևավորվում և տիրող համագործակցային և փոխօգնության մթնոլորտը ընդհանուր առմամբ նպաստում է իմացության գործընթացի արդյունավետությանը:

Պարապմունքների ընթացքում խմբային աշխատանքի ընթացքում ցանկալի է, որ ուսուցիչը չմասնակցի գործնական աշխատանքի կատարմանը, այլ միայն հետևի կարգապահությանը և անվտանգության կանոնների կատարմանը, որի համար նա նախապես սովորողներին պետք է մանրամասնորեն ներկայացնի և բացատրի փորձնական աշխատանքի ընթացքը քայլ առ քայլ: Սովորաբար աշակերտների մոտ

դժվարություններ են առաջանում քիմիական ռեակցիայի էլքի հաշվման պահանջով խնդիրներ լուծելիս: Մակայն, երբ տարբեր թեմաներ քննարկելիս մոդելավորված դասի ընթացքում փորձնական ճանապարհով իրենք են որոշում իրականացված քիմիական ռեակցիաների էլքը, ապա դա շատ տպավորվում է սովորողների մոտ, նրանք երկար ժամանակ հիշում են փորձի ընթացքն ու իրենց իսկ ստացած արդյունքները և նույնիսկ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները չեն դժվարանում դրա վերաբերյալ խնդիրները լուծելիս:

Այս մեթոդիկան օգտագործելով կարելի է քիմիական ռեակցիայի էլքի հաշվման վերաբերյալ խնդիրների լուծումը պարզաբանել 8-րդ դասարանում՝ օրինակ, քիմիական ռեակցիաների տեսակները քննարկելիս քայքայման, տեղակալման ու միացման ռեակցիաների օրինակներով կամ ջրի դուրս մղման եղանակով գազային նյութերի ստացումն ու հավաքումը քննարկելիս, չափելով դրանց ծավալները և տեսականորեն հաշվածի հետ համեմատելով և այլն:

Դիտարկենք էլքի որոշման մի քանի պարզ օրինակ

1. Ըստ ռեագենտի զանգվածի հայտնի մեծության և փորձնական աշխատանքի ընթացքում ստացված վերջանյութի զանգվածի ռեակցիայի վերջանյութի էլքի որոշումը:


Նախորդ դասերին սովորողների մոտ ձևավորվել են պատկերացումներ առ այն, որ մեզ շրջապատող աշխարհում տեղի են ունենում բազմաթիվ քիմիական երևույթներ՝ քիմիական ռեակցիաներ, որոնց մի մասը մենք նկատում ենք, դրանց ուղեկցող երևույթների շնորհիվ (դրանք անվանում են հատկանիշներ), իսկ մյուսներն ընթանում են մեր համար աննկատ: Հատկանիշների իմացությունը հնարավորություն է տալիս դասակարգելու քիմիական ռեակցիաները: Դա կարելի է կատարել նաև փորձնական ճանապարհով և առանց քիմիական ռեակցիայի որևէ հատկանիշ տեսնելու, եթե աշակերտին հայտնի է ռեակցիայի ընթացքը և ռեակցիայի ուրվագիրը: Դասակարգման հնարքներին տիրապետելը շատ կարևոր է քիմիան ուսումնասիրելիս:

Սովորողներն արդեն գիտեն, որ ըստ էլանյութերի և վերջանյութերի թվի ու բաղադրության փոփոխության տարբերվում են քիմիական ռեակցիաների չորս տեսակներ՝ միացման, քայքայման, տեղակալման և փոխանակման [1]: Փորձենք նշված տիպերի որոշ ռեակցիաներ օգտագործել նաև փորձարարական խնդիրների լուծման համար:

Խնդիր 1

Մալաքիտի քայքայման ռեակցիայի կիրառմամբ որոշել տեսական հնարավորի հանդեպ պղնձի (II) օքսիդի ստացման զանգվածային ելքը:

1. Սովորողները պետք է իմանան, որ մալաքիտը դա պղնձի(II) հիմնային կարբոնատն է, պատկերացնեն դրա քայքայման ռեակցիայի ընթացքը, կարողանան գրել մալաքիտի քայքայման ռեակցիայի հավասարումը, հաշվի առնելով, որ ինչպես և ուրիշ քայքայման ռեակցիաներն իրականացնելիս, մալաքիտի քայքայման ժամանակ ևս անհրաժեշտ է էլանյութը տաքացնել.



2. Ըստ ընթացող ռեակցիայի հավասարման աշակերտները պետք է որոշեն թե ինչ զանգվածով պղնձի(II) օքսիդ կստացվի 2,22 գ մալաքիտի քայքայումից:

3. Նախքան փորձարարական խնդրի հաշվարկների կատարումը անհրաժեշտ է վերլուծել փորձի արդյունքները, մասնավորապես հետևյալ հարցերի միջոցով:

- 1) Ինչպե՞ս է փոխվում մալաքիտի գույնը այն տաքացնելիս:
- 2) Ի՞նչ նյութեր են առաջանում այս ռեակցիայի ընթացքում
- 3) Ո՞ր նյութն է մնում փորձանոթում մալաքիտը շիկացնելուց հետո:
- 4) Ո՞ր նյութն է կոնդենսանում փորձանոթի սառը պատերին:
- 5) Ի՞նչ է կատարվում կրաջրի հետ: Ինչո՞ւ:

4. Արդյունքների քննարկում և հետևություններ

1. Կատարված փորձի արդյունքներից էլնելով որոշենք պղնձի(II) օքսիդի զանգվածային ելքը (%-ով) տեսականորեն հնարավորի նկատմամբ:

Ընդունենք, որ մալաքիտի քայքայման արդյունքում ստացվել է 1,36 գրամ պղնձի(II) օքսիդ: Հետևաբար որոշենք պղնձի(II) օքսիդի զանգվածային ելքը (%-ով) տեսականորեն հնարավորի նկատմամբ՝ բաժանելով փորձի ընթացքում ստացված պղնձի(II) օքսիդի զանգվածը (1,36գ) տեսականորեն հաշվածին (1,6գ) և բազմապատկելով այն 100-ով, ըստ

$$\eta = m_{(q)} / m_{(տ)} \text{ քանաձևի:}$$

$$\eta = m_{(q)} / m_{(տ)} \times 100 \% = 1,36 : 1,6 \times 100 \% = 85\%:$$

2. Խմբերով աշխատելու դեպքում համեմատենք առանձին խմբերի ստացված արդյունքները:

3. Խմբերի կատարած փորձի արդյունքներից էլնելով որոշենք տեսականորեն հաշված հնարավորի նկատմամբ պղնձի(II) օքսիդի զանգվածային ելքի միջին արժեքը (%-ով):

4. Վերլուծենք առանձին խմբերի ստացված արդյունքները և կատարենք հետևություններ

Ստացված արդյունքները վերլուծելուց, ամփոփելուց հետո կատարված աշխատանքն ամրապնդելու համար կարելի է կատարել նաև հակառակ փորձարարական առաջադրանքը, այսինքն հաշվի առնելով մալաքիտից պղնձի(II) օքսիդի ստացման գործնական ելքը, որոշել որոշակի զանգվածով պղնձի(II) օքսիդի ստացման համար անհրաժեշտ մալաքիտի զանգվածը: Առաջին փորձարարական խնդիրը կատարելուց հետո այսպիսի խնդիր կարելի է լուծել ուղղակի հաշվարկային խնդրի ձևով (Ժամանակի մեջ տեղափոխվելու համար հակառակ խնդիրը կարելի է կատարել նաև առարկայի հանդեպ հետաքրքրությունն ցուցաբերող աշակերտների հետ արտադասարանական պարապմունքի ժամին) [2]:

2. Որոշակի զանգվածով նյութի ստացումը, երբ դրա ստացման գործնական ելքը տարբերվում է տեսական հաշվածից:

Խնդիր 2

Օգտագործելով մալաքիտի քայքայման քիմիական ռեակցիայի վերջանյութի տեսականորեն հաշված հնարավորի հանդեպ փորձնականորեն որոշված զանգվածային ելքի մեծությունը (խնդիր 1) ստանալ 4 գ պղնձի(II) օքսիդ:

Սովորողներին կարելի է առաջադրել հետևյալ հանձնարարականներ.

1. կազմեք մալաքիտի քայքայման ռեակցիայի հավասարումը
2. ըստ կազմած ռեակցիայի հավասարման հաշվեք 4 գ պղնձի(II) օքսիդի ստացման համար անհրաժեշտ մալաքիտի զանգվածը, հաշվի առնելով խնդիր 1 –ի լուծման ընթացքում հաշված ռեակցիայի վերջանյութի ելքի մեծությունը
3. կշռեք նախապես լվացած և չոր փորձանոթը
4. կշռեք նախապես լվացած և չոր ժամացույցի սպակին
5. Ժամացույցի սպակու վրա կշռեք 4 գ պղնձի(II) օքսիդի ստացման համար անհրաժեշտ մալաքիտը և զգուշորեն տեղափոխեք մալաքիտի քայքայման սարքի մեջ
6. գազատար խողովակի ծայրն իջեցնենք կրաջուր պարունակող փորձանոթի մեջ
7. զգուշորեն տաքացնենք մալաքիտը, մինչև վերջինս լրիվ կփոխարկվի պղնձի(II) օքսիդի
8. փորձանոթն առանձնացրեք սարքից, սառեցրեք և կշռեք:

9. համեմատեք փորձի ընթացքում ստացված օքսիդի զանգվածը խնդրի պայմանում պահանջվող զանգվածի հետ:
10. վերլուծեք ստացված արդյունքները և կատարեք հետևություններ:

Այսպիսով, նման տեխնոլոգիայով փորձնական աշխատանքներն իրականացնելը նպաստում է սովորողների քիմիական կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Աշակերտները սովորում են հետևել փորձի ընթացքին, նկարագրել դիտած երևույթները, համեմատել ելանյութերի ու վերջանյութերի հատկությունները սկսած արտաքին տեսքից, գույնից, սգրեգատային վիճակից, մինչև կարևորագույն քիմիական հատկությունների համադրումը և կիրառությունը, դաստի ընթացող քիմիական ռեակցիաների մասին, որոշել տիպերը, դասակարգել դրանց:

Հարկ էնք համարում նշել փորձարարական խնդիրների լուծման ոչ միայն կրթական, այլև զարգացնող և դաստիարակչական նշանակությունը: Աշակերտների մոտ համոզմունք է ձևավորում, որ փորձը ճանաչողության գործիք է, ինչը հիմք է հանդիսանում սովորողների աշխարհայացքի զարգացման, ինչպես նաև միջառարկայական կապերի իրականացման համար: Փորձարարական խնդիրների կիրառումը նպաստում է գիտելիքների ֆորմալ բնույթի վերացմանը, դիտողականության, դիտարկված երևույթները վերլուծելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ կատարելու կարողությունների ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ.Ա.Սահակյան և ուրիշներ: Քիմիա-8, դասագիրք, Երևան, “Արևիկ”, 2008, 137 էջ:
2. А.Н.Левшук. Химия в школе, 2013, N 2, с. 63-65

РЕЗЮМЕ
РЕШЕНИЕ ЭКСПЕРИМЕНТАЛЬНЫХ ЗАДАЧ КАК СРЕДСТВО
ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ПРЕПОДАВАНИЯ ХИМИИ
Ж.В.САРКИСЯН

Целью работы является выявления роли решения экспериментальных задач в обучении химии в школе. Предложенные задачи придают особую специфику предмету химии, повышая эффективность ее преподавания, являясь важнейшим способом осуществления связи теории с практикой. При решении учащимися экспериментальных задач воспитываются трудолюбие, целеустремленность, вырабатывается мировоззрение, легко реализуются межпредметные связи. В статье показана развивающая функция решения задач, которая формирует рациональные приемы мышления, устраняет формализм знаний, прививает навыки самоконтроля, развивает самостоятельность.

SUMMARY
SOLVING OF EXPERIMENTAL PROBLEMS AS MEANS TO IMPROVE THE
TEACHING OF CHEMISTRY
J. V.SARKISYAN

The purpose of the article is the identify the role of experimental problems in teaching chemistry in school. This problems give a very specific subject to chemistry, increase the effectiveness of teaching chemistry. Experimental problems are the most important way of communicating between theory and practice. Students in solving experimental problems bring diligence, commitment, produced worldview, implemented interdisciplinary communications.

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍԱՑԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 2 (19) 2013 Гуманитарные науки

**ԵՐԿՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ԲԱՐՁՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ
ՉԱՓՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ա.Ս.ԹԱՐՈՅԱՆ

***Խ.Արոյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***


Ընդհանուր ֆիզիկայի ԲՈւՀ-ական դասընթացի ծրագրերին համապատասխանող լաբորատոր աշխատանքներում շատ հաճախ սևիրաժեշտ է լինում չափել շիկացած ճառագայթող մարմինների բարձր ջերմաստիճանները:

Ներկայացվող աշխատանքում առաջադրվում է բարձր ջերմաստիճանների չափման երկու տարբեր՝ էլեկտրական և օպտիկական եղանակներ, որոնք ունեն իրականացման պարզ սխեմա և չի պահանջվում նշանակալի նյութատեխնիկական բազայի առկայություն:

Էլեկտրական եղանակով վոլֆրամե շիկացման թելիկով լամպի T_1 և T_2 ջերմաստիճանների չափման համար օգտվում ենք նկար 1-ում բերված էլեկտրական սխեմայից:

Չափելով լամպի վոլֆրամե շիկացման թելիկի միջով անցնող էլեկտրական հոսանքի ուժի մեծությունը և լարման անկումը կարելի է հաշվել աստիճանաբար շիկացող թելիկի օհմային R դիմադրության կախվածությունը թելիկի ջերմաստիճանից:

Թվում է թե այդ կախվածությունը համաձայն Օհմի օրենքի պետք է ունենա գծային կախվածություն, սակայն, փորձի ընթացքը ցույց է տալիս, որ այն այդպես չէ քանի որ բարձր ջերմաստիճանների դեպքում շիկացած թելիկը հոսանքի աղբյուրից ստացած էներգիան



ճառագայթում է էլեկտրամագնիսական ալիքների էներգիայի տեսքով որի հետևանքով Օհմի օրենքի անալիտիկ գծային կախվածությունը տեղի չի ունենում:

Թելիկի ջերմաստիճանի հաշվարկի համար կարելի է օգտվել մետաղների օհմային դիմադրության ջերմաստիճանից ունեցած կախման բանաձևից ([1]րՑ 138)

$$R = R_0(1 + \alpha \cdot t)$$

(1)

որտեղ R_0 -ն վոլֆրամե թելիկի դիմադրությունն է $0^\circ C$ -ում, α -ն վոլֆրամի դիմադրության ջերմաստիճանային գործակիցն է, որի թվային արժեքն է՝ $\alpha = 4.7 \cdot 10^{-3}$ սաստ $^{-1}$:

(1) բանաձևը $20^\circ C$ ջերմաստիճանի համար կլինի՝

$$R' = R_0(1 + \alpha \cdot t')$$

(2)

որտեղ $t' = 20^\circ C$, իսկ R' -ը վոլֆրամի շիկացման թելիկի դիմադրությունն է $20^\circ C$ ջերմաստիճանում, որի թվային արժեքի համար համաձայն կատարված չափումների ստացվում է՝ $R' = \frac{0.15 V}{0.5 A} = 0.3$ օհմ:

(1) և (2) բանաձևերը բաժանելով կունենանք՝ $\frac{R}{R'} = \frac{1 + \alpha \cdot t}{1 + \alpha \cdot t'}$ (3)

որտեղից շիկացման թելի ջերմաստիճանի համար կարելի է ստանալ՝


$$t = \frac{1}{\alpha} \left\{ \frac{R(1 + \alpha \cdot t')}{R'} - 1 \right\} \quad (4)$$

Վոլֆրամի շիկացման թելի վոլտ-ամպերային բնութագրի արժեքները ջերմաստիճանի բարձրացման հետ չափումների արդյունքները բերված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակի թիվ 1 պունակում բերված արժեքները համապատասխանում են $t' = 20^\circ C$ ջերմաստիճանին ($T' = t' + 273^\circ$), որի դեպքում $R' = 0.3$ օհմ: Իսկ վերջին թիվ 6 և 7 պունակների լարման և հոսանքի ուժի արժեքները վերաբերում են T_1 և T_2 ջերմաստիճաններին ($T_2 \succ T_1$), որոնք պետք է հաշվել:

	1	2	3	4	5	6	7
U (Վ)	0.15	0.3	0.5	1	3.3	5.5	7.8
I (Ա)	0.5	1.0	1.4	1.8	2.6	3.1	3.6

նկ. 2



Թիվ 1-ից 5 պունակներում բերված մեծությունները համապատասխանում են T' և T_1 ջերմաստիճանների միջև ընկած արժեքներին: T_1 և T_2 ջերմաստիճանների մեծությունները կարելի է գտնել օգտվելով (4) բանաձևից: Աղյուսակում բերված տվյալներով շիկացող փոփրամի թելիկի փոլտ-ամպերային բնութագրի գրաֆիկը համաձայն աղյուսակում բերված արժեքների ունի նկ. 2-ում պատկերված տեսքը:

(4) բանաձևից T_1 և T_2 ջերմաստիճանների համար կունենանք՝

$$T_1 = t_1 + 273, \text{ որտեղ } t_1 = \frac{1}{\alpha} \left\{ \frac{R_1(1 + \alpha \cdot t')}{R'} - 1 \right\} \quad (5)$$

$$T_2 = t_2 + 273, \text{ որտեղ } t_2 = \frac{1}{\alpha} \left\{ \frac{R_2(1 + \alpha \cdot t')}{R'} - 1 \right\} \quad (6)$$

(5)-բանաձևում R_1 և R_2 -ը որոշվում են վերևում բերված աղյուսակի նախավերջին և վերջին պունակների տվյալներով

$$R_1 = \frac{5.5V}{3.1A} = 1.774 \text{ ohm}, \text{ և } R_2 = \frac{7.8V}{3.6A} = 2.166 \text{ ohm}:$$

(5)-ում տեղադրելով R_1 -ի, R' -ի, t' -ի և α -ի արժեքները t_1 -ի թվային արժեքի համար կունենանք՝

$$t_1 = \frac{1}{4.7 \cdot 10^{-3}} \left\{ \frac{1.774(1 + 4.7 \cdot 10^{-3} \cdot 20)}{0.3} \right\} =$$

$$= 2.13 \cdot 10^2 \left\{ \frac{1.774 \cdot (1 + 0.096)}{0.3} \right\} = 7.1 \cdot 1.774 \cdot 1.096 \cdot 10^2 = 1380C^0$$

որտեղից $T_1 = t_1 + 273 = 1380 + 273 = 1653K^0$:

Նույն ձևով t_2 -ի համար ստացվում է՝ $t_2 = 1685C^0$, իսկ T_2 -ի համար կստանանք՝ $T_2 = 1685 + 273 = 1958K^0$:

Էլեկտրական եղանակով ջերմաստիճանների համար ստացված արժեքները փորձենք ստանալ օպտիկական եղանակով: Դրա համար օգտվենք ջերմային ճառագայթման օրենքներից $[2 \div 3]$:

Համաձայն Վինի շեղման առաջին օրենքի ճառագայթող մարմնի ճառագայթաառաքման ընդունակությանը, կամ նրա էներգետիկ լուսատվության սպեկտրային խտությանը կախված պլիքի երկարությունից հատկանշական է ճառագայթաառաքման ընդունակության մաքսիմումի շեղմանը դեպի կարճ պլիքների կողմը երբ բարձացվում է ճառագայթող մարմնի ջերմաստիճանը: Որպես ճառագայթող մարմին դարձյալ կարելի է օգտագործել նույն փոֆրամե շիկացման թելիկով լամպը:

Բացարձակ սև մարմնի երկու տարբեր T_1 և T_2 ջերմաստիճանների դեպքում Վինի շեղման առաջին օրենքը ($[2]$ րՑ.221)ումի հետևյալ տեսքերը՝

$$\lambda'_{\max} = \frac{b_1}{T_1} \qquad \lambda''_{\max} = \frac{b_1}{T_2} \qquad (7)$$

որտեղ b_1 -ը է Վինի շեղման առաջին օրենքի հաստատուն, իսկ λ'_{\max} -ը և λ''_{\max} -ը բացարձակ սև մարմնի ճառագայթման անընդհատ սպեկտրի, մեր դեպքում փոֆրամե շիկացման թելիկի համապատասխանաբար T_1 և T_2 ջերմաստիճաններին համապատասխանապես էներգետիկ լուսատվության սպեկտրային խտության մաքսիմումներին համապատասխանող պլիքների երկարություններն են:

Որպեսզի (7)-բանաձևերը գրված T_1 և T_2 ջերմաստիճանների համար կիրառելի լինի լսմայի փոփոխման թելիկի համար, անհրաժեշտ է հաշվի առնել փոփոխման ճառագայթաառաքման ընդունակության սևության աստիճանի գործակիցը, քանի որ բացարձակ սև մարմնի և սովորական իրական մարմնի ինտեգրալային ճառագայթաառաքման ընդունակությունները իրար հետ կապված են հետևյալ առնչությամբ ([3] թՑ.687)՝

$$\varepsilon_T = \chi \sigma \cdot T^4 = \sigma \cdot T_p^4 \quad (8)$$

որտեղ T_p -ն փոփոխման ճառագայթային ջերմաստիճանն է իսկ χ -ն փոփոխման սևության աստիճանն է, որի թվային արժեքը էքսպերիմենտում դիտարկվող ջերմաստիճանների տիրույթում ունի $\chi = 0.25$ արժեքը:

(8)-ից T -ի և T_p -ի միջև անալիտիկ կապը ձևաք կերպի հետևյալ տեսքը՝ $T_p = \sqrt[4]{\chi} \cdot T$, կամ $T = \frac{T_p}{\sqrt[4]{0.25}} = \frac{T_p}{0.7} = 1,43 \cdot T_p$ (9)

Այդ դեպքում (7) և (9)-բանաձևերից փոփոխման ճառագայթային ջերմաստիճանների համար կունենանք՝

$$T_{p1} = \frac{b_1}{\lambda'_{\max}} \quad \text{և} \quad T_{p2} = \frac{b_1}{\lambda''_{\max}} \quad (10)$$

կամ փոփոխման շիկացած թելիկի իրական ջերմաստիճանների համար կունենանք՝ $T_1 = 1,43 \cdot T_{p1}$ և $T_2 = 1,43 \cdot T_{p2}$ (11)

Օպտիկական սպեկտրային սարքով հետազոտվում է փոփոխման շիկացման թելիկի էներգետիկ լուսատվության սպեկտրային խտության (ճառագայթաառաքման ընդունակության) կախվածությունը ալիքի

երկարությունից երկու տարբեր T_1 և T_2 ջերմաստիճանների համար: Արդյունքում ճառագայթաառաքման ընդունակության մաքսիմումներին համապատասխանող երկու կորերն էլ ունենում են մեկական մաքսիմում որոնց ալիքի երկարությունները ունենում են λ'_{\max} , λ''_{\max}

արժեքներ: T_1 և T_2 ջերմաստիճանները կարելի է հաշվել (10) և (11)-բանաձևերով:

Ստացված արժեքները համեմատելով էլեկտրական եղանակով չափված արդյունքների հետ ունենում ենք բավարար համընկնում:

Այսպիսով ԲՈՒՀ-ի ընդհանուր ֆիզիկայի դասընթացի ծրագրերին համապատասխանող լաբորատոր աշխատանքներում բարձր $T_1 = 1500K^0$ -ից մինչև $T_1 = 2300K^0$ ջերմաստիճանները չափելու համար առաջարկում ենք օգտագործել ներկայացված երկու՝ էլեկտրական և օպտիկական եղանակները ելնելով սովյալ ուսումնական լաբորատորիայի տեխնիկական հնարավորություններից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Калашников С.Г. <<Электричество>>, 1970, Москва.
2. Яворский Б.М. Детлаф А.А. << Курс физики>>, 1971, Москва.
3. Сивухин Д.В.. << Общий курс физики>> 1985, Москва. <<Наука>>

РЕЗЮМЕ

ИЗМЕРЕНИЕ ВЫСОКИХ ТЕМПЕРАТУР ДВУМЯ МЕТОДАМИ.

A.S.TAROYAN

В вузовских учебных лабораторных занятиях по общему курсу физики часто необходимо измерять температуры $T \geq 1500K^0$. Предлагается два метода измерения: электрический и оптический. Оба метода просты в исполнении и полезны для повторения прошедших тем.

SUMMARY

THE TWO WAYS OF MEASUREMENTS HIGHER TEMPERATURES.

A.S.TAROYAN

In experimental studies and laboratory classes at General Physics departments of Higher education Insititutions it is often necessary to measure high $T \geq 1500K^0$ temperatures. In the current work two ways of measurement are proposed – electrical and optical. Both methods are straightforward in terms of usage and practical application as well as very helpful when revising past topics of studies.

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №2 (19) 2013 Гуманитарные науки

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՕՏԱՐՆԵՐԻՆ
Ս. Կ. ՏԻՈՅԱՆ

*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական
համալսարան*

Առհասարակ բառապաշարի ուսուցումը որոշակի նպատակ է հետապնդում, որից էլ հետևում է դրա տարբեր **թեմատիկ** (կամ իմաստային՝ ընտանիք, զբաղմունք, ժամանակ և այլն), **գործառական** (կամ մասնագիտական՝ տնտեսագիտական, իրավաբանական, կրոնական և այլն) [1,6], **խոսքիմասային** (կամ ձևաբանական՝ գոյականներ, ածականներ, բայեր և այլն) և այլ շերտերի ներկայացումը: Վերջինս ուսուցման մեթոդիկայի խնդիր է նաև:

Օտարներին հայերենի բառապաշարի ուսուցումն սկսում ենք ամենագործածական բառերից՝ վերջիններիս հիմնական կամ ամենատարածված իմաստներով [2]: Այստեղ չի կարևորվում բառերի միայն հաճախական լինելը. ավելի օգտակար է խոսակցական, կենդանի լեզվում հաճախ կիրառվողների ընդգրկումը: Մենք նպատակահարմար ենք գտնում քիչ թվով բառեր, բայց հիմնավոր սովորեցնելը: Անշուշտ, հաշվի ենք առել բառերի ինչպես խոսքիմասային, այնպես էլ իմաստային տարբեր խմբերի պատկանելությունը, քանի որ հանրահայտ է, որ ամենից առաջ դերանունները սովորելու կարիքն է ծագում (*ես* եմ, *դու* ես, Ես Արամն եմ, Դու՝...), որոնք ամենահաճախականներն են հաղորդակցության գործընթացում: Ընդ որում, նոր բառը ներկայացնելիս այն բազմիցս կրկնում ենք՝ տարբեր կապակցություններով ու պարզագույն նախադասությունների մեջ: Օրինակ, եթե սովորեցնում ենք ժամանակ ցույց տվող բառերից **տարի** միավորը, ապա բերում ենք՝

նոր տարի, հին տարի, հին նոր տարի, այս տարի, ամեն տարի, անցյալ տարի, եկող տարի և այլ պարզ, հիմնականում երկկազմ (երկբաղադրիչ) կապակցություններ և դրանցով կազմված նախադասություններ

Նոր տարի է:

Եկավ Նոր տարին:

*Շուտով գալու է Նոր տարին:
Անցյալ տարի ձյուն եկավ:
Այս տարի ձյուն չեկավ:
Ամեն տարի ձյուն է գալիս:
Անցյալ տարի գյուղ գնացի:*

Այս պարագայում մի քանի բայեր սովորեցնելու անհրաժեշտություն է ծագում. դրանցից, ինչպես տեսնում ենք, ամենահաճախ կիրառելիների խմբում են անկանոնները՝ իրենց տարբեր ձևերով՝ **գալ - եկավ - գալու է - չեկավ, տալ - տալիս եմ - տվել եմ - տալու եմ, անել - անում եմ - արեցի - անելու եմ** և այլն, և, անշուշտ, օժանդակ բայի ներկայի ձևերը՝ **եմ, ես, է**, ինչպես նաև հայերենի որոշյալ հոդերը՝ **ը** և **ն**՝ բացատրելով, որ **ը**-ն ստանում են բաղաձայնով վերջացող, իսկ **ն**-ն՝ ձայնավորով վերջացող բառերը.

*Մոնան եկավ: Երեխան եկավ: Աննան եկավ: Գարունը եկավ:
Արամը գնաց: Քույրը գնաց: Հայրը գնաց: Մայրը գնաց:*

Հատուկ ուշադրություն է դարձվում հնչյունական - արտասանական դժվարություններ պարունակող **հաց, ջուր, քիչ, մեծ, ծառ, փոքր, ռուս** և այլն, **սպ** (սպասել, սպիտակ), **ստ** (ստանալ, ստույգ), **սկ** (սկսել, սկյուռ), **զգ** (զգալ, զգույշ), **զբ** (զբաղվել, զբոսնել) և նման տառակապակցություններով սկսվող, ինչպես նաև պատկերային նմանություններ ունեցող **մնալ, նման** և այլ բառերին, քանի որ բառերի ուսուցանվող խմբում դրանց քանակը մեծ [3] է:

Բառապաշարի ամենահաճախական ու կիրառելի բառերից են, ինչպես վերը նշեցինք, դերանունները. հենց դրանցից էլ սկսում ենք ուսուցումը, որոնց հետ, միաժամանակ, հայերենի օժանդակ բայի ներկայի արդեն բերված՝ **եմ, ես, է** ձևերը և **ու / և** շաղկապները՝

ա) դիմավոր (անձնական)՝ **ես, դու, նա**

ես ու դու

ես ու նա

դու և նա

Սովորեցնում ենք ամենապարզ նախադասությունները՝

Ես դասափոս եմ: Դու ուսանող ես:

Նա աշակերտ է: Դու ուսուցիչ ես:

Ես աղջիկ եմ: Դու տղա ես:

Ես կարդում եմ: Դու լսում ես:

բ) ցուցական՝ **այս (սա), այդ (դա), այն (նա)**

այս սեղանը

այդ բաժակը

այն գիրքը

սա ու դա

աա և նա

Կազմում ենք նախադասություններ՝

Մա գրիչ է: Դա մատիտ է:

Այդ գրիչը կապույտ է: Այս մատիտը սև է:

Մա սեղան է: Դա պօռո է:

Այս սեղանը մեծ է: Այն պօռոնը հին է:

զ) հարցական՝ **ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ**

Ես որտե՞ղ եմ:

Դու ո՞վ ես:

Նա որտե՞ղ է:

Մա ի՞նչ է:

Սովորում ենք այս հարցերի պատասխանները՝ ընդգրկելով առաջին անհրաժեշտության և մեզ շրջապատող առարկաների անվանումները.

Մա ի՞նչ է - Մա պայուսակ է: Մա հեռախոս է: Մա նստարան է: Մա դուռ է:

Մա պահարան է:

Դու ո՞վ ես - Ես Արամն եմ: Ես Աշխենն եմ: Ես Սոնան եմ: Ես Սուրենն եմ:

Նախադասությունները փոքր-ինչ բազմազան ու բազմանդամ դարձնելու նպատակով շոշափում ենք որոշ քերականական հարցեր. այսպես, **ու՞ր** և **որտե՞ղ** հարցական դերանունների կիրառումները սերտելիս (Նա որտե՞ղ է - Նա լսարանում է: Նա սենյակում է: Նա Մոսկվայում է): Բացատրում ենք հայերենի ներգոյական՝ տեղ ցույց տվող հոլովը՝ ավելացնելով **մեջ, վրա, տակ**՝ ամենագործածական կապերով ձևերը, ինչպես նաև **-ում** և **-ին** ձևերով բառերը, որոնք այլ լեզուներում ևս գործառնվում են (ռուսերենում և անգլերենում՝ մասնավորապես **в - на, on - in**)՝

Սոնան որտե՞ղ է - Սոնան լսարանում է, Սոնան Հայաստանում է, Սոնան փողոցում է:

Արամը ու՞ր գնաց - Արամը տուն գնաց: Արամը դպրոց գնաց: Արամը հյուր գնաց:

Աշխենը ե՞րբ եկավ - Աշխենը երեկոյան եկավ: Աշխենը հենց նոր եկավ:

Որտե՞ղ է հեռախոսը - Հեռախոսը դարակում է, Հեռախոսը պայուսակում է: Հեռախոսը գրպանում է: Ինչպես նաև այդ պատասխանների զուգահեռ ձևերը.

Հեռախոսը դարակում է: = Հեռախոսը դարակի մեջ է:

Պայուսակը սեղանին է: = Պայուսակը սեղանի վրա է:

Տետրը պայուսակում է: = Տետրը պայուսակի մեջ է:

Նկարը պատին է: = Նկարը պատի վրա է:

Ուսուցանվող բառերի հաջորդ խումբը թիվ, քանակ ցույց տվող մի շարք բառեր են՝ 1 - 10 թվականները՝ իրենց երկու ձևերով՝

մեկ - առաջին, երկու - երկրորդ, երեք - երրորդ, չորս - չորրորդ, հինգ - հինգերորդ, վեց - վեցերորդ, յոթ - յոթերորդ, ութ - ութերորդ, ինը - իններորդ, տասը - տասներորդ., օրինակ

մեկ տուն, առաջին տունը,

չորս սենյակ, չորրորդ սենյակը,

վեց լսարան, վեցերորդ լսարանը,

հինգ երեխա, հինգերորդ երեխան:

Այդ թվականներով ևս պարզ նախադասություններ ենք կազմում՝

Ես ունեմ երկու գրիչ:

Աննան սովորում է չորրորդ կուրսում:

Նա ունի հինգ տետր:

Աշոտը չորս գիրք ունի:

Ես մեկ հեռախոս ունեմ:

Այս շենքը հինգ հարկ ունի:

Հատկանիշ արտահայտող պարզագույն (համագործածական) մի շարք բառեր հեշտ է սովորել հենց այս մասում՝ **կարմիր, կապույտ, սպիտակ, սև, կանաչ, շատ, քիչ, լավ, վատ, մեծ, փոքր, սուր, երկար, կարճ, լայն, նեղ, բարձր, բարի, չար, հին, նոր.**

սուր մատիտ, երկար մատիտ, հինգ մատիտ, կանաչ մատիտ,

շատ խոսել, երկար խոսել, քիչ խոսել, վատ խոսել,

փոքր երեխա, լավ երեխա, չար երեխա, չորրորդ երեխան,

մեծ դասարան, փոքր դասարան, լավ դասարան,

երկար փողոց, լայն փողոց, կարճ փողոց, նեղ փողոց,

մեծ շենք, բարձր շենք, հին շենք, նոր շենք, վեցերորդ շենքը,

մեծ տուն, վատ տուն, երկու տուն, առաջին տունը:

Մրանց օգնությամբ կազմում ենք նախադասություններ՝ [4]

Արամը այսօր շատ խոսեց: Նա սիրում է երկար խոսել:

Սուրենը փոքր է: Նա սովորում է առաջին դասարանում:

Աննան ռուսերեն վատ է խոսում: Ես ռուսերեն լավ եմ խոսում:

Այս փողոցում է երկու հին շենք կա: Ես սպրում եմ այդ հին շենքի հինգերորդ հարկում:

Այն բարձր տունը նոր է: Այն տասը հարկ ունի:

Արդեն յուրացրած (սերսած) բառերին կարելի է ավելացնել շաբաթվա օրերի՝ **երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի,** անվանումները բառաշղթայի մեջ՝

երկուշաբթին շաբաթվա առաջին օրն է, երեքշաբթին երկրորդ օրն է, չորեքշաբթին երրորդ, հինգշաբթին՝ չորրորդ, ուրբաթը՝ հինգերորդ, շաբաթը՝ վեցերորդ և կիրակին՝ յոթերորդ:

Տարվա եղանակներն անվանող բառերն են՝ **գարուն, ամառ, աշուն, ձմեռ,** իսկ ամիսների անվանումներն են՝ **հունվար, փետրվար, մարտ,**

սայրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր. սրանց ավելացնում ենք նաև ժամանակ ցույց տվող հետևյալ բառերը՝ առավոտ, կեսօր, ցերեկ, գիշեր, ժամ, բուք, վայրկյան, տարի, օր, հիմա, այժմ, հետո, ուշ, շուտ և այլն, ու բացատրում դրանց սեռական հոլովի ձևերը՝ գարնան, ամռան, աշնան, ձմռան, տարվա, օրվա, առավոտվա, գիշերվա, ցերեկվա, կեսօրվա (կեսօրի) և մյուս կազմությունները: Օրինակներ

*այս տարի, անցյալ տարի, ամբողջ տարի
այս շաբաթ, ամեն շաբաթ, ամբողջ շաբաթ
այս առավոտ, ամեն առավոտ, ամբողջ առավոտ
այս ամառ, անցյալ ամառ, ամեն ամառ, ամբողջ ամառ:*

Պարզ նախադասություններ են կազմում ժամանակ ցույց տվող բառերով՝

Անցյալ օրը կինո գնացի: Երկուշաբթի օրը կինո գնացի:

Արևը ամբողջ օրը կարդում է: Արևը ամբողջ օրը թերթ է կարդում:

Ամեն շաբաթ Աշխենը թատրոն է գնում: Թատրոնը երկրորդ հարկում է:

Այս պահին ես գիրք եմ կարդում: Հիմա ես գիրք եմ կարդում:

Յուրացրած նյութը թույլ է տալիս կազմել ավելի ընդարձակ նախադասություններ.

Դեկտեմբերը, հունվարը, փետրվարը ձմռան ամիսներն են: Դեկտեմբերի 31 - ին տոնում ենք Նոր տարին:

Մարտը, սայրիլը, մայիսը գարնան ամիսներն են: Մարտի ութին նշում ենք կանանց տոնը: Մայիսին բացվում է վարդը:

Հունիսը, հուլիսը, օգոստոսը ամռան ամիսներն են: Այս ժամանակ հասնում են մրգերը՝ խնձորը, խաղողը, ծիրանը:

Սեպտեմբերը, հոկտեմբերը, նոյեմբերը աշնան ամիսներն են:

Սեպտեմբերի մեկին աշակերտները գնում են դպրոց: Սկսվում է նոր ուսումնական տարին:

Բառապաշարի անհրաժեշտ մասն են կազմում աննդի որոշ անվանումները՝ **հաց, ջուր, պանիր, ձու, կաթ, մածուկ**. մրգերից՝ **տանձ, խնձոր, խաղող, ծիրան, սալոր** և այլն,

մարմնի մասեր անվանող՝ **մատ, ձեռք, ոտք, աչք, ականջ, գլուխ, քիթ, բերան**, ազգակցական կապեր արտահայտող՝ **հայր, մայր, քույր, եղբայր, տատիկ, պապիկ, քեռի, մորաքույր**,

կենդանիների անվանումներից՝ **շուն, կատու, հավ, աղվես, արջ, նապաստակ** բառերը: Անշուշտ, բառերի մեր ցանկը պարբերաբար համալրում ենք բայերով՝ արդյունքում ունենալով այսպիսի խումբ՝ **գրել, կարդալ, սովորել, գնալ, գալ, ուտել, խմել, սիրել, սկսել, խոսել, լսել,**

երգել, պարել, քնել, արթնանալ, բացել, փակել, նայել, տեսնել, մեկնել և այլն:

Ի մի բերելով նյութը՝ կարող են նշել յուրացրած բառերի հետևյալ խմբերը՝

1. մարդանց հատուկ ու հասարակ անուններ, առարկաների անվանումներ

Արամ, Աշոտ, Աշխեն, Սուրեն, Սոնա, աշակերտ, դասարան, ուսանող, լսարան, ուսուցիչ, դասափոս, մատիտ, գրիչ, տետր, նկար, պայուսակ, սեղան, դարակ, պահպան, պտոռ, տուն, շենք, փողոց, պատուհան, լուսանուտ, հեռախոս, կինո, թատրոն, քաղաք, գյուղ, խանութ և այլն,

2. Բայեր ու բայաձևեր (ընդգրկելով որոշ անկանոն բայեր)

գրել, կարդալ, սովորել, խնդրել, գնալ, գնել, գալ, ուտել, խմել, սիրել, սկսել, խոսել, լսել, երգել, պարել, քնել, արթնանալ, բացել, փակել, մեկնել, գալ - եկալ - գալու է - չեկալ,

տալ - տայիս եմ - տվել եմ - տալու եմ,

անել - անում եմ - արեցի - անելու եմ,

ուտել - ուտում եմ - կերա - ուտելու եմ:

3. Ժամանակի իմաստ արտահայտող (տարի, ամիս, շաբաթ և այլն) բառեր ու բառաձևեր

գարուն, ամառ, աշուն, ձմեռ,

հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր,

երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի, առափոտ, կեսօր, ցերեկ, գիշեր,

ժամ, րոպե, վայրկյան, տարի, օր,

հինա, այժմ, հետո, ուշ, շուտ,

գարնան, ամռան, աշնան, ձմռան, տարվա, օրվա, առափոտվա, գիշերվա, ցերեկվա, կեսօրվա (կեսօրի):

4. համագործածական բառապաշարից՝ [5]

ա) **ուտելիք**

հաց, ջուր, պանիր, ձու, կաթ, մածուն մրգերից՝ տանձ, խնձոր, խաղող, ծիրան, սալոր և այլն,

բ) **մարմնի մասեր անվանող՝** *գլուխ, դեմք, աչք, ականջ, քիթ, բերան, ձեռք, ոտք, մատ, մեզ և այլն,*

գ) **ազգակցական կապեր արտահայտող՝** *հայր, մայր, երեխա, քույր, եղբայր, տատիկ, պապիկ, քեռի, մորաքույր, հորեղբայր, հորաքույր և այլն,*

դ) **կենդանիների անվանումներից՝** *շուն, կատու, հալ, կով, գայլ, գառ, աղվես, արջ, նապաստակ և յալն,*

5. հատկանիշ արտահայտող պարզագույն մի քանի բառեր՝

կարմիր, կապույտ, սպիտակ, սև, կանաչ, շատ, քիչ, լավ, վատ, մեծ, փոքր, սուր, երկար, կարճ, լայն, նեղ, բարձր, բարի, չար, հին, նոր:

6. թվականներ

մեկ - առաջին, երկու - երկրորդ, երեք - երրորդ, չորս - չորրորդ, հինգ - հինգերորդ, վեց - վեցերորդ, յոթ - յոթերորդ, ութ - ութերորդ, ինը - իններորդ, տասը - տասներորդ:

Սա է փաստորեն բառապաշարի անհրաժեշտ այն նվազագույն քանակը, որը ձևավորվել է տարիներ շարունակ օտարերկրացիներին (գերմանացիներ, ռուսներ, ուկրաինացիներ, էստոնացիներ և այլն), այլև օտարալեզու մեր հայրենակիցներին (հիմնականում՝ ռուսախոս փախստականներ՝ բժիշկներ, սնտեսագետներ, մանկավարժներ, ինժեներներ, գիտնականներ) հայերենը դասավանդելու փորձի արդյունքում:

Բառապաշարի նույն քանակով, համոզված ենք, կարելի է հայերենի ուսուցումն սկսել մեր բուհերի օտարերկրյա ուսանողների հետ. վերջիններս ինչպես մերձավոր ու հեռավոր Սփյուռքից ժամանած մեր հայրենակիցներն են, որոնք հայերենն սկսել են սովորել այդ հասակում և որոնց համար հայերենը օտար լեզու է, և որոնք ուսումը շարունակելու են հայերենով, այնպես էլ ոչ հայերի համար, որոնք Հայաստանի Հանրապետությունում պատրաստվում են մասնագիտություն և մասնագիտացում ձեռք բերել (մասնավորապես՝ ճարտարապետները, բժիշկները, լեզուներ ուսումնասիրողները):

Բառապաշարի ուսուցմանը մեծապես նպաստում են օժանդակ, լրացուցիչ նյութերի, օրինակ՝ բնանկարների, գեղանկարների, վերը թվարկած իմաստային խմբերն արտացոլող այլ նկարների ընդգրկումը՝ դիտելու և տպավորությունները սեփական, յուրացրած բառապաշարով նկարագրելու, ինչպես նաև ամբողջ խմբով քննարկելու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զ. Նազիկյան, Լ. Հովսեփյան, Ս. Ստեփանյան, Գերմաներեն-հայերեն-ռուսերեն զրուցագիրք, Լեզու Պլյուս, Եր., 2003, 423 էջ:
2. Ա. Պետրով, Անգլերենի 1000 ամենամանհրաժեշտ բառերը, Արեգ, Եր., 2007, էջ 5-8:
3. Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, դասագիրք հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի համար, Փյունիկ Մակմիլան, Եր., 1997, էջ 4:
4. Դորա Սաքայան, Արևելահայերենը անգլիախոս աշխարհի համար (գուգադրական մոտեցմամբ), ԵՊՀ հրատ., Եր., 2007, էջ 12-13:

5. Ֆ. խլիպոյան, Ժամանակակից հայոց լեզու, Մաս Ա, Ջանգակ, Եր., 2009, էջ 177-178:
6. Ս. Գալստյան, Գ. Գարեգինյան, Հայերենի գրուցարան, Եր., 1990, էջ 4-7:

РЕЗЮМЕ
ОБУЧЕНИЕ СЛОВАРНОГО СОСТАВА АРМЯНСКОГО ЯЗЫКА
ИНОСТРАНЦАМ
С. К. ТИОЯН

В статье представлен способ обучения словарного состава армянского языка, который основан на методе "небольшое количество, но основательное обучение". Это наиболее употребительные слова и их наиболее распространенные значения. Принято во внимание как частиречная принадлежность слова, так и его принадлежность к различным семантическим группам.

SUMMARY
TEACHING OF THE VOCABULARY OF THE ARMENIAN LANGUAGE
TO THE FOREIGNS
S.K. TIOYAN

The article presents a mode of teaching of the vocabulary of the Armenian, which is based on the method - a small number, but good teaching. These words are the most usable ones of the Armenian language with their common and the most spread meanings. The parts of speech of these words and meanings belonging to different semantic groups are taken into account.

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 2 (19) 2013 Гуманитарные науки

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂԻՆԱԿ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ԳՐՔԱՅԻՆ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ**

Ն. Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

Հայ գրքարվեստն ունի դարերի պատմություն: Ցավոք, մեզ չեն հասել նախամաշտոցյան օրինակներ, որոնք, ամենայն հավանականությամբ, ոչնչացվել են քրիստոնեության ընդունման ընթացքում: Սակայն, բարեբախտաբար, միջնադարից պահպանվել են տասնյակ հազարավոր ձեռագիր մատյաններ, որոնք հնարավորություն են ստեղծում դրանք ուսումնասիրելու զարգացման ընթացքում՝ առանձնացնելով ժամանակաշրջանին և տարբեր դպրոցներին հատուկ կոնցեպցիաները:

Դեռևս վաղ միջնադարում ձևավորվել են ձեռագիր գրքի պատկերագրուման արխիտեկտոնիկ և սեմանտիկ սկզբունքները, որոնք գրեթե անփոփոխ պահպանվել են ողջ միջնադարի ընթացքում: Այս սկզբունքներն առավել ակնառու են կրոնական գրքերի և, հատկապես, ավետարանների ձևավորման մեջ:

Հայկական միջնադարյան գրքարվեստը բացառիկ տեղ է գրավում համաշխարհային մշակույթի պատմության մեջ և շատ պարագաներում ունի կազմավորիչ նշանակություն:

Հայկական, ինչպես ողջ արևելաքրիստոնեական աշխարհում, շատ կարևոր տեղ է գրավում պատկերագրական կանոնը, որն էլ հիմնականում պայմանավորում է այդ շրջանի կրոնական արվեստի, մասնավորապես՝ նկարչության, ոճական ինքնատիպությունն ու յուրօրինակությունը: Կանոնի առաջացումը բարդ ու երկարատև գործընթաց է: Դարերի ընթացքում գեղարվեստական բազմաթիվ տարբերակներից ընտրվում էին առավել նշանակալից, արտահայտիչ և տարողունակ օրինակները՝ հիմնվելով թե՛ գեղարվեստական, թե՛ կրոնա-խորհրդանշական և թե՛ ծիսական-կենցաղային փորձի, ավանդույթների ու գաղափարախոսության վրա:

Այստեղ կարևոր է այն փաստը, որ արևելաքրիստոնեական արվեստն ընդհանրապես իր առջև ինդիր էր դնում ոչ թե ճանաչելու իրականությունը, այլ որոնելու կոնկրետ զգայականը, այսինքն՝ աշխարհի գեղարվեստական նմանօրինակը:

Այդ է պատճառը, որ կանոնի մշակման ընթացքում առաջ են գալիս մանրամասների որոշակի համակարգեր, տարրեր, որոնցից ժամանակի ընթացքում կազմավորվում են սխեմաներ: Այդպիսի տարրերի թվին են դասվում կերպարների տիպերը, դիրքերը, ժեստերը, թեքվածքները, ճարտարապետության, կահույքի, բնապատկերի մանրամասները, գծերը, գույները, արձանագրությունները: Մշակվում է արտահայտման և ընկալման մի պայմանական համակարգ, որը ժամանակի ընթացքում ստանում է արխետիպի նշանակություն՝ ձեռագիր մատյաններից անցնելով տպագիր գրքին:

Գրքի պատկերագրման այս ընդհանուր միտումը, պահպանելով արխետիպային նշանակությունը, բայց կրելով որոշակի ժամանակային վերափոխումներ, ակնառու է նաև Վադինակ Մանդակունու /1929-1990/ ստեղծագործության մեջ:

Նկարիչը գեղարվեստական ասպարեզ է մտել քսաներորդ դարի 50-ական թվականներին: Աշխատելով գրաֆիկայի և գեղանկարչության տարբեր ասպարեզներում, նա առավել ուշադրություն է դարձրել գրքային գրաֆիկային: 1959-1987 թվականների ընթացքում Վ.Մանդակունին ձևավորել է հայ հեղինակների հարյուրից ավելի մանկապատանեկան գրքեր¹, անդրադարձել համաշխարհային գրականությանը:

Մանդակունին ձևավորել է նաև հայ միջնադարյան և դասական գրականության հրատարակությունները: Այս ձևավորումներում առավելապես կարևոր տեղ են գրավում միջնադարյան մանրանկարչության մոտիվները: Ընդ որում, նկարիչը հիմք է ընդունում գրքի, որպես ամբողջական երևույթի գաղափարը: Այս միտումը երևում է բազմաթիվ գրքերում, սակայն հոդվածում մենք կանդրադառնանք միայն մի քանիսին. Վ. Այգեկցի, «Աղվեսագիրք» [7], Հ. Թումանյան, «Քառյակներ և բալլադներ» [2], Լ. Դուրյան, «Մաշտոց» [1]:

¹ տվյալները վերցված են Խնկո Ապոբ անվան մանկական գրադարանի հրատարակած «Հայ մանկական գրականության մատենագիտություն» եռահատոր աշխատությունից. առաջին հատորն ընդգրկում է 1946-1972թթ., երկրորդը՝ 1973-1982թթ., երրորդը՝ 1983-1987թթ.:

Այս պատկերագարդումներում, ինչպես և Մանդակունու ողջ ստեղծագործության վրա, ակնհայտ է նաև հայ ժամանակակից գրքային գրաֆիկայի հիմնադիր Հակոբ Կոչոյանի ազդեցությունը: Այս միտումը հատկապես զգացվում է պատկերների կոնցեպցիոն լուծումների մեջ: Ակնհայտ է, որ Կոչոյանը նույնպես մեծ նշանակություն էր տալիս հայ միջնադարյան մանրանկարչության ավանդույթներին² [4,8]:

Մանդակունու պատկերագարդումները ձեռագիր գրքերի հետ առնչվում են թե՛ կառուցվածքային ամբողջության ու բաղկացուցիչ մասերի կապի, թե՛ կերպարների, իրերի ու երևույթների կերպավորման, թե՛ պատկերի ու գրության հարաբերման առումով: Ինչպես մանրանկարիչները, այնպես էլ Մանդակունին, կարևոր նշանակություն են տալիս պատկերի սեմանտիկ շերտերին: Խորապես ներթափանցելով գրողի աշխարհայացքի և գաղափարի մեջ, նկարիչը գնահատում է ստեղծագործությունը ժամանակակցի տեսանկյունից: Գրքի զարդանկարչական հարդարանքը ստեղծելիս Վ.Մանդակունին ձգտում է վեր հանել գրական ստեղծագործության կառուցվածքի արխիտեկտոնիկան /բաժանումը մասերի, գլուխների և այլն/: Այդ է պատճառը, որ նա անդրադառնում էր զարդամոտիվներին: Զարդը, դրա տեղադրումը, ոճական առանձնահատկությունները նկարիչն օգտագործում է այն նկատառումով, որ ընթերցողին տեղափոխի տվյալ ժամանակաշրջան: Այս նպատակով նկարիչն ուսումնասիրում է ժամանակի կենցաղը, արվեստի ոճը, մարդկային տիպերը, միջավայրը, հագուստը, զարդերը և տառատեսակները:

Միջնադարյան խորանաձևերն օգտագործելիս, նկարիչը դրանց մոտենում է ստեղծագործաբար, երբեմն՝ ոճավորելով, երբեմն էլ՝ գծանկարի սկզբունքով: Միջնադարում խորանները կարելի է նույնացնել բովանդակության հետ: Խորաններն անվանում են նաև համեմատության տախտակներ, քանի որ նշում են, թե չորս ավետարաններից յուրաքանչյուրի որ դրվագում է խոսվում նույն թեմայի մասին: Խորանագարդերը երկու կամ երեք սյուների վրա տեղադրված, հիմնականում քառանկյունի /երբեմն՝ կամարածև/ զարդեր են՝ բուսական, կենդանական և երկրաչափական մոտիվներով: Այս տարրերից յուրաքանչյուրը,

² Տես՝ Մաթևոսյան Վ., „Հակոբ Կոչոյան” Երևան, 1983, Зурабов Б., “Советская армянская книжная графика 1930-х годов” /автореферат/, 1984.

բացի գեղագիտականից, ունի նաև խորհրդանշական իմաստ³ [5], [6]: Մանդակունին որպես հիմք օգտագործում է խորանների վերին հատվածը, այն դիտարկելով որպես գլխազարդ:

Վերաիմաստավորման նույն միտումն է զգացվում նաև գլխատառերի ձևավորումներում: Նշենք, որ 1963թ. լույս է տեսնում Կարո Տիրատուրյանի «Հայոց գիրը. գեղարվեստական տառաձևեր» գիրքը, որտեղ տեղ են գտել ավելի քան 400 ինչպես ամբողջական տառատեսակներ, այնպես էլ առանձին տառանմուշներ: Մանդակունին իր պատկերազարդումներում օգտվում է Տիրատուրյանի որոնումների արդյունքներից՝ ստեղծագործաբար մոտենալով դրանց:

Թումանյանի «Քառյակներն ու բալլադները» [2] ձևավորելիս հեղինակը հիմնվում է կիլիկյան մանրանկարչության դպրոցի լուսանցազարդերի վրա՝ դրանց մոտիվներն օգտագործելով ինչպես լուսանցքներում, քառյակներն իրարից առանձնացնող տարածություններում, այնպես էլ որպես վերջնազարդ և առանձին էջային պատկեր: Կիրառելով դասական միջնադարյան գույները, նա, սակայն, պարզեցնում է դրանք՝ պակասեցնելով երանգապնակը: Այս աշխատանքներում առաջնայինը դառնում է գիծը, իսկ գույնը ստանում է օժանդակ բնույթ, պահպանելով սակայն խորհրդանշական համակարգը:

Եթե մենք դիտարկենք այս զարդերը պատկերազարդության կոնտեքստում, ապա կնկատենք, որ զարդերի սեմանտիկան գնում է դեպի միջնադարյան մեկնություններ, որոնցում յուրաքանչյուր բույս կամ կենդանի ունի իր ծիսական և խորհրդանշական բովանդակությունը: Հայկական արվեստի հիմնական մոտիվների ծագումն ու ձևավորումը կապված են վաղնջենական ժամանակների հետ: Այստեղ իշխում են կենդանական, երկրաչափական, բուսական, ինչպես նաև օժանդակ մոտիվները (երկնային մարմիններ, ճարտարապետական կառույցներ և այլն), որոնք կազմում են հին արևելքի ժողովուրդների, այդ թվում նաև հայերի, զարդարվեստային մշակույթի տարերքը: Քրիստոնեությունը, որը սկզբից պայքարում էր հեթանոսական ժամանակների ըմբռնումների և նրանց հետ առնչվող մշակութային ժառանգության դեմ, հետագայում աստիճանաբար սկսեց օգտվել հին զարդարվեստից⁴ [3]:

³ Տես՝ Ներսես Շնորհալի, Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի, Կ/Պովիս, 1825, էջ 5-12, Ստեփանոս Սյունեցի, Մեկնություն խորանաց, հրատարակված՝ „Թորոս Աղբար” գրքում, մաս Ա, էջ 192:

⁴ „Հայ ձեռագրային զարդանկարչություն”, Երևան, 1978, էջ 6:

Մանդակունու ստեղծագործության մեջ էական է նաև զարդանախշի տեղադրման կոնցեպցիոն մոտեցումը: Նկարիչը միջնադարյան ծաղկողների պես գերադասում է ուղղահայաց տեղադրումը, ինչը նշանավորում է զարգացում և ձգտում դեպի երկինք: Մանրանկարներում այն նշանավորում էր նաև երկրային և երկնային, այսինքն Բարձրագույն և կատարյալ աշխարհների միավորումը: Լուսանցային զարդերը նաև ամփոփում են հորինվածքը, կատարելով շրջանակի դեր:

Որպես զարդեր իր պատկերագարումներում Մանդակունին օգտագործում է միջնադարյան կերպարվեստին բնորոշ կենդանիների և բույսերի ոճավորված կերպարները: Այս միտումն առավել չափով զգացվում է Վարդան Այգեկցու առակների ձևավորման մեջ: Ընդ որում նա ընտրում է տվյալ առակում որպես գործող անձ հանդես եկող կենդանիների: Օրինակ՝ «Գարու հաշիվը» [7] առակի ձևավորման մեջ օգտագործել է ավանակների, «Եզն ու ձին» [7] առակի դեպքում՝ վերոհիշյալ կենդանիների ոճավորում և այլն⁵: Կենդանիները սովորաբար ամփոփված են բուսական կամ երկրաչափական ձևավոր շրջանակների մեջ: Նկարիչը հաճախ է դիմում նաև մի դրվագի մեջ երկու նույն կամ տարբեր կենդանիների պատկերմանը, որոնք կարող են տեղադրվել կամ սիմետրիկ կերպով [7, Էջ 8, 28], կամ էլ բարդ կոմպոզիցիոն կառուցվածքով, որը նույնպես բնորոշ է հայ միջնադարյան արվեստին /օրինակ՝ արծիվը ճանկերով և կտուցով բռնում է թռչունին/ [7, Էջ 70]:

Նկարիչը հաճախ է դիմում նաև արեգակի կամ հավերժության խորհրդանշական պատկերներին, որոնք հանդիպում են ինչպես մանրանկարչության, այնպես էլ քանդակագործության, մասնավորապես խաչքարերի զարդամոտիվներում: Այս մոտիվն է որպես հիմք օգտագործվում շապիկի զարդի մեջ:

Մանդակունին երբեմն իր զարդամոտիվների մեջ ներմուծում է նաև մարդկային կերպարներ: Օրինակ՝ «Աղվես և որսորդ» [7] առակի ձևավորման մեջ մինչև գոտկատեղը պատկերված նետաձիգը նկարված է ոճավորված, միջնադարյան մանրանկարչության մեջ հանդիպող կերպարներին բնորոշ հագուստներով և բարձր գլխարկով /գուգահեռներ են նկատվում «Հաղպատի ավետարանի» մանրանկարների հետ/:

⁵ Նշենք, որ գիրքը երկլեզու է՝ հայերեն և ռուսերեն, տարբերակները տպագրված են նույն բացվածքի տարբեր էջերի վրա, և նույն առակի ձևավորումները չեն կրկնվում:

Միջնադարյան ձեռագրերին առավել նմանություն հաղորդելու համար նկարիչն ընտրել է նաև համապատասխան տառատեսակներ, որոնք հիշեցնում են կլիկյան մատյաններում օգտագործվող բոլորագիրը: Արժե նշել, որ ռուսերեն տառատեսակները նույնպես իրենց կառուցվածքով մոտեցվել են այս ոճին, այսինքն պահպանվել են հայկականին բնորոշ հորիզոնական և ուղղահայաց տարրերի համաչափությունները, ինչպես նաև եռաշերտ կառուցվածքը:

Մի փոքր այլ սկզբունքով է նկարագարված Լ.Դուրյանի «Մաշտոց» [1] գիրքը: Այստեղ շապիկը լուծված է արևը կամ հավերժությունը խորհրդանշող հիմնական մոտիվով, որի կենտրոնում գրված է վերնագիրը: Օգտագործված են սահմանափակ քանակությամբ գույներ /շագանակագույն, դեղին, կապույտ, սև և սպիտակ/, ինչն ավելի է խստացնում ընդհանուր պատկերը: Սակայն, ի տարբերություն միջնադարյան ավանդական զարդանախշի, նկարիչը շապիկի ողջ տարածությունը լցնում է կիսաշրջանաձև, արևի ժամացույց հիշեցնող բազմաթիվ պատկերներով, որոնք արված են ճառագայթաձև գծերով և հիմնական զարդի համար կատարում են լրացնող դեր՝ ավելի շեշտելով այն: Հետաքրքիր է ֆորագցի լուծումը, որտեղ հեղինակը որպես հիմք դարձյալ օգտագործել է արևի ժամացույցի մոտիվը, սակայն կիսաշրջանը բաժանել է ոչ թե տասներկու, այլ երեսունվեց մասի՝ Մաշտոցի այբուբենի յուրաքանչյուր տառի համար առանձնացնելով մեկ մաս: Պատկերը շրջանակված է ականթագարդ գոտով և լրացվել է փոքր շրջանակներով: «Արևի ժամացույցի» և շրջանակի միջև ընկած տարածությունը լցված է շապիկի վրա պատկերված ճառագայթատիպ զարդերով [1]: Առհասարակ ֆորագցում գերիշխում է շրջանների և կիսաշրջանների մոտիվը, որն ստեղծում է խորության և եռաչափության պատրանք:

Եթե շապիկի ու ֆորագցի պատկերները ոճական առումով գրեթե կրկնում են միջնադարյան զարդերը, ապա բուն տեքստի նկարներն առանձնանում են բոլորովին նոր լուծումներով: Նախ նշենք, որ այս պատկերագարումներն արված են վառ, լոկալ գույներով: «Մաշտոցը» պոեմ է, որտեղ յուրաքանչյուր տառի համապատասխանում է մի գլուխ: Ողջ տեքստը շրջանակված է կարմիր քառանկյունիներով, որոնց անկյուններին ականթագարդ ուրվագծանախշեր են: Գլխի սկիզբը ձևավորված է որպես միջնադարյան խորան: Սակայն, եթե միջնադարում խորանները հիմնականում բուսական կամ աստղաբանական մոտիվներով էին

լուծվում, ապա այստեղ Մանդակունին տալիս է երկրաչափական լուծումներ՝ միավորելով մանրանկարչական ավանդույթները ավանգարդիստական մոտեցումների հետ: Այս սիմբիոզը ստեղծում է ժամանակների ընդհանրության մի արխետիպ, որը կարելի է դիտարկել սեմանտիկ տարբեր մակարդակներով՝ գունային սիմվոլիկ և ուրվագծային պատկերավոր: Այս պայմանական շրջանակի մեջ տեղադրված են գլխի համարը նշանավորող տառերը: Վերջիններս ամենայն հավանականությամբ վերցված են Կ.Տիրատուրյանի տառաձևերից:

Հետաքրքիր լուծում ունեն նաև վերջնագարդերը, որոնք կառուցված են շրջանաձև կենտրոնամետ կամ կենտրոնախույս սկզբունքով: Ուրվագծային խորքի վրա ներգծված են պարզ երկրաչափական կամ բուսական տարրեր, որոնք հավասարակշռում և ամփոփում են զարդամոտիվի հորինվածքը: Այս միտումը նկատվում է Մանդակունու մի շարք այլ գործերում ևս:

Մանդակունու ձևավորումները հետաքրքրական են, և, կարծում ենք, լուրջ ուսումնասիրության կարիք ունեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դուրյան Լ., «Մաշտոց», «Սովետական գրող», Երևան, 1976, էջ 144:
2. Թումանյան Հ., «Քառյակներ և բալլադներ», «Լույս», Երևան, 1987, էջ 192:
3. «Հայ ձեռագրային զարդանկարչություն», «Սովետական գրող», Երևան, 1978, էջ 232:
4. Մաթևոսյան Վ., «Հակոբ Կոջոյան», «Սովետական գրող», Երևան, 1983, էջ 108:
5. Ներսէս Շնորհալի, «Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի», Կ.Պոլիս, 1825:
6. Սրվանձոյան Գ., «Թորոս Աղբար», մաս Ա, Կ.Պոլիս, 1879:
7. Վարդան Այգեկցի, «Աղվեսագիրք», «Սովետական գրող», Երևան, 1981, էջ 112:
8. Зурабов Б., «Советская армянская книжная графика 1930-х годов» /автореферат/, 1984:

РЕЗЮМЕ
ВЛИЯНИЕ АРМЯНСКОЙ КНИЖНОЙ МИНИАТЮРЫ
НА КНИЖНУЮ ГРАФИКУ В. МАНДАКУНИ
Н.А. МИНАСЯН

В творчестве художника-графика Вагинака Мандакуни /1929-1990/ основное место занимает книжная иллюстрация. В иллюстрациях он часто использует архитектуру средневековых рукописных книг. Эта тенденция более очевидна в книгах Ов.Туманяна /"Баллады и четверостишия"/, Вардана Айгекци /"Лисья книга"/ и Л.Дурьяна /"Маштоц"/. В.Мандакуни творчески подходит к средневековому наследию, пытаясь совместить иконографический канон и современное восприятие художественного произведения. Этот симбиоз создает некий архетип временного объединения, который можно рассматривать на разных семантических уровнях – цветовом, символическом, контурном, фигурном.

Вагинак Мандакуни иллюстрировал около двух сотен книг, и изучение его художественного наследия восполнит пробел в истории книжной иллюстрации второй половины 20-го века.

SUMMARY
THE INFLUENCE OF THE ARMENIAN BOOK MINIATURE ON
V.MANDAKUNI'S BOOK ILLUSTRATIONS
N.A. MINASYAN

Book illustrations have a significant place in Armenian artist Vaghinak Mandakuni's /1929 – 1990/ creative work. In his illustrations, he often uses the architecture of medieval Armenian manuscripts. This trend is more obvious in H. Tumanyan's /"Ballads and quatrains"/, Vardan Aygektsi's /"Fox Book"/ and L.Duryan's /"Mashtots"/. V.Mandakuni creatively approached to the medieval heritage, trying to combine the iconographic canon and the current perception of the artwork. This symbiosis creates an archetype, which can be observed at different semantic levels - color, symbolic, contour, figure.

Vaghinak Mandakuni illustrated about two hundred books, and a study of this artistic heritage will fill the gap in the history of book illustration of the second half of the 20th century.

СОДЕРЖАНИЕ

ПСИХОЛОГИЯ

<i>А. К. АРУТЮНЯН</i> ПСИХОЛОГИЧЕСКИЕ ЗАЩИТНЫЕ МЕХАНИЗМЫ В КОНТЕКСТЕ ТЕОРИЙ ЛИЧНОСТИ.....	5
<i>А.А. ГАМБАРЯН</i> ИЗМЕНЕНИЕ ЛИЧНОСТИ ПРИ ПОСТТРАВМАТИЧЕСКОМ СТРЕССОВОМ РАССТРОЙСТВЕ.....	14
<i>А. Л. ШАГИНЯН</i> СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ДЕТЕРМИНАНТЫ ВОЗНИКНОВЕНИЯ БУЛИМИЧЕСКОГО И АНОРЕКТИЧЕСКОГО ТИПОВ РАССТРОЙСТВ ПИЩЕВОГО ПОВЕДЕНИЯ.....	24
<i>Н. Е. СТЕПАНЯН</i> ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ И ПУТИ ПРЕОДОЛЕНИЯ ТРЕВОЖНОСТИ У ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА.....	31
<i>С. А. ВАРДАНЯН</i> ПРОФЕССИОНАЛЬНАЯ МАРГИНАЛЬНОСТЬ В УСЛОВИЯХ ИЗМЕНЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОГО СТАТУСА.....	37

ИСТОРИЯ

<i>С. А. ПОГОСЯН</i> РАЗВЕРТЫВАНИЕ АРМЯНСКОГО ЛЕГИОНА НА КИПРЕ.....	45
<i>Х. Р. СТЕПАНЯН</i> ПРОБЛЕМА НАЦИОНАЛЬНОГО ВОСПИТАНИЯ И СОХРАНЕНИЯ САМОВЫТНОСТИ В ТРУДАХ ГАРЕГИНА НЖДЕ.....	53
<i>А. С. ВИРАБЯН</i> ДЕЯТЕЛЬНОСТЬ АКОПА ДЖУГАЕЦИ.....	61

НАУЧНО-МЕТОДИЧЕСКАЯ

<i>Б.А.ХОДЕРЯН, А.Г.АРУТЮНЯН, Г.А.ТАБИРЯН, Т.В.ЕРЗНКЯН</i>	ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ТЕМЫ «ФИЗИКОМЕХАНИЧЕСКИЕ СВОЙСТВА ДРЕВЕСИНЫ».....	72
<i>Ж.В.САРКИСЯН</i>	РЕШЕНИЕ ЭКСПЕРИМЕНТАЛЬНЫХ ЗАДАЧ КАК СРЕДСТВО ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ПРЕПОДАВАНИЯ ХИМИИ	77
<i>А.С.ТАРОЯН</i>	ИЗМЕРЕНИЕ ВЫСОКИХ ТЕМПЕРАТУР ДВУМЯ МЕТОДАМИ.....	84
<i>С. К.ТИОЯН</i>	ОБУЧЕНИЕ СЛОВАРНОГО СОСТАВА АРМЯНСКОГО ЯЗЫКА ИНОСТРАНЦАМ.....	90

КУЛЬТУРОЛОГИЯ

<i>Н.А.МИНАСЯН</i>	ВЛИЯНИЕ АРМЯНСКОЙ КНИЖНОЙ МИНИАТЮРЫ НА КНИЖНУЮ ГРАФИКУ В. МАНДАКУНИ.....	98
--------------------	--	----

C O N T E N T S

PSYCHOLOGY

A. K. HARUTYUNYAN THE PSYCOLOGICAL DEFENSE MECHANISMS IN THE THEORETICAL CONTEXT OF THE INDIVIDUAL.....	5
A. A. GHAMBARYAN THE CHANGES OF THE PERSONALITY WITH THE POSTTRAUMATIC STRESS DISORDERS.....	14
H. L. SHAHINYAN THE SOCIO-PSYCHOLOGICAL DETERMINANTS OF BULIMIC AND ANOREXIC EATING DISORDERS.....	24
N. E. STEPANYAN THE PSYCHOLOGICAL CAUSES AND WAYS TO OVERCOME THE PROBLEM OF PRESCHOOL CHILDREN'S ANXIETY.....	31
S. H. VARDANYAN PROFESSIONAL MARGINALITY IN THE CONDITIONS OF PROFESSIONAL STATUS CHANGES.....	37

H I S T O R Y

S. A. POGHOSYAN THE DEPLOYMENT OF THE ARMENIAN LEGION IN CYPRUS.....	45
KH. R. STEPANYAN ISSUES OF ARMENIAN IDENTITY AND NATIONAL EDUCATION IN GAREGIN NZHDEH'S WORKS.....	53
A. S. VIRABYAN THE ACTIVITY OF HAKOP DJUGHAYETSI.....	61

S C H I E N T I F I C – M E T H O D I C A L

<i>B.A.KHODERYAN, A.H. HARUTYUNYAN, G.A.TABIRYAN, T.V.YERZNKYAN</i> PECULARITIES OF TEACHING THEME «PHYSICHOMECHANICAL QUALITIES OF THE WOOD».....	72
<i>J.V.SARKISYAN</i> SOLVING OF EXPERIMENTAL PROBLEMS AS MEANS TO IMPROVE THE TEACHING OF CHEMISTRY.....	77
<i>A.S.TAROYAN</i> THE TWO WAYS OF MEASUREMENTS HIGHER TEMPERATURES.....	84
<i>S.K.TIOYAN</i> TEACHING OF THE VOCABULARY OF THE ARMENIAN LANGUAGE TO THE FOREIGNS.....	90

CULTUROLOGY

<i>N.A. MINASYAN</i> THE INFLUENCE OF THE ARMENIAN BOOK MINIATURE ON V.MANDAKUNI'S BOOK ILLUSTRATIONS.....	98
--	----

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 2 (19) 2013 Гуманитарные науки

Հրատարակության էներկայացրել խմբագրական խորհուրդը

Հրատարակչական տեղեկատվական էջերի ձևավորումը՝

Տ. Ավագյան

Շապիկի ձևավորումը՝

Ա. Նադարյան

Ստորագրված է տպագրության 20.11.2013 թ.

Թուղթ՝ А4

Տպագրությունը՝ Ռիզոգրաֆ եղանակով

Տպագր. 7.25 հրատ. 6.8 մամուլ

Տպաքանակը՝ 150

Գինը՝ պայմանագրային

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Մանկավարժ հրատարակչություն:

Երևան, Կենտրոն, Տիգրան Մեծի 17: